


Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
Յ Ե Վ  
ՌԵՆԵԳԱՏ ԿԱՌԻՑԿԻՆ







ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՎ



Վ. Ի. ԼԵՆԻՆ



ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
Յ Ե Վ  
ՌԵՆԵԳԱՏ ԿԱՌԻՑԿԻՆ

A 38655  
20408



В. И. ЛЕНИН  
ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ  
И РЕНЕГАТ КАУТСКИЙ

Армпартиздат, Ереван, 1937

## ԱՌԱՋԱԲԱՆ

Կառուցիլու՝ նորերս Վիեննայում լույս տեսած՝ «Պրոլետարիատի դիկտատուրան» բրոշյուրը (Wien, 1918, Ignaz Brand, էջ 63) ներկայացնում է II Ինտերնացիոնալի այն ամենալիակատար և ամենախայտառակ սնանկության ամենաակնառու որինակը, Վորլի մասին վաղուց են խոսում բոլոր յերկիրների բոլոր աղնիվ սոցիալիստները: Պրոլետարական հեղափոխության հարցն այժմ գործնականորեն որակարգի մեջ է դրվում մի ամբողջ շարք պետութուններում: Ուստի անհրաժեշտ է քննության առնել Կառուցիլու սնանկատային սոփեստությունները և մարքսիզմից լիակատար կերպով հրաժարվելը:

Բայց նախ պետք է ընդգծել, Վոր այս սուղերը գրողը պատերազմի հենց սկզբից առիթ է ունեցել բաղմիցս մատնանշելու, թե Կառուցիլին խղել է իր կապերը մարքսիզմից: 1914—1916 թվականներին արտասահմանյան «Социал-Демократ»-ում և «Коммунист»-ում տպագրված մի շարք հոդվածներ նվիրված էյին դրան: Այդ հոդվածները ժողովված են Պետրոգրադի Խորհրդի հետևյալ հրատարակության մեջ. Г. Зиповьев и Н. Ленин: «Против течения», Петроград 1918 г. (550 էջ): 1915 թվականին ժընևում հրատարակված է հենց այն ժամանակ գերմաներեն ու ֆրանսերեն լեզուներով թարգմանված բրոշյուրում յես «կառուցիլիականության» մասին գրում էյի:

«Կառուցիլին, II Ինտերնացիոնալի ամենից մեծ հեղինակությունը, ներկայացնում է վերին աստիճանի տիպիկ և ցայտուն որինակն այն բանի, թե ինչպես խոսքով մարքսիզմն՝ ընդունելը իրականում հասցրեց մարքսիզմը «ստրուվիզմի» կամ «բրենտանիզմի» վերածելուն» (այսինքն մի լիբերալ-բուրժուական ուսմունքի, Վորն ընդունում է պրոլետարիատի վոչ-հեղափոխական «դասակարգային» կոիլը, և Վորն առանձնապես ցայտուն կերպով արտահայտել են ոուս գրող Ստրուվին և գերմանական տընտեսապետ Բրենտանոն): «Մենք այդ տեսնում ենք նաև Պլեխանովի որինակով: Ակներև սոփեստություններով մարքսիզմից

դուրս են հանում նրա հեղափոխական կենդանի հողին, մարք-սիզմի մեջ ընդունում են ամեն ինչ, բացի պայքարի հեղափոխական միջոցներից, նրանց քարոզից ու նախապատրաստումից, մասսաները հենց այդ ուղղութեամբ դաստիարակելուց: Վարկերը քվեարկելու ժամանակ ձեռնպահ մնալու, իր ուղղիցիոն լինելը խոսքով ընդունելու և այլն ձևով Կառուցկին դադարաբաղուրկ կերպով «հաշտեցնում է» սոցիալ-շովինիզմի հիմնական միտքը, հայրենիքի պաշտպանութեան ընդունումը տվյալ պատերազմում, ձախերին դիմանազրկական, առերևույթ կերպով արվող զիջման հետ: Այն Կառուցկին, վր 1909 թվականին մի ամբողջ դիրք է գրել հեղափոխութեանը դարաշրջանի մոտենալու մասին և հեղափոխութեան հետ պատերազմի ունեցած կապի մասին, — Կառուցկին, վր 1912 թվին ստորագրել է Բազելի մանիֆեստը դալքը պատերազմը հեղափոխականորեն ողտագործելու մասին, այժմ բոլոր յեղանակներով արդարացնում և դեղադարդում է սոցիալ-շովինիզմը և, Պլեխանովի նման, միանում է բուրժուազիային՝ ծաղրելու համար հեղափոխութեան վերաբերյալ ամեն մի միտք, անմիջական-հեղափոխական պայքարի ամեն մի քայլ:

Բանվոր դասակարգը չի կարող իրագործել իր համաշխարհային-հեղափոխական նպատակը, յեթե անխնա պատերազմ չմղի այդ ունեղատութեան, անհաստատակամութեան, ուղորտունիզմին սպասավորելու և մարքսիզմը թեորիապես անորինակ կերպով գոհհիացնելու դեմ: Կառուցկիականութեանը պատահականութեան չէ, այլ II Ինտերնացիոնալի հակասութեանների սոցիալական արդյունքը, մարքսիզմին խոսքով հալատարիմ մնալը և ուղորտունիզմին իրականում յենթարկվելը միացնելու արդյունքը» (Г. Зиновьев и Н. Ленин: «Социализм и война», Ժընևի, 1915, էջ 13—14)\*):

Այնուհետև: 1916 թ. դրած իմ գրքում՝ «Իմպերիալիզմը վրոպես կապիտալիզմի նորագույն ետապ» (լույս է տեսել Պետրոգրադում 1917 թվականին)\*\*), յես մանրամասնորեն քննել եմ Կառուցկիո՞ւ՝ իմպերիալիզմի վերաբերյալ բոլոր դասողութեանների թեորիական կեղծութեանը: Յես բերել եմ Կառուցկիո տված բնորոշումն իմպերիալիզմի մասին. «Իմպերիալիզմը բարձր դարդացած արդյունարերական կապիտալիզմի արդյունք է: Նա յուրա-

\*) Տե՛ս Յերկերի XVIII հ., էջ 185—223: Խմբ.:

\*\*) Տե՛ս Յերկերի XIX հ., էջ 67—175: Խմբ.:

քանչյուր արդյունաբերական կապիտալիստական ազգի ձգտումն է՝ իրեն միացնելու կամ յենթարկելու ավելի ու ավելի շատ ազգ-րարային (ընդդժուժը Կառուցկունն է) մարդեր, անկախ այն բանից, թե ինչ ազգեր են այնտեղ բնակվում»։ Յես ցույց եմ տվել այդ բնորոշման կատարելապես անճիշտ լինելը և իմպերիալիզմի ամենախորհակասութուններն սքողելու և ապա ոպորտունիզմի հետ հաշտվելու համար նրա «հարմարեցված լինելը»։ Յես բերել եմ իմպերիալիզմի իմ բնորոշումը. «Իմպերիալիզմը կապիտալիզմն է դարձացման այն ստադիայում, յերբ առաջ յեկալ մոնոպոլիաների և Ֆինանսական կապիտալի տիրապետութիւնը, աչքի ընկնող նշանակութուն ձեռք բերեց կապիտալի արտահանումը, սկսվեց աշխարհի բաժանումը միջազգային տրեստների կողմից և ավարտվեց յերկրագնդի ամբողջ տերիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական յերկիրների միջև»։ Յես ցույց եմ տվել, վոր Կառուցկու մոտ իմպերիալիզմի քննադատութիւնը նույնիսկ ավելի ցածր է կանգնած, քան թե իմպերիալիզմի բուրժուական, քաղքենիական քննադատութիւնը։

Վերջապես, 1917 թվականի ոգոստոսին ու սեպտեմբերին, այսինքն մինչև Ռուսաստանի պրոլետարական հեղափոխութիւնը (1917 թվականի հոկտեմբերի 25—նոյեմբերի 7-ը), յես գրել եմ «Պետութիւն և հեղափոխութիւն։ Մարքսիզմի ուսմունքը պետութիւն մասին և պրոլետարիատի խնդիրները հեղափոխութիւն մեջ»\*) բրոշյուրը, վոր լույս է տեսել Պետրոգրադում 1918 թվի սկզբներին, և այդտեղ, ՎՄ զլխում, «Մարքսիզմի գուհկացումն ոպորտունիստների կողմից», հատուկ ուշադրութիւն եմ նվիրել Կառուցկուն, ապացուցելով, վոր նա բոլորովին խեղաթյուրել է Մարքսի ուսմունքը, կեղծել է այդ ուսմունքն ոպորտունիզմի վրդով, իրականում հրաժարվել է հեղափոխութիւնից, խոսքով ընդունելով այն»։

Կառուցկու հիմնական թերիական սխալը, պրոլետարիատի գիկտատուրային նվիրված նրա բրոշյուրում, իսկապես ասած, պետութիւն վերաբերյալ Մարքսի ուսմունքի հենց այն ոպորտունիստական խեղաթյուրումներն են, վորոնք մանրամասնորեն մերկայցված են իմ «Պետութիւն և հեղափոխութիւն» բրոշյուրում։

\*) Տե՛ս Յերկերի XXI հատոր, էջ 365—455: Խմբ.:

Այս նախնական նկատողութիւններն անհրաժեշտ ելին, վորովհետեւ նրանք ազացուցում են, վոր Կառուցիկն իմ կողմից բացահայտ կերպով մեղադրվել և սենեգատութեան մեջ շատ ավելի առաջ, քան բոլշեիկները վերջրին պետական իշխանութիւնը և դրա համար դատապարտվեցին Կառուցիւ կողմից :

---

## ԹԵ ԻՆՉՊԵՏ ԿԱՌԻՑԿԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼ ԴԱՐՁՐԵՑ ՄԱՐՔՍԻՆ

Այն հիմնական հարցը, վոր շոշափում է Կառուցկին իբ բբո-  
շյուբում, պրոլետարական հեղափոխութեան արմատական բո-  
վանդակութեան հարցն է, այն է՝ պրոլետարիատի դիկտատու-  
րայի հարցը: Այդ մի հարց է, վոր կարևորագուցն նշանակու-  
թյուն ունի բոլոր յերկիրների համար, հատկապես առաջավոր-  
ների, հատկապես պատերազմող յերկիրների համար, առանձնա-  
պես ներկայումս: Առանց չափազանցութեան կարելի չէ ասել,  
վոր այդ—ամբողջ պրոլետարական դասակարգային կռիւի ամենա-  
բլխաւոր հարցն է: Ուստի անհրաժեշտ է նրա վրա ուշադիր  
կերպով կանդ առնել:

Կառուցկին հարցը դնում է այնպիսի ձևով, վոր «յերկու սո-  
ցիալիստական ուղղութեանների (այսինքն բոլշևիկների և վոչ  
բոլշևիկների) հակադրութեանը», այդ—«յերկու արմատապես  
տարբեր մեթոդները՝ դեմոկրատականի և դիկտատորականի—  
հակադրութեանն է» (Եջ 3):

Հարեանցի նկատենք, վոր Ռուսաստանի վոչ-բոլշևիկներին,  
այսինքն մենշևիկներին ու եսերներին սոցիալիստներ անվանե-  
լով՝ Կառուցկին ղեկավարւում է նրանց անունով, այսինքն բառով,  
և վոչ թէ այն իրական տեղով, վոր նրանք զրպւում են բուր-  
ժուալայի դեմ պրոլետարիատի կողմից մղւող սոցաբարում:  
Մարքսիզմի հոյակաւ պ ըմբռնում և կիրառում: Բայց այդ մասին  
առելի մանրամասն ներքևում:

Հիմա պետք է վերցնել զլխաւորը — Կառուցկու մեծ հայա-  
նագործութեանը «դեմոկրատական և դիկտատորական մեթոդ-  
ների» «արմատական հակադրութեան» մասին: Այդ է հարցի մե-  
խը: Այդ է Կառուցկու բրոշյուրի ամբողջ էությունը: Յեւ վ այդ  
այնպիսի հրեշաւոր թերութեան շիթութեան է, այնպիսի լիա-  
կատար հրաժարումն մարքսիզմից, վոր Կառուցկին, պետք է խոս-  
տովանել, Բերնշտայնից շատ ավելի հեռու չէ գնացել:

Պրովետարիատի ղեկատուութեան հարցն այն հարցն է, թե ինչպէս եւ հարաբերում պրովետարական պետութիւնը բուրժուական պետութեանը, պրովետարական դեմոկրատիան՝ բուրժուական դեմոկրատիային: Թվում է, թե այդ արեւի լույսի պէս պարզ է: Բայց Կառուցիկն, ասես դիմնադրիայի մի ինչ-վոր ուսուցիչ, վորին պատմութեան դասագրքերի կրկնողութիւնը ցամաքեցրել է, համառ կերպով քամակը դարձնում է XX դարին, յերեսը XVIII-ին և հարյուրերորդ անգամ, անչափ ճանճբալի կերպով, մի ամբողջ շարք պարադրաֆներում, ծամում և ծամծամում է այն հնոտին, թե ինչպէս է հարաբերում բուրժուական դեմոկրատիան արտոլուտիզմին ու միջնադարին:

Ճիշտ վոր, կարծես յերազում ճիշտ՛ալ է ծամում:

Չե՞ վոր այդ նշանակում է բացարձակապէս չհասկանալ, թե ինչն ինչին է վերաբերում: Չե՞ վոր միայն ժպիտ են առաջացնում Կառուցիկու ճիշտը դործն այնպէս ներկայացնելու, թե իբր կան մարդիկ, վորոնք քարոզում են «արհամարհանք դեպի դեմոկրատիան» (էջ 11), և այլն: Կառուցիկն հարկադրված է այդպիսի դատարկ բաներով հարցը սքողել, խճճել, վորովհետև նա հարցը դնում է լիբերալորեն, ընդհանրապէս դեմոկրատիայի մասին և վոչ թե բուրժուական դեմոկրատիայի մասին, նա մինչև անդամ խուսափում է այդ ճշդիտ, դասակարգային հասկացողութիւնից, այլ ջանում է խոսել «մինչտուցիլիստական» դեմոկրատիայի մասին: Բրոշյուրի դրեթե յերրորդ մասը, 63 էջից 20-ը, մեր ջրհոսը դրաղեցրել է շողակրատութեամբ, վորը շատ հաճելի յե բուրժուակրային, վորովհետև այդ հավասար է բուրժուական դեմոկրատիան դունադարելուն և սքողում է պրովետարական հեղափոխութեան հարցը:

Բայց չե՞ վոր Կառուցիկու բրոշյուրի վերնադիրն է այնուամենայնիվ «Պրովետարիատի ղեկատուութեան»: Վոր հենց այդ է Մարքսի ուսմունքի ելուցիւնը, այդ հանրահայտ է: Յեւ Կառուցիկն ստիպված է, թեմային չլիբերալորող ամբողջ շողակրատութիւնից հետո, բերել Մարքսի խոսքերը պրովետարիատի ղեկատուութեան մասին:

Թե «մարքսիստ» Կառուցիկն այդ ինչպէս է արել, այդ արդէն ուղղակի՛ կոմեդիա յե: Լսեցե՛ք:

«Կարլ Մարքսի մի բառի վրա յե հենված այն հայացքը» (վոր Կառուցիկն հայտարարում է արհամարհանք դեպի դեմոկրատիան), — տառացի այդպէս է դրված 20-րդ էջում: Իսկ 60-րդ էջում այդ կրկնված է մինչև անգամ այնպիսի ձևով, թե (բոլ-

չևիկները) «ժամանակին մտարերեցին այն բառիկը» (բառացի՝ ալյապես ե՛ des Wörtchens) «պրոլետարիատի դիկտատուրայի մասին, վոր Մարքսը մի անգամ նամակի մեջ գործ է անել 1875 թվականին»:

Ահա Մարքսի այդ «բառիկը».

«Կապիտալիստական և կոմունիստական հասարակության միջև ընկած և առաջինը հեղափոխականորեն յերկրորդին վերածելու շրջանը: Այդ շրջանին համապատասխանում է նաև քաղաքական անցման շրջան, և այդ շրջանի պետութունը չի կարող լինել վոչ այլ ինչ, բայց յեթե պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրա»<sup>1</sup>:

Նախ՝ Մարքսի այս նշանավոր դատողությունը, վոր հանրադոմարի յե բերում նրա ամբողջ հեղափոխական ուսմունքը, անվանել «մի բառ» կամ մինչև անգամ «բառիկ» — նշանակում է ծաղրել մարքսիզմը, նշանակում է հրաժարվել նրանից լիովին: Չպետք է մոռանալ, վոր Կառլեյկին դիտե Մարքսին գրեթե անգիր, վոր Կառլեյկու բոլոր գրվածքներից դատելով՝ նրա գրասեղանում կամ գլխում գետեզված են մի շարք փայտե արկղիկներ, վորոնցում Մարքսի բոլոր գրածները դասավորված են մեջքերումներ անելու համար ամենականոնավոր և ամենահարմար կերպով: Կառլեյկին չի կարող չգիտենալ, վոր ե՛ Մարքսը, ե՛ Ենդելսը թե՛ նամակներում և թե՛ տպագիր աշխատություններում պրոլետարիատի դիկտատուրայի մասին խոսել են բավիցս, մասնավանդ Կոմունայից թե՛ առաջ և թե՛ հետո<sup>2</sup>): Կառլեյկին չի կարող չգիտենալ, վոր «պրոլետարիատի դիկտատուրա» Ֆորմուլան՝ այդ լուկ սրամահանորեն ավելի կոնկրետ ու գիտականորեն ճիշտ շարադրանքն է բուրժուական պետական մեքենան պրոլետարիատի կողմից «փչրելու» այն խնդրի, վորի մասին թե՛ Մարքսը և թե՛ Ենդելսը խոսում են 1852-ից մինչև 1891 թիվը, քառասուն տարվա ընթացքում, հաշիի առնելով 1848 և ավելի ևս 1871 թվի հեղափոխությունների փորձը:

Ի՞նչպես բացատրել մարքսիզմի այդ հրեշավոր աղավաղումը մարքսիզմի ասպարեզում դպիր հանդիսացող Կառլեյկու կողմից: Յեթե ավյալ յերևույթի փիլիսոփայական հիմքերի մասին խոսենք, այն ժամանակ բանը կհանգի դիալեկտիկան եկլեկտիցիդմով ու սովետականությամբ նենդափոխելուն: Կառլեյկին այդպիսի նենդափոխման մեծ վարպետ է: Յեթե խոսենք գործնականորեն-քաղաքականորեն, այն ժամանակ բանը կհանգի ուղոր-

<sup>1</sup>) Ձեռագրում «թե՛ առաջ և թե՛ հետո» բառերը բացակայում են: Խմբ.:

տունիստները առաջ, այսինքն վերջիններքն բուրժուազիայի առաջ, լաբեյուլթյուն անելուն: Պատերազմի սկզբից ավելի ու ավելի արագ առաջագլխեղով՝ Կառուցկին ղերվարպետության և հասնել—խոսքով՝ մարքսիստ, դարձով՝ բուրժուազիայի լաբեյ լինելու աչք արվեստում:

Ավելի ևս համոզվում ես աչք բանում, յերբ քննության ես առնում, թե ինչ յերեկին կերպով և «մեկնարանել» Կառուցկին Մարքսի «բառիկը» սրուկտարական զիկտատուրայի մասին: Լսեցե՛ք:

«Մարքսը, ցավոք սրտի, ոչքաթող և արև ավելի մանրամասնքեն մտաննչելու, թե ինչպես և պատկերացնում այդ զիկտատուրան...»: (Ռենեկատի ամբողջապես սասոդ Քրազ, վրովհեակ Մարքսն ու Ենդելը ավել են հասկապե մի շարք մանրամասնագույն ցուցումներ, վորոնք ղիտավորյալ կերպով մի կողմ և թողնում մարքսիզմի սուպարեզում ղպեր հանդիսացող Կառուցկին)...: «Իիկտատուրա բուր ստուացի նշանակում և ղեմոկրատիայի վաշխացում: Բայց, հարկալ, տառացի առումով այդ բուր նշանակում և նաև վոչ մի որենքով ղկաշխանդված մեկ տանձին անձի միահեծան իշխանություն: Միահեծան իշխանություն, վորը բանակալությունից տարբերվում և նրանով, վոր ղիտվում և վոչ վորպես մշտական պետական հաստատություն, այլ վորպես անցողիկ ծայրահեղ միջոց:

«Պրոլետարիատի ղիկտատուրա»—հետևարար, վոչ թե մեկ անձի, ղիկտատուրա, այլ մեկ ղատակարգի ղիկտատուրա—արտասայտությունն արդեն բացառում և, թե Մարքսն ընդամին նկատի յե ունեցել ղիկտատուրան բառիս տառացի իմաստով:

Նա այսանդ խոսել և վոչ թե կառավարման ձևի մասին, այլ այն կացության մասին, վորն անհրաժեշտարար պետք և վրա հասնի ամենուրեք, վորոնեղ պրոլետարիատը քաղաքական իշխանություն և նվաճել: Վոր Մարքսն այսանդ նկատի ղի ունեցել կառավարման ձևը, այդ արդեն նրանով և սուպացովում, վոր նա այն կարծիքն ուներ, թե Անգլիայում և Ամերիկայում անցումը կարող և կատարվել խաղաղ կերպով, հետևապես, ղեմոկրատական ճանապարհով» (ԼՂ 20):

Մենք ղիտամաք ամբողջությամբ բերինք այս ղատողությունը, վորպեսզի ընթերցողը կարողանա պարզ կերպով տեսնել, թե ինչ ձևեր և բանեցնում «թերեաիկ» Կառուցկին:

Կառուցկին ցանկացել և հարցին այնպես մոտենալ, վորպեսզի սկսի ղիկտատուրա «բառի» բնորոշումից:

Հիանալի: Հարցին ցանկացած ձևով մոտենալը յուրաքանչյուրի սրբաղան իրավունքն և: Միայն պետք և տարբերել հարցին լուրջ և ազնիվ մոտենալը անազնիվ մոտենալուց: Ով վոր կցանկանար հարցին տվյալ ձևով մոտենալու պարագայում լրջորեն վերաբերվել գործին, նա պետք և վոր տար «բառի» իր բնորոշումը: Այն ժամանակ հարցը ղրված կլիներ պարզ և ուղղա-

կի կերպով: Կառուցկին այդ չի անում: «Դիկտատուրա բառը,— գրում է նա,— տառացի նշանակում է ղեմոկրատիայի վոչնչացում»:

Նախ՝ այս բնորոշում չէ: Յեթե Կառուցկուն հաճելի չէ խուսափել դիկտատուրա հասկացողութեան բնորոշումը տալուց, ի՞նչ հարկ կար ընտրելու հարցի նկատմամբ տվյալ մոտեցումը:

Յերկրորդ՝ այդ պահներևորեն սխալ է: Լիբերալի համար բնական է խոսել ընդհանրապես «ղեմոկրատիայի» մասին: Մարքսիստը յերբեք չի մոռանա հարց պնել. «վո՞ր դասակարգի համար»: Ամեն վոք զիտե, որինակ,— և «պատմաբան» Կառուցկին նույնպես զիտե այդ,— վոր հնում ստրուկների ապստամբությունները կամ նույնիսկ ուժեղ խռովություններն իսկույն յերևան էյին հանում անտիկ պետութեան էյությունը, վորպես ստրկատերերի դիկտատուրա: Արդյոք այդ դիկտատուրան վոչընչացնո՞ւմ էր ղեմոկրատիան ստրկատերերի մեջ, նրանց համար: Բոլորին հայտնի չէ, վոր վոչ:

«Մարքսիստ» Կառուցկին հրեշափոր անհեթեթություն և անճշտություն ասաց, վորովհետև «մոռացալ» դասակարգային կալի մասին...

Կառուցկու տված լիբերալ և ստահող պնդումը մարքսիստական ու ճշմարիտ պնդում դարձնելու համար պետք է ստել. դիկտատուրան բնավ էլ պարտավորապես չի նշանակում ղեմոկրատիայի վոչնչացումն այն դասակարգի համար, վորն իրականացնում է այդ դիկտատուրան մյուս դասակարգերի նկատմամբ, բայց այն պարտավորապես նշանակում է ղեմոկրատիայի վոչընչացում (կամ ամենաեյակիան սահմանափակում, վոր նույնպես վոչնչացման ձևերից մեկն է) այն դասակարգի համար, վորի վերաբերմամբ կամ վորի դեմ իրականացվում է դիկտատուրան:

Բայց, վորքան էլ ճշմարիտ լինի այս պնդումը, դա չի տալիս դիկտատուրայի բնորոշումը:

Գննարկենք Կառուցկու հետևյալ Ֆրագը.

«...Բայց, հարկալ, տատայի տուժով այդ բառը նշանակում է նաև վոչ մի որևնքով չկաշկանդված մեկ տասնձին անձի միահեծան իշխանություն...»:

Նման շան կույր ձագի, վորը պատահաբար քթահարում է մերթ այս, մերթ այն կողմը, Կառուցկին այստեղ անտեղիկալ կերպով շոչափեց մեկ ճիշտ միտք (այսինքն այն, վոր դիկտատուրան վոչ մի որևնքով չկաշկանդված իշխանություն է), բայց

այնուամենայնիվ չտվեց դիկտատուրայի բնորոշումը և, բացի դրանից, պատմական ակներև անճշտություն ասաց, թե իբր դիկտատուրան նշանակում է մեկ անձի իշխանություն: Այդ քերականորեն ել ճիշտ չէ, վորովհետև դիկտատուրություն անել կարող է և՛ մարդկանց մի խումբ, և՛ ոլիգարխիան, և՛ մի դասակարգ և այլն:

Այնուհետև Կառլցկին մատնանշում է դիկտատուրայի տարբերությունը բռնակալությունից, բայց, թեև նրա մատնանշումն ակներևորեն սխալ է, մենք դրա վրա կանդ չենք առնի, վորովհետև այդ բոլորովին չի վերաբերում մեզ հետաքրքրող հարցին: Հայտնի յե Կառլցկու հակումը շուռ դալու XX դարից դեպի XVIII-ը, իսկ XVIII-ից դեպի անտիկ հնադարը, և մենք հույս ունենք, վոր դիկտատուրա նվաճելով, գերմանական պրոլետարիատը հաշվի կառնի այդ հակումը, Կառլցկուն կարգելով, ասենք, հին սրատմության դիմնադիական ուսուցիչ: Պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշումից խույս տալ՝ բռնակալության մասին իմաստակություններ անելու միջոցով, այդ—կամ ծայրահեղ հիմարություն է, կամ խիստ անարվեստ խարդախություն:

Իբրև արդյունք ստանում ենք այն, վոր կամենալով խոսել դիկտատուրայի մասին, Կառլցկին մեծ քանակությամբ ակներև դիտավորյալ անճշտություն ասաց, բայց չտվեց վո՛չ մի բնորոշում: Նա կարող եր, չվստահելով իր մտավոր ընդունակություններին, դիմել իր հիշողությանը և զուրս թափել «արկղիկներին» այն բոլոր դեպքերը, յերբ Մարքսը խոսում է դիկտատուրայի մասին: Նա հավաստապես կստանար կամ հետևյալ, կամ ըստ եյության սրան զուղադիպող մի բնորոշում.

Դիկտատուրան մի իշխանություն է, վորն անմիջականորեն հենվում է բռնության վրա, կաշկանդված չէ վոչ մի որե՛նքով:

Պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան մի իշխանություն է, վորը նվաճված է և պաշտպանվում է պրոլետարիատի կողմից բուրժուազիայի նկատմամբ գործադրվող բռնությամբ, մի իշխանություն, վորը կաշկանդված չէ վոչ մի որե՛նքով:

Յեւ ահա հենց այս պարզ ճշմարտությունը, ամեն մի դիտակից բանվորի համար (մասսայի ներկայացուցչի և վոչ թե կապիտալիստների կողմից կաշառված քաղքենիական սրիկաների վերնախափի համար, վորպիսին հանդիսանում են բոլոր յերկիրների սոցիալ-իմպերիալիստները) արևի լույսի պես պարզ ճշմարտությունը, իրենց ազատադրության համար պայքարող

չահադործվողների ամեն մի ներկայացուցչի համար ակներև, ամեն մի մարքսիստի համար անլիճեղի այս ճշմարտությունը ստիպված ենք «սպտերադմով հետ նվաճել» դիտնականազույն պարոն Կաուցկուց: Ինչո՞վ բացատրել այդ: — Լաքեյուլթյան այն վորով, վորով տողորվել են II Ինտերնացիոնալի առաջնորդները, վորոնք դարձել են բուրժուազիային ծառայող անարդ սիկոֆանտներ:

Կաուցկին նախ նենդափոխություն կատարեց, ասելով ակներև անհեթեթություն, թե իբր դիկտատուրա բռնի տառացի իմաստը նշանակում է միանձնյա դիկտատոր, իսկ հետո նա—այդ նենդափոխության հիման վրա՝—հայտարարում է, թե ուրեմն Մարքսի մոտ դասակարգի դիկտատուրայի վերաբերյալ բռներն ունեն վոչ տառացի իմաստ (այլ այնպիսի իմաստ, ըստ վորի դիկտատուրան չի նշանակում հեղափոխական բռնություն, այլ «մեծամասնության խաղաղ նվաճումն բուրժուական»), — նկատի առեք այս, — դեմոկրատիայի որով):

Պետք է տարբերել, դիտե՞ք ինչ, «կացությունը» «կառավարման ձևից»: Զարմանալի խորիմաստ տարբերություն, վոր բոլորովին նման կլինեն այն բանին, յեթե մենք խելոք չդատող մարդու հիմարության «կացությունը» տարբերելինք այդ մարդու հիմարությունների «ձևից»:

Կաուցկուն հարկավոր է մեկնաբանել դիկտատուրան, վորպես «տիրապետության կացություն» (այս արտահայտությունը նրա մոտ տառացիորեն գործ է անված հենց հետևյալ, 21-րդ եջում), վորովհետև այդ դեպքում չֆանում է հեղափոխական բռնությունը, չֆանում է բռնի հեղափոխությունը: «Տիրապետության կացությունը» մի կացություն է, վորի մեջ լինում է ամեն մի մեծամասնություն ... «դեմոկրատիայի» որով: Այսպիսի խարդախ ֆոկլոսով հեղափոխությունը բարեհաջող կերպով չֆանում է:

Իսկ խարդախությունը չափազանց կոպիտ է, և Կաուցկուն այդ չի փրկել: Վոր դիկտատուրան յենթադրում է նշանակում է մեկ դասակարգի կողմից մյուսի նկատմամբ գործադրվող և ունենդատների համար անդուրեկան հեղափոխական բռնության «կացություն», այդ «բիրը տուրակի մեջ չի պարտակվի»: Դրսեվորվում է «կացության» և «կառավարման ձևի» տարբերման անհեթեթությունը: Այստեղ յեռակի հիմարություն է կառավարման ձևի մասին խոսելը, վորովհետև ամեն մի մասնուկ դիտե, վոր միապետությունն ու հանրապետությունը կառավարման զանա-

դան ձևեր են: Պարոն Կառլցկուն հարկավոր է սպացուցել, վոր կառավարման այս յերկու ձևն էլ, ինչպես և բոլոր անցողիկ «կառավարման ձևերը» կապիտալիզմի որով, բուրժուական պետության, այսինքն բուրժուակիայի դիկտատուրայի այլատեսակություններն են միայն:

Վերջապես կառավարման ձևերի մասին խոսելը վո՛չ միայն հիմար, այլև անճոռնի կեղծումն է Մարքսի, վորն այստեղ պարզից էլ պարզ խոսում է պետության ձևի կամ տիպի և վո՛չ թե կառավարման ձևի մասին:

Պրոլետարական հեղափոխությունն անհնարին է առանց բուրժուական պետական մեքենան բնությամբ կործանելու և այն փոխարինելու նորով, վորը Ենգելսի ստելով՝ «արդեն բուն իմաստով պետություն չէ»<sup>2</sup>:

Կառլցկուն հարկավոր է այս ամենը սխալել ու ստել — այդ է պահանջում նրա ռենդատական դիրքը:

Տեսե՛ք, թե վորպիսի վողորմելի հնարքների յե նա դիմում:

Հնարք առաջին. «Վոր Մարքսն այստեղ նկատի չի ունեցել կառավարման ձևը, այդ սպացուցվում է այն բանով, վոր նա Անգլիայում և Սմերիկայում հնարավոր եր համարում խաղաղ հեղաշրջումը, այսինքն դեմոկրատական ճանապարհով...»:

Կառավարման ձևն այստեղ բացարձակապես անտեղի յե մեջ բերվում, վորովհետև, որինակ, լինում են բուրժուական պետության համար վոչ տիպիկ միապետություններ, վորոնք աչքի յեն ընկնում զինվորականության ( военищина ) բացակայությամբ և, որինակ, լինում են բուրժուական պետության համար միանգամայն \*) տիպիկ հանրապետություններ, վորոնք ունեն դինվորականություն և բյուրոկրատիա: Սա պատմական և քաղաքական հանրահայտ փաստ է, և Կառլցկուն չի հաջողվի կեղծել այդ:

Յեթե կառլցկին կամենար լուրջ և ազնվորեն դատել, նա իրեն հարց կտար. լինո՞ւմ են արդյոք հեղափոխությանը վերաբերող և բացառություն չունեցող պատմական որևե՛րներ: Պատասխանը կլիներ. վո՛չ, այդպիսի որևե՛րներ չկան: Այդպիսի որևե՛րները նկատի ունեն միայն տիպիկականը, այն, ինչ վոր Մարքսը մի անգամ անվանել է «իդեալական»՝ միջին, նորմալ, տիպիկական կապիտալիզմի իմաստով:

Այնուհետև: Արդյոք 70-ական թվականներին յեղե՞լ է վորևև այնպիսի բան, վորը ֆևնարկվող տեսակետից բացառություն

\*) Չեռազրի մեջ սրան հետևում են «այդ տեսակետից» բառերը: Խմբ.:

զարձներ Անդլիան և Ամերիկան: Ամեն մի մարդու համար, ով  
Վորեն չափով ծանոթ է գիտության պահանջին պատմական հար-  
ցերի բնադալառում, ակներև է, վոր այդ հարցն անհրաժեշտ է  
դնել: Չդնել այն՝ նշանակում է կեղծել գիտությունը, նշանա-  
կում է սոփեստությամբ զբաղվել: Իսկ դնելով այդ հարցը՝ չի  
կարելի տարակուսել պատասխանի նկատմամբ. պրոլետարիատի  
հեղափոխական դիկտատուրան բռնաբռնում է բուրժուազիայի  
դեմ, — իսկ այդ բռնության անհրաժեշտությունը հատկապես  
առաջ է դալիս, ինչպես ամենամանրամասն կերպով և բազմիցս  
բացատրել են Մարքսն ու Ենգելսը (մանավանդ «Ֆաղաբացիական  
պատերազմը Ֆրանսիայում» գրքում և նրա առաջաբանում),  
այն բանից, վոր գոյություն ունեն զինվորականություն և բյու-  
րոկրատիա: Հենց այդ հաստատությունները, հենց Անդլիայում  
և Ամերիկայում, XIX դարի հենց 70-ական թվականներին, յերբ  
Մարքսն արել է իր նկատողությունը, չեն յեղել: (Իսկ այժմ  
դրանք կան թե՛ Անդլիայում, թե՛ Ամերիկայում):


Կառուցելն ստիպված է յուրաքանչյուր քայլափոխում տառա-  
ցիրեն խարդախել, վորպեսզի քողարկի իր սենեղատությունը:

Յե՛ն նկատեցե՞ք, թե ինչպես նա անակնկալ կերպով այստեղ  
յույց տվեց իր՝ իշի ականջները. նա դրել է՝ «խաղաղ», այսինքն  
դեմոկրատական ֆանապրեհո՞ւ՛վ:

Դիկտատուրան բնարդելիս Կառուցելն իր բոլոր ուժերով ջա-  
նում էր ընթերցողից թաղցնել այդ հասկացողության հիմնական  
հատկանիշը, այն է՝ հեղափոխական բռնաբռնումը: Իսկ այժմ ճշ-  
մարտությունը դուրս պրծավ. խոսքը վերարերում է յսաղապ և  
բռնի հեղաշրջումների հակադրությանը:

Այստեղ է թաղված շան գլուխը: Բոլոր հնարքները, սոփես-  
տություններն ու խարբաչական խարդախությունները Կառուց-  
ելուն հարկավոր են հենց նրա համար, վորպեսզի ուժիքն ազատի  
բռնի հեղափոխությունից, վորպեսզի քողարկի իր հրաժարումը  
նրանից, իր անցումը լիբերալ բանվորական քաղաքականության  
կողմը, այսինքն բուրժուազիայի կողմը: Այստեղ է թաղված  
շան գլուխը:

«Պատմագետ» Կառուցելն այնպես անամոթաբար է խարդա-  
խում պատմությունը, վոր մոռանում է հիմնականը. մինչմո-  
ռոպրոլիտական կապիտալիզմը — իսկ դրա զաղաթնակետը յեղել  
են XIX դարի հենց 70-ական թվականները — իր տնտեսական  
հիմնական հատկությունների հետևանքով, վոր Անդլիայում ու  
Ամերիկայում առանձնապես տիպիկ էին արտահայտվում, աչքի



A 38655 20408

յեր ընկնում համեմատաբար ամենամեծ խաղաղասիրութեամբ և ազատասիրութեամբ: Իսկ իմպերիալիզմը, այսինքն մոնոպոլիստական կապիտալիզմը, վոր վերջնականապես հասունացել և միայն XX դարում, իր տնտեսական հիմնական հատկութունների հետևանքով աչքի յե ընկնում ամենանվազ խաղաղասիրութեամբ ու ազատասիրութեամբ, ղինվորականութեան ամենամեծ ու ամենուրեք նկատվող դարդացմամբ: Խաղաղ կամ բռնի հեղաշրջման տիպիկականութեան կամ հալանականութեան մասին դատելիս՝ «չնկատել» այդ, նշանակում և մինչև բուրժուազիայի ամենասովորական լաքեյը դառնալու աստիճան ընկնել:

Հնարք յերկրորդ: Փարիզի Կոմունան պրոլետարիատի դիկտատուրա յեր, իսկ ընտրված էր ընդհանուր քվեարկութեամբ, առանց բուրժուազիային ընտրական իրաւունքներից զրկելու, «դեմոկրատիկ ձևով»: Յեւ Կառուցկին հրճվում է. «... Պրոլետարիատի դիկտատուրան Մարքսի համար» (կամ ըստ Մարքսի) «մի կացութիւն էր, վորն անհրաժեշտորեն բղխում է մաքուր դեմոկրատիայից, յեթե պրոլետարիատը մեծամասնութիւն է կազմում» (bei überwiegendem Proletariat, էջ 21):

Կառուցկու այս փաստարկն այնքան զվարճալի յե, վոր ճշմարտապես զգում էս իսկական embarras des richesses (դժվարութիւն առարկութիւնների առատութիւնից): Նախ՝ հայտնի յե, վոր բուրժուազիայի ծաղիկը, շտաբը, վերնախավերը Փարիզից փախել էին Վերսալ: «Սոցիալիստ» Լուի Բլանը Վերսալումն էր, մի հանդամանք, վոր, ի միջի այլոց, ցույց է տալիս Կառուցկու այն սնդման ստահողութիւնը, թե իբր Կոմունայի մեջ մասնակցել են սոցիալիզմի «բոլոր ուղղութիւնները»: Միծաղելի չէ՞ արդյոք իբրև «ընդհանուր քվեարկութիւն» կիրառող «մաքուր դեմոկրատիա» պատկերել Փարիզի բնակիչներին բաժանումը յերկու պատերազմող բանակներին, վորոնցից մեկը համակենտրոնացրել էր ամբողջ մարտական, քաղաքականապես ակտիվ բուրժուազիային:

Յերկրորդ՝ Կոմունան պայքարում էր Վերսալի դեմ, վորպես Ֆրանսիայի բանվորական կառավարութիւն՝ ընդդեմ բուրժուազիայի: Ել ի՞նչ դործ ունեն այստեղ «մաքուր դեմոկրատիան» ու «ընդհանուր քվեարկութիւնը», յերբ Փարիզը Ֆրանսիայի բախտն էր վորոշում: Յերբ Մարքսը գտնում էր, վոր Կոմունան սխալ դործեց, չվերցնելով ամբողջ Ֆրանսիային պատկանող բանկը<sup>3</sup>, արդյոք Մարքսը չէ՞ր յելնում «մաքուր դեմոկրատիայի» սկզբունքներից ու պրակտիկայից:

Արդարև, յերևում է, վոր Կառուցկին գրում է մի այնպիսի

յերկրում, վորտեղ վոստիկանությունն արդելում և մարդկանց «խմբովին» ծիծաղել, այլապես այդ ծիծաղը կսպաներ Կառուցիկուն:

Յերրորդ: Թույլ կտամ ինձ հարդոյարար հիշեցնել Մարքսին ու Ենգելսին անգիր գիտցող պարոն Կառուցիկուն Կոմունայի հետևյալ զնահատականը, վոր տվել է Ենգելսը... «մաքուր դեմոկրատիայի» տեսակետից:

«Յերրեւ հեղափոխություն տեսնուլ են արդոք այդ պարոնները» (հակավտորիտարիստները): «Հեղափոխությունն անսարակույս, ամենավտորիտար բանն է, վորքան վոր այդ հնարավոր է: Հեղափոխությունը մի ահա է, վորով բնակչութեան մի մասն իր կամքն և փաթաթում մյուս մասի վզին հրացանների, ավիաների, թնդանոթների միջոցով, այսինքն վերին աստիճանի ավտորիտար միջոցներով: Յե՛վ հաղթող կուսակցութեանն անհրաժեշտաբար հարկադրված և լինում իր տիրապետութեանն իր ձեռքին պահել այն վախի միջոցով, վոր ներշնչում և ռեսիցիտներնեղին այդ կուսակցութեան զենքը: Յլթե փարիզի Կոմունան չհնկեր զինված ժողովրդի ավտորիտետի վրա՝ ընդդէմ բուրժուակոյալի, մի՞թե նա այն ժամանակ մի որից ավելի կգիմանար: Իրավունք չունե՞նք մենք արդոք ընդհակառակը, նախատելու Կոմունան այն բանի համար, վոր նա չախից դուրս քիչ և ողտվել այդ ավտորիտետից»: Ե:

Այս էլ ձեզ «մաքուր դեմոկրատիա»: Ինչպե՛ս կծաղրեր Ենգելսը այն գոհհիկ քաղքենուն, «սոցիալ-դեմոկրատին» (Փրանսական իմաստով՝ 40-ական թվականներէ և համայնվրոպական իմաստով—1914—1918 թվականներէ), վորը կցանկանար առհասարակ խոսել «մաքուր դեմոկրատիայի» մասին մի հասարակութեան նկատմամբ, վոր բաժանված է դասակարգերի:

Բայց բավական է: Թվարկել Կառուցիկու ասած բոլոր առանձին անհեթեթութեաններն անհնարին բանն է, վորովհետեւ նրա յուրաքանչյուր դարձվածքը ռենեգատութեան անհատակ անդուռ է:

Մարքսն ու Ենգելսն ամենամանրամասն կերպով վերլուծել են փարիզի Կոմունան, ցույց են տվել, վոր նրա յերախտիքը «պատրաստի պետական մեքենան» փշրելու, ջարդելու փորձն էր: Մարքսն ու Ենգելսը այնքան կարեւոր էյին համարում այդ յեզրակացութեանը, վոր 1872 թվականին միայն այդ ուղղումը մտցրին «Կոմունիստական մանիֆեստ»-ի «հնացած» (վորոչ մասերով) ծրագրի մեջ: Մարքսն ու Ենգելսը ցույց տվին, վոր Կոմունան վոչնչացնում էր բանակն ու չինտիկութեանը, վոչնչացնում էր պալաւեմտարիզը, կործանում էր «մակարուծական պալարը—պետութեանը» և այլն, իսկ գերիմաստուն Կառուցիկն, դէշերային թասակ զնելով, կրկնում է այն, ինչ վոր հազար անգամ ասել են լիբերալ պրոֆեսորները, —հեքիաթներ «մաքուր դեմոկրատիայի» մասին:

1914 թվականի ողոստասի 4-ին իզուր չտաց Ռոզա Լուբսեմբուրգը, թե զերմանական սոցիալ-դեմոկրատիան այժմ գալը շահուս դիակ է :

Յերրորդ հնարքն այս է. «Յեթե մենք խոսում ենք զիկոտատուրայի վորպես կառավարման ձևի մասին, ապա մենք չենք կարող խոսել դասակարգի զիկոտատուրայի մասին: Վորովհետև դասակարգը, ինչպես արդեն մենք նկատեցինք, կարող է միայն տիրապետել, բայց վոչ կառավարել...»: Իսկ կառավարում են «կադմակերպությունները» կամ «կուսակցությունները»:

Շիտիթում եք, անաստլա՛ծ կերպով չիտիթում եք, պարո՛ն: «խառնաչիտիթության խորհրդական»: Դիկոտատուրան «կառավարման ձև» չէ, այդ ծիծաղելի անմտություն է: Մարքսը ևս խոսում է վոչ թե կառավարման ձևի, այլ պետութայն ձևի կամ տիրապի մասին: Սա բոլորովին այն չէ, բոլորովին այն չէ: Միանդամայն սխալ է նույնպես, թե դասակարգը չի կարող կառավարել: այսպիսի անհեթեթություն ասել կարող եր «սպաւամեհական կրեախներ» միայն, վորը վոչինչ չի տեսնում, բացի բուրժուական պառլամենտից, վոչինչ չի նկատում, բացի «կառավարող կուսակցություններից»: Յեւրոպական ամեն մի յերկիր ցույց կտա կառուցիւն, թե ինչպես այդ յերկիրը կառավարել է տիրապետող դասակարգը, որինակ, միջին դարերում՝ կալվածատերերը, չնայած նրանց բախականաչափ կազմակերպված չլինելուն:

Ամփոփում: Կառուցիւն ամենաանլուր կերպով խեղաթյուրել է պրոլետարիատի զիկոտատուրա հասկացողությունը, Մարքսին դարձնելով սովորական լիբերալ, այսինքն՝ ինքն է զլորվել մինչև այն լիբերալի մակարդակը, վորը դոեհիկ Փրագներ է շաղակրատում «մաքուր դեմոկրատիայի» մասին, զեղազարդելով ու սքողելով բուրժուական դեմոկրատիայի դասակարգային բովանդակությունը, ամենից ավելի խորշելով ճնշված դասակարգի հեղափոխական բանությունից: Յերբ Կառուցիւն «պրոլետարիատի հեղափոխական զիկոտատուրա» հասկացողությունն այնպես «մեկնաբանեց», վոր չբացավ ճնշված դասակարգի հեղափոխական բունությունը ճշդողների վերաբերմամբ, ապա Մարքսի լիբերալ ազգավարման դործում համաշխարհային սեկորդ խովեց: Ռենեգատ Բերնշտայնը սենեգատ Կառուցիւն համեմատությամբ լակոտ դուրս յեկավ:

# ԲՈՒՌԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ

Կառուցելու կողմից անաստված կերպով խառնաշփոթած հարցն իրահանում ներկայանում է այսպիսի կերպարանքով:

Յեթե չձաղրենք առողջ դատողությունը և պատմությունը, ապա պարզ է, վոր չի կարելի խոսել «մաքուր դեմոկրատիայի» մասին, քանի դոյություն ունեն զանազան դասակարգեր, այլ կարելի չէ խոսել միայն դասակարգային դեմոկրատիայի մասին: (Փակաղծերում ասած, «մաքուր դեմոկրատիան» վր'չ միայն տգիտությունն արտահայտող Փրազ է, վոր յերևան է բերում ինչպես դասակարգերի կոխվը, այնպես ել պետության եյությունը չբարենկը, այլև յնուսպատիկ դատարի Փրազ է, վորովհետև կոմունիստական հասարակության մեջ դեմոկրատիան վերասերվելով ու սովորույթ դառնալով, մահանալու յե, բայց յերբեք չի լինի «մաքուր» դեմոկրատիա):

«Մաքուր դեմոկրատիան» բանտորներին հիմարացնող լիբերալի ստահող Փրազ է: Պատմությունը դիտե բուրժուական դեմոկրատիան, վոր դալիս է փոխարինելու Ֆեոդալիզմին\*) և պրոլետարական դեմոկրատիան, վոր դալիս է փոխարինելու բուրժուականին:

Յեթե Կառուցիկն զրեթե տասնյակ եջեր է նվիրում այն ճըլմարտությունն «ապացուցելուն», վոր բուրժուական դեմոկրատիան առաջադիմական է՝ միջնադարականության հետ համեմատած և վոր պրոլետարիատն անպատճառ պետք է ոգտադործի այդ դեմոկրատիան այն պայքարում, վոր մղում է բուրժուադիայի դեմ, ապա այդ հենց բանտորներին հիմարացնող լիբերալ շաղակրատություն է: Վր'չ միայն կրթված Գերմանիայում, այլև անկիրթ Ռուսաստանում այդ տրուիզմ է: Կառուցիկն պարզապես «դիտական» ավազ է փչում բանտորներին աչքը, փզուն տեսք ընդունած պատմելով թե՛ Վայտլինգի մասին, թե՛ Պարազլայի ճիզվիտները մասին, թե՛ այլ շատ բաների մասին, վորպեսզի զանց անի արգի, այսինքն կապիտալիստական դեմոկրատիայի բուրժուական եյությունը:

Կառուցիկն մարքսիզմից վերցնում է այն, ինչ վոր ընդունելի յե լիբերալների համար, բուրժուադիայի համար (միջնադարականության քննադատությունը, առհասարակ կապիտալիզմի և

\*) Զետտորում՝ «փոխարինում է միջնադարականությանը»: Խմբ.:

մասնավորապես կապիտալիստական ղեմոկրատիայի առաջադեմական պատմական դերը), և սքոզում, դուրս է նետում, լուծված տալիս մարքսիզմի մեջ այն, ինչ վոր անընդունելի յե բուրժուազիայի համար (պրոլետարիատի հեղափոխական բռնութիւնն ընդդեմ բուրժուազիայի՝ վերջինս վոչնչացման համար): Ահա թե ինչու Կաուցկիին անխուսափելիորեն, իր ոքիկտիվ դրութեան շնորհիվ և ինչ ել վոր լինի նրա սուբյեկտիվ համոզվածութիւնը, բուրժուազիայի լաքեյ և դուրս դալիս:

Բուրժուական ղեմոկրատիան, պատմական մեծ առաջադիմութիւն լինելով միջնադարականութեան հետ համեմատած, միշտ մնում ե—և կապիտալիզմի որով չի կարող չմնալ—նեղ, թերատ, կեղծ, խաբեյական, հարուստներէ համար՝ դրախտ, շահագործվողներէ, չքավորներէ համար՝ թակարդ ու խաբեյութիւն: Ահա այս ճշմարտութիւնը, վոր մարքսիստական ուսմունքի ամենայնական բաղկացուցիչ մասն և կազմում, «մարքսիստ» Կաուցկիին չի ըմբռնել: Ահա այս—արմատական—հարցում Կաուցկիին բուրժուազիային «հաճելութիւններ» և հրամցնում, փոխանակ դիտական քննադատութեան յենթարկելու այն պայմանները, վորոնք ամեն բուրժուական ղեմոկրատիա դարձնում են ղեմոկրատիա հարուստներէ համար:

Նախ հիշեցնենք դիտնականագուլնս պարոն Կաուցկիուն Մարքսի և Ենգելսի այն թեորիական հայտարարութիւնները, վոր մեր դպիրը խայտառակ կերպով «մոռացել և» (ի հաճույս բուրժուազիայի), իսկ հետո բանը բացատրենք ամենից հանրամատչելի ձևով:

Վո՛չ միայն հնադարյանն ու Ֆեոդալականը, այլև՝ «արդի ներկայացուցչական պետութիւնը, այդ—կապիտալի կողմից վարձու աշխատանքը շահագործելու գործիք և» (Ենգելսը՝ պետութեան վերաբերյալ իր յերկում)<sup>5</sup>: «Բանի վոր պետութիւնը սոսկ անցողիկ հիմնարկ և, վորից հարկ և լինում ոգտվել պայքարելու, հեղափոխութեան մեջ, իր հակառակորդներին բռնի կերպով ճնշելու համար, ուստի զուտ անմտութիւն և ազատ ժողովրդական պետութեան մասին խոսելը՝ քանի դեռ պրոլետարիատը կարիք ունի պետութեան, նա դրա կարիքն ունի վո՛չ թե ազատութեան շահերի տեսակետից, այլ իր հակառակորդներին ճնշելու շահերի տեսակետից, իսկ յերբ հնարավոր և դառնում խոսել ազատութեան մասին, այն ժամանակ պետութիւնը, վորպես այդպիսին, դադարում և գոյութիւն ունենալուց» (Ենգելսը՝

1875 թ. 28. III. Բերելին դրած նամակում)<sup>6</sup>: «Պետութիւնը վոչ այլ ինչ և, բայց յեթե մեքենա՝ ճնշելու համար մեկ դասակարգը

ժյուսի կողմից, և դեմոկրատական հանրապետութեան մեջ ամենեւին ել վոչ պակաս, քան միապետութեան մեջ» (Ենդեւսը՝ Մարքսի «Քաղաքացիական պատերազմ»-ի առաջարանում)։ Ընդհանուր ընտրական իրավունքը «բանվոր դասակարգի հասունութեան ցուցանիչն է։ Ավելին տալ նա չի կարող և յերբեք չի տա այժմյան պետութեան մեջ»\*) (Ենդեւսը՝ պետութեան վերաբերյալ իր յերկուս)։ Պարոն Կառլեկին արտասովոր տաղտկալիութեամբ ծամծրմում է այս դրույթի առաջին մասը, վորն ընդունելի չէ բուրժուազիայի համար։ Իսկ յերկրորդը, վոր մենք ընդդժեցինք և վորն ընդունելի չէ բուրժուազիայի համար, ունենաւ Կառլեկին յուր թիւնն և տալիս։

«Կոմունան պետք է լինի վոչ թե պառլամենտար, այլ աշխատող կորպորացիա, վորը միեւնույն ժամանակ թե՛ որենդիր է, թե՛ որենքներ կատարող... Փոխանակ յերեք կամ վեց տարին մեկ անգամ վորոշելու, թե տիրապետող դասակարգի վոր անդամը պետք է պառլամենտում ներկայացնի և ճնշի (Ver-und zertreten) ժողովրդին, վոխանակ այդ բանի, ընդհանուր ընտրական իրավունքը պետք է ծառայեր կոմունաների մեջ կազմակերպված ժողովրդին, վորդեպի նա իր ձեռնարկութեան համար դռներ բանվորներ, վերակացուներ, հաշվապահներ, ինչպես անհատական ընտրական իրավունքը յուրաքանչյուր դործատուի համար ծառայում է այդ նպատակին»։ (Մարքսը՝ փարիզի կոմունայի վերաբերյալ յերկուս—«Քաղաքաց. պատերազմը Գրան-սիայում»)։

Գիտնականապէս պարոն Կառլեկուն հիանալի կերպով հայտնի այս դրույթներէր կողմէր յուրաքանչյուրը խփում է նրա յերեսին, մերկացնում է նրա ամբողջ ունենդատութեանը։ Կառլեկու ամբողջ բրոշյուրում այս ճշմարտութեաններէ ըմբռնման նշույլն անգամ չկա։ Նրա բրոշյուրի ամբողջ բովանդակութեանը ծաղր է մարքսիզմի վերաբերմամբ։

Վերցրե՛ք արդի պետութեաններէ հիմնական որենքները, վերցրե՛ք այդ պետութեաններէ կառավարումը, վերցրե՛ք ժողովների կամ մամուլի ազատութեանը, վերցրե՛ք «քաղաքացիների համասարութեանն որենքի առաջ»,—և յուրաքանչյուր քայլափոխում դուք կտեսնեք բուրժուական դեմոկրատիայի կեղծավորութեանը, վոր լավ ծանոթ է յուրաքանչյուր ազնիւ ու դիտակից բանվորի։ Չկա վոչ մի, թեկուզ ամենադեմոկրատական պետութեան, վորտեղ սահմանադրութեաններէ մեջ չլինէին սողանցքներ կամ վերապահութեաններ, վորոնք բուրժուազիայի համար

\*) Ընդդժումը Լենինինն է։ Խմբ.։

ապահովում են բանվորները դեմ դորքեր շարժելու, պատերազմական դրուժյուն մտցնելու և այլնի հնարավորութունը՝ «կարգը խախտելու դեպքում», — իրականում՝ այն դեպքում, յերբ շահագործվող դասակարգը «խախտում է» իր ստրկական դրուժյունը և փորձեր է անում իրեն պահելու վոչ-ստրկաբար: Կաուց-կին անամոթաբար դեղադարձում է բուրժուական դեմոկրատիան, լուսթյան տալով, որինակ, այն, ինչ վոր գործադուլավոր բանվորները դեմ անում են ամենից ավելի դեմոկրատական և հանրապետական բուրժուաներն Ամերիկայում կամ Շվեյցարիայում:

Ո՛ր, իմաստուն և դիտնական Կաուցիին այդ մասին լու՛ում է: Նա, այդ դիտնականն ու քաղաքական գործիչը, չէ հասկանում, վոր այդ մասին լուելը ստորություն է: Նա գերադասում է բանվորներին պատմել մանկական հեքիաթներ, ինչպես, որինակ, այն, վոր դեմոկրատիա նշանակում է «փոքրամասնության պաշտպանություն»: Անհավատալի յե, բայց փա՛ստ է: Քրիստոսի ծննդից հետո 1918 թվականին, իմպերիալիստական սպանդի և ինտերնացիոնալիստական (այսինքն Ռենոդեյները և Լոնդոնների, Շալդեմանների և Կաուցիկների, Հենդերսոնների ու Ուեբերների և այլոց պես սոցիալիզմին ստորաբար չդավաճանած) փոքրամասնությունները՝ «աշխարհի բոլոր դեմոկրատիաներում» խեղդելու հինգերորդ տարում պարոն դիտնական Կաուցիին քաղցրիկ, քաղցրիկ ձայնով ներբողում է «փոքրամասնության պաշտպանությունը»: Ով ցանկանում է, կարող է այդ կարգավ Կաուցիու բրոշյուրի 15-րդ էջում: Իսկ 16-րդ էջում սույն դիտնական անհատը կպատմի ձեզ XVIII դարի՛ Անգլիայի վիդերի և տորիները մասին:

Ո՛ր, դիտնականություն: Ո՛ր, նրբին լաքեյություն բուրժուազիայի առաջ: Ո՛ր, կապիտալիստների առաջ փորսող տալու և նրանց կոշիկները լիզելու քաղաքակիրթ մաներա: Յեթե յես լինեյի Կրուպպ, կամ Շալդեման, կամ Կլեմանտ, կամ Ռենոդեյ, յես միլիոններ կվճարեյի պարոն Կաուցիուն, կպարզևատրեյի նրան Հուդայի համբուլքներով, կզովարանեյի նրան բանվորների առաջ, կհանձնարարեյի «սոցիալիզմի միասնականություն» այնքան «պատվելի» մարդկանց հետ, ինչպես Կաուցիին է: Բրոշյուրները գրել պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, պատմել XVIII դարի Անգլիայի վիդերի և տորիների մասին, հավատացնել, թե դեմոկրատիա նշանակում է «փոքրամասնության պաշտպանություն» և լուսթյան տալ Ամերիկայի «դեմոկրատական» հանրապետության մեջ ինտերնացիոնալիստների դեմ կազմակերպած

ջարդերը, — մի՞ թե այդ լաքեյական ծառայություններ չեն բուր-  
ժուադիային :

Գիտնական պարոն Կառուցիկին «մոռացել ե» — հավանորեն, —  
պատահաբար մոռացել ե — մի «մանրունք», այն ե՝ վոր բուր-  
ժուական դեմոկրատիայի տիրապետող կուսակցությունը փոքրա-  
մասնության պաշտպանություն տալիս ե միայն այլ բուրժուական  
կուսակցությանը, իսկ պրոլետարիատին ամեն մի լուրջ, խոր,  
արմատական հարցում «փոքրամասնության պաշտպանության» փո-  
խարեն բաժին են ընկնում պատերազմական զրությունները կամ  
ջարդերը: Վորքան ավելի յե գարգացած դեմոկրատիան, այնքան  
ավելի մոտ ե լինում ջարդին կամ ֆաղաֆաղիական պատերազմին՝  
բուրժուադիայի համար վտանգավոր ամեն մի ֆաղաֆաղիան խոր  
տարածայնության դեպքում: Բուրժուական դեմոկրատիայի այս  
«որենքը» դիտնական պարոն Կառուցիկին կարող եր դիտել հանրա-  
պետական Ֆրանսիայում՝ Դրեյֆուսի դործում, դեմոկրատական  
հանրապետություն Ամերիկայում՝ նեգրերին՝ և ինտերնացիոնա-  
լիտներին լինչի դատաստանի յենթարկելու մեջ, դեմոկրատա-  
կան Անգլիայում՝ Իռլանդիայի և Ուլստերի որինակում, Ռուսաս-  
տանի դեմոկրատական հանրապետության մեջ՝ ըողչեիկներին հա-  
լածելու և նրանց նկատմամբ 1917 թ. ապրիլին ջարդեր կազմա-  
կերպելու մեջ: Յես դիտմամբ որինակները վերցնում եմ վո՛չ մի-  
այն պատերազմի ժամանակից, այլ նմանապես նախապատերազ-  
մական, խաղաղ ժամանակից: Քաղցրալուծն պարոն Կառուցիկուն  
հաճելի յե աչք փակել XX դարի այս փաստերի հանդեպ ու դրա  
փոխարեն բանվորներին պատմել զարմանալի նոր, խիստ հե-  
տաքրքրական, արտասովոր ուսանելի, անասելի կարևոր բաներ  
XVIII դարի վիդերի և տորիների մասին<sup>9</sup>:

Վերցրե՛ք բուրժուական պառլամենտը: Սրդյոք կարելի՞ յե  
յենթադրել, վոր դիտնական Կառուցիկին յերբեք չի լսել այն մասին,  
թե բորսան ու բանկիրները այնքան ավելի յեն յենթարկում իրենց  
բուրժուական պառլամենտները, վորքան ավելի ուժեղ ե զարդա-  
ցած դեմոկրատիան: Սրանից չի հետևում, թե չպետք ե ողտա-  
գործել բուրժուական պառլամենտաբիզմը ( և բողչեիկներն այն-  
պիսի հաջողությամբ ազտագործեցին այն, ինչպես հաղիվ թե ող-  
տագործած լիներ աշխարհում վորեւե այլ կուսակցություն, վոր-  
բովհետև 1912—1914 թվականներին մենք 4-րդ Դումայում նվա-  
ճեցինք ամբողջ բանվորական կուրիան): Բայց սրանից հետևում  
ե, վոր միայն լիբերալը կարող ե մոռանալ բուրժուական պառլա-  
մենտաբիզմի պատմական սահմանափակությունն ու պայմանա-

կանուք-յունը, ինչպես այդ մասին մոռանում ե կառուցկին: Ճընջ-  
 լած մասսաները յուրաքանչյուր քայլափոխում ամենադեմոկրա-  
 տական բուրժուական պետութեան մեջ հանդիպում են աղաղա-  
 կող հակասութեան, վոր գոյութիւն ունի կապիտալիստներէ «դե-  
 մոկրատիայի» կողմից աղղարարվող ձևական հավասարութեան  
 և հազարավոր փաստական սահմանափակումներէ ու բարդու-  
 թիւններէ\*) միջև, վորոնք պրոլետարներին դարձնում են վաք-  
 ան ստրուկներ: Հենց այդ հակասութիւնն է բաց անում մասսա-  
 ների աչքը կապիտալիզմի ներկայացման, ստահողութեան, կեղ-  
 ծավորութեան նկատմամբ: Հենց ա՛յդ հակասութիւնն են շա-  
 բունակ մերկացնում սոցիալիզմի ազիտատորներն ու պրոպագան-  
 դիստները մասսաների առաջ, վորպեսզի նրանց նախապատրաս-  
 տեն հեղափոխութեան: Իսկ յերբ սկսվեց հեղափոխութիւններէ  
 դարագլուխը, այն ժամանակ կառուցկին կռնակը\*\*) դարձ-  
 րեց նրան ու սկսեց ներքողել մեռնող բուրժուական դեմոկրա-  
 տիայի հրաշալիքները:

Պրոլետարական դեմոկրատիան, վորի ձևերից մեկը Սորհըր-  
 դային իշխանութիւնն է, դեմոկրատիային տվեց աշխարհումս  
 չտեսնված զարգացում ու ընդլայնում բնակչութեան հենց վիթ-  
 խարի մեծամասնութեան՝ շահագործվողներէ և աշխատավորներէ  
 համար: Ամբողջ գրքույկ դրել դեմոկրատիայի մասին, ինչպես  
 այդ արել ե կառուցկին, վոր յերկու եջում խոսում ե դիկտատու-  
 րայի մասին և տասնյակ եջերում «մաքուր դեմոկրատիայի մա-  
 սին»—ու չնկատել այդ, նշանակում ե լիբերալորեն բանը բոլո-  
 րովին խեղաթիւրել:

Վերցրե՛ք արտաքին քաղաքականութիւնը: Վոչ մի՛ ամենա-  
 դեմոկրատական՝ բուրժուական յերկրում այն չի կատարվում բա-  
 ցահայտ կերպով: Ամենուրեք մասսաներին խարում են, դեմոկրա-  
 տական Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Ամերիկայում, Անդլիա-  
 յում հարյուրապատիկ ավելի լայն ու նրբին ձևով, քան թե ուրիշ  
 յերկիրներում: Սորհըրդային իշխանութիւնը հեղափոխականորեն  
 պոկեց արտաքին քաղաքականութեան գաղտնիքի թղը: Կառուցկին  
 այդ չի նկատել, նա լուում ե այդ մասին, թեև հափշտակողական  
 պատերազմներէ և «ազդեցութեան շրջանների բաժանման վերա-  
 բերյալ» (այսինքն աշխարհն ավազակ-կապիտալիստներէ կողմից  
 բաժանելու վերաբերյալ) գաղտնի պայմանագրերի դարաշրջանում

\*) Ձեռագրում՝ «նկումներէ»: Խմբ.:

\*\*) 1918 թ. հրատ. մեջ՝ «յերեսը»: Խմբ.:

այդ ունի հիմնական (կարգինալ) նշանակութիւն, վորովհետեւ  
գերանից ե կախված խաղաղության հարցը, տասնյակ միլիոնավոր  
մարդկանց կյանքի ու մահվան հարցը:

Վերջրէ՛ք պետութեան կերտումը: Կառուցիւն կառոււմ ե «ման-  
րունքից» մինչ այն աստիճան, վոր նշում ե, թե ընտրութիւն-  
ները «վոչ-ուղղակի» յեն (խորհրդային սահմանադրութեան մեջ),  
բայց բանի եյութիւնը չի տեսնում: Նա չի նկատում պետական  
ապարատի, պետական մեքենայի դասակարգային եյութիւնը:  
Բուրժուական դեմոկրատիայի մեջ կապիտալիստները հաղաբա-  
վոր արարքներով, —վորոնք այնքան ավելի ճարպկորեն են կա-  
տարվում ու հավաստի կերպով ներգործող են, վորքան ավելի  
յե դարգացած «մաքուր» դեմոկրատիան, —վանում են մասսանե-  
րին կառավարման մասնակցելուց, ժողովների ու մամուլի ազա-  
տութիւնից ե այլն: Խորհրդային իշխանութիւնն առաջինն ե աշ-  
խարհում (խիկապես ասած, յերկրորդը, վորովհետեւ այդ նույնը  
սկսել եր անել Փարիզի Կոմունան), վոր դեպի կառավարման  
գործն ե գրավում մասսաներին, հենց շահագործվող մասսանե-  
րին: Աշխատավոր մասսաների համար հաղաբաւոր ցանկապատե-  
րով ցանկապատված ե մասնակցութիւնը բուրժուական պառլա-  
մենտում (վորը յերբեք չի լուծում բուրժուական դեմոկրատիայի  
լրջագույն հարցերը. դրանք լուծում ե բորսան, բանկերը), ե  
բանվորները հիանալի կերպով դիտեն ե զգում են, տեսնում ու  
չոչափում են, վոր բուրժուական պառլամենտը ոտար հաստատու-  
թիւն ե, բուրժուակիայի կողմից պրոլետարներին մնշելու գոր-  
ծիք ե, թշնամական դասակարգի, շահագործողական փոքրա-  
մասնութեան հաստատութիւն ե:

Խորհուրդները—հենց աշխատավոր ե շահագործվող մասսա-  
ների անմիջական կազմակերպութիւնն ե, վորը, ամեն կերպ,  
վորքան վոր կարելի յե, հեշտացնում ե նրանց համար պետու-  
թիւնը սեփական ուժերով կերտելու ե այն կառավարելու հնա-  
րավորութիւնը: Ընդամին հենց աշխատավորների ե շահագործ-  
վողների ամանգարդը, քաղաքային պրոլետարիատը, այն առա-  
վելութիւնն ե ստանում, վոր նա ամենալավագույն կերպով ե մի-  
ավորված խոշոր ձեռնարկութիւնների կողմից, —նրա համար ա-  
մենից հեշտ ե ընտրել ու հետեւել ընտրութիւններին: Խորհրդային  
կազմակերպութիւնը ավտոմատիկ կերպով հեշտացնում ե բոլոր  
աշխատավորների ե շահագործվողների միավորումը նրանց աման-  
գարդի, պրոլետարիատի շուրջը: Բուրժուական հին ապարատը—  
չինովնիկութիւնը, հարստութեան, բուրժուական կրթութեան,

կապերի և այլ արտոնութիւնները (այս փաստական արտոնութիւններն այնքան ավելի բազմազան են, վորքան ավելի յեզարգացած բուրժուական ղեմոկրատիան), — այդ բոլորը խորհրդային կաղմակերպութեան պարազայում վերանում է: Մամուլի ազատութիւնը դադարում է կեղծավորութիւն լինելուց, վորովհետեւ տպարաններն ու թուղթը խլվում են բուրժուազիայից: Այդ նույնը կատարվում է լաւադուչն շենքերի, սլալասների, առանձնատների (ОСОБИЯК), կալվածատիրական տների վերաբերմամբ: Խորհրդային իշխանութիւնը շատ ու շատ հազարավոր այդ լաւադուչն շենքերը մեկին խլեց շահագործողներից և այդպիսով մասսաների համար ժողովների իրավունքը դարձրեց միլիոն անդամ ավելի «դեմոկրատիկ», — ժողովների այն իրավունքը, առանց վորի ղեմոկրատիան խաբէյութիւն է: Վոչ լոկալ, վոչ-տեղային խորհուրդների վոչ-ուղղակի ընտրութիւնները հեշտացնում են խորհուրդների համադումարները, ամբողջ ապարատը դարձնում են ավելի եփան, շարժուն, բանվորների և գյուղացիների համար ավելի մատչելի այնպիսի մի ժամանակաշրջանում, յերբ կյանքը յետում է և պահանջվում է հնարավորութիւն ունենալ առանձնապես արագ կերպով հետ կանչելու տեղական պատգամավորին կամ ուղարկելու նրան խորհուրդների ընդհանուր համադումարը:

Պրոլետարական ղեմոկրատիան միլիոն անգամ ավելի ղեմոկրատիկ է ամեն մի բուրժուական ղեմոկրատիայից, — Խորհրդային իշխանութիւնը միլիոնավոր անգամ ավելի ղեմոկրատիկ է ամենաղեմոկրատական բուրժուական հանրապետութիւնից:

Այդ միայն կարող էր չնկատել կամ բուրժուազիայի գիտակից սպասավորը, կամ այն մարդը, վոր քաղաքականապես բոլորովին մեռած է, բուրժուական վոչոտ դրքերի հետեից չի տեսնում կենդանի կյանքը, մինչև ուղն ու ծուծը տողորված է բուրժուական ղեմոկրատական նախապաշարմունքներով և դրանով իրեն որեկտիվորեն դարձնում է բուրժուազիայի լաքեյր:

Այդ կարող էր չնկատել միայն այնպիսի մարդը, վորն ընդունակ չէ հարցը դնելու ֆնշված դասակարգերի տեսակետից:

Բուրժուական ամենից ղեմոկրատական յերկիրներէ շարքում կա՞ որդյոք աշխարհումս դոնե մեկ յերկիր, վորտեղ միջին, մասսայական բանվորը, միջին, մասսայական բարալը կամ գյուղական կիսապրոլետարն առհասարակ (այսինքն ճնշված մասսայի, բնակչութեան հսկայական մեծամասնութեան ներկայացուցիչը) գեթ մոտավորապես վայելեր լաւադուչն շենքերում ժողովներ առնելու այնպիսի ազատութիւն, իր դադափարների արտահայտու-

Թյան համար, իր շահերի պաշտպանության համար խոշորագույն տպարաններ և թղթի լափաղույն պահեստներ ունենալու այնպիսի ազատություն, պետության կառավարման և պետության «կերտման» համար հենց իր դասակարգի մարդկանց առաջադրելու այնպիսի ազատություն, ինչպես խորհրդային Ռուսաստանում :

Մտածելն անզամ ծիծաղելի յե, թե պարոն Կառլեկին վորեւ յերկրում կկարողանա հազար իրազեկ բանվորի ու բատրակի մեջ դանել զեթ մեկին, վորը տարակույս ունենա այս հարցի պատասխանի վերաբերմամբ: Բնազդորեն, բուրժուական թերթերից լսելով ճշմարտության խոստովանությունների պատասխիկներ, ամբողջ աշխարհի բանվորները համակրում են Խորհրդային Հանրապետությանը հենց այն պատճառով, վոր նրա մեջ տեսնում են պրոլետարական ղեմնորատիա, դեմոկրատիա չխվարնելի կամար և վոչ թե ղեմնորատիա հարուստների համար, վորպիսին իրոք հանդիսանում ե ամեն մի, նույնիսկ ամենալափաղույն, բուրժուական ղեմնորատիան:

Մեզ կառավարում են (և մեր պետությունը «կերտում են») բուրժուական չինովնիկները, բուրժուական պառլամենտարները, բուրժուական դատավորները: Ահա այն պարզ, ակներև, անվիճելի ճշմարտությունը, վոր իրենց կյանքի փորձով դիտեն, վոր ամեն որ զլում են ու շոշափում բոլոր բուրժուական յերկիրներում, այդ թվում նաև ամենաղեմնորատական յերկիրներում, ճնշված դասակարգերին պատկանող տասնյակ ու հարյուրավոր միլիոն մարդիկ:

Իսկ Ռուսաստանում բոլորովին ջարդել են չինովնիկական ապարատը, քար քարի վրա չեն թողել այդ ապարատում, վոնքել են բոլոր հին դատավորներին, ցրել են բուրժուական պառլամենտը—և այլև են շատ ավելի մատչելի ներկայացուցչություն հենց բանվորներին ու զյուզացիներին, նրանց խորհուրդներով են փոխարինել չինովնիկներին, կամ նրանց խորհուրդներին յենթակա յեն դարձրել չինովնիկներին, նրանց խորհուրդները դարձրել են դատավորներ ընտրողներ: Այս միակ փաստը բավական ե, վորպեսզի բոլոր ճնշված դասակարգերն ընդունեն, վոր Խորհրդային իշխանությունը, այսինքն պրոլետարիատի դիկտատուրայի տվյալ ձևը, միլիոն անգամ ավելի ղեմնորատական ե, քան թե բուրժուական ամենաղեմնորատական հանրապետությունը:

Կառլեկին չի հասկանում այս, ամեն մի բանվորի համար հասկանալի և ակներև, ճշմարտությունը, վորովհետև նա «մոռացել ե», «ապաստվորել ե» (разучился) դնելու այն հարցը, թե

դեմոկրատիա վճռի դասակարգի համար : Նա դատում է «մաքուր» (այսինքն անդասակարգային, թե արտադասակարգային) դեմոկրատիայի տեսակետից : Նա Շեյլդի նման է փաստարկում . «մի ֆունտ միս», ուրիշ վոչինչ : Բոլոր քաղաքացիները հավասարութուն—այլապես չկա դեմոկրատիա :

Հարկադրված ենք գիտնական Կառլցկուն, «մարքսիստ» և «ոսցիալիստ» Կառլցկուն հարց տալ .

արդյոք կարող է հավասարութուն լինել շահագործվողի և շահագործողի միջև :

Այս հրեշալոր, այս անհավատալի բան է, վոր հարկ է լինում ինտերնացիոնալիզմի դադափարային առաջնորդի դիրքը քննելիս այսպիսի հարց դնել : Բայց մի բանի վոր ձեռնարկել ես, տար մինչև վերջը : Հանձն ես առել գրելու Կառլցկու մասին, — պարզաբանիք գիտնական մարդուն, թե ինչու չէ կարող հավասարութուն լինել շահագործողի և շահագործվողի միջև :

## ԿԱՐՈՂ Ե ԱՐԴՅՈՔ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂԻ ՅԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ՄԵՋԵՎ

**Կ**առլցկին հետևյալ կերպ է դատում .

(1) «Շահագործողները միշտ կազմել են բնակչության վոչ մեծ փոքրամասնութունը միայն» (Կառլցկու գրքուկի 14-րդ եջ) :

Այս անվիճելի ճշմարտութուն է : Այս ճշմարտութունից յեկնելով՝ ի՞նչպես պետք է դատել : Կարելի չէ դատել մարքսիստորեն, սոցիալիստորեն . այդ պարադոքսում պետք է վորպես հիմք վերցնել շահագործվողների վերաբերմունքը դեպի շահագործողները : Կարելի չէ դատել լիբերալորեն, բուրժուական—դեմոկրատականորեն . այդ պարադոքսում պետք է վորպես հիմք վերցնել մեծամասնության վերաբերմունքը դեպի փոքրամասնութունը :

Յեթե մարքսիստորեն դատելու լինենք, ապա հարկ կլինի ասելու . շահագործողներն անխուսափելիորեն պետութունը (իսկ խոտքը դեմոկրատիայի մասին է, այսինքն պետության ձևերից մեկի) դարձնում են իրենց զասակարգի, շահագործողների տիրապետության գործիք՝ շահագործվողների նկատմամբ : Այդ պատճառով էլ դեմոկրատական պետութունը, քանի դեռ կան շահագործվողներ ի մեծամասնության նկատմամբ տիրապետող շահագործողներ, անխուսափելիորեն կլինի դեմոկրատիա շահագործողների համար : Շահագործվողների պետութունը պետք է արմա-

տապես տարբերվի այդպիսի պետութիւնից, պետք է լինի դեմոկրատիա շահագործվողներէ համար և շահագործողներին մեղքէն լքել, իսկ դասակարգի ճնշումը նշանակում է այդ դասակարգի անհավասարութիւն, նրան հանելը «դեմոկրատիայից»:

Յեթի լիբերալորեն դատենք, այս հարկ կլինի ասելու. մեծամասնութիւնը վճռում է, փոքրամասնութիւնը հնազանդվում: Չհնազանդվողներին պատժում են: Ահա բոլորը: Առհասարակ պետութեան, մասնավորապես «մաքուր դեմոկրատիայի» վորեւէ դասակարգային բնույթի մասին հարկ չկա դատելու, — այդ՝ դործին չի վերաբերում, վորովհետև մեծամասնութիւնը՝ մեծամասնութիւն է, իսկ փոքրամասնութիւնը՝ փոքրամասնութիւն: Մի ֆունտ միսը՝ մի ֆունտ միս է, և պրծավ՝ դնաց:

Կառուցիկն հենց այդպես է դատում.

(2) «Այդ ե՞նչ պատճառներով է, վոր պրոլետարիատի տիրապետութիւնը պետք է ընդունի և անհրաժեշտաբար ընդունի այնպիսի ձև, վորն անհամատեղելի յէ դեմոկրատիայի հետ» (եջ 21): Հեռուում է այն բանի պարզաբանումը, վոր պրոլետարիատն իր կողմն ունի մեծամասնութիւն, խիստ հանդամանորեն և խիստ բազմաբառ պարզաբանումը՝ մեջբերելով Մարքսից ցիտատ և Փարիզի Կոմունայի ձայների թվերը: Յեղբակացութիւն. «Այն ուժիմը, վոր այնքան ուժեղ արմատացած է մասսաների մեջ, ամենախորք առիթն անգամ չունի վրտնձգութիւն կատարելու դեմոկրատիայի դեմ: Միշտ չէ, վոր այն կկարողանա յոլա դնալ առանց բռնութեան, այն դեպքերում, յերբ բռնութիւն է գործադրվում դեմոկրատիան ճնշելու համար: Բռնութեանը կարելի յէ պատասխանել միայն բռնութեամբ: Բայց այն ուժիմը, վորը դիտե, թէ մասսաներն իր կողմն են, բռնութիւնը կգործադրի միայն նրա համար, վորպեսզի պահպանի դեմոկրատիան և վոչ թէ նրա համար, վորպեսզի վռչնչացնի այն: Նա ուղղակի ինքնասպանութիւն կատարած կլինի, յեթէ կամենար վերացնել իր ամենահուսալի հիմքը, ընդհանուր ընտրական իրավունքը, հզոր բարոյական հեղինակութեան խոր աղբյուրը» (եջ 22):

Դուք տեսնում եք. Կառուցիկու փաստարկուժից չքացալ շահագործվողներէ վերաբերմունքը դեպի շահագործողները: Մնաց միայն մեծամասնութիւնն ընդհանրապես, փոքրամասնութիւնն ընդհանրապես, դեմոկրատիան ընդհանրապես, մեղ արդեն ծանոթ «մաքուր դեմոկրատիան»:

Նկատեցի՛ք, վոր այս ասվում է Փարիզի կոմունայի կապակցութեամբ: Ուստի ակնառու դարձնելու համար մեջ բերենք, թէ

ինչ էյին ասում զհիկատուրայի մասին Մարքոսն ու Ենդելսը Կոմունայի կապակցութեամբ<sup>10</sup> .

Մարքոս. «...Յեթն բանվորները բուրժուազիայի զհիկատուրայի տեղը զնում են իրենց հեղափոխական զհիկատուրան... վորպեսզի բուրժուազիայի զիմադրութիւնը ջախջախեն... բանվորները պետութեանը տալիս են հեղափոխական և անցողիկ ձև...» :

Ենդելս. «...Հաղթանակած» (հեղափոխութեան մեջ) «կուսակցութիւնն ըստ անհրաժեշտութեան հարկադրված և լինում իր տիրապետութիւնն իր ձեռքին սահել այն վախի միջոցով, վոր ներշնչում և ռեակցիոներներին նրա զենքը: Յեթն Փարիզի Կոմունան չհենպէր զինված ժողովրդի հեղինակութեան վրա՝ ընդդէմ բուրժուազիայի, մի՞թէ նա մեկ որից տալէլ կդիմանար: Արդյո՞ք իրավունք չունեն՞ք մենք, ընդհակառակը, հանդիմանելու Կոմունային, վոր նա չափազանց զիչ էր ուղտվում այդ հեղինակութիւնից»... :

Ենդելս. «...Քանի վոր պետութիւնը միայն անցողիկ հիմնարկ և, վորից հարկ և լինում ուղտվել կտալի, հեղափոխութեան ընթացքում, իր հակառակորդներին բռնութեամբ ճնշելու համար, ուստի խոսել ժողովրդական ազատ պետութեան մասին դուս անմատչելուն և. քանի դու պրոլետարիատը կարիք ունի պետութեան, նա դրա կարիքն ունի վո՞՞թէ ազատութեան շահերի համար, այլ իր հակառակորդներին ճնշելու համար, իսկ յերբ հնարավոր և դառնում խոսել ազատութեան մասին, այն ժամանակ պետութիւնը, վորպէս այդպիսին, դադարում և ղոյութիւն ունենալուց...» :

Կառուցիկ և Մարքոսի—Ենդելսի միջև այնպիսի տարածութիւնն է, ինչպէս յերկնքից—յերկիրը, ինչպէս լիբերալի և պրոլետարական հեղափոխականի միջև: Մաքուր դեմոկրատիան ու սպարդապէս «դեմոկրատիան», վորի մասին խոսում և Կառուցիկին, նույն «ազատ ժողովրդական պետութեան» վերապատումն և սուկ, այսինքն գուտ անմտութեամբ: Կառուցիկին կարիքնատային դիտանակահարույն հիմարի դիտանականութեամբ կամ 10-ամյա ազջկա անմեղութեամբ հարցնում և. ել ինչո՞ւ համար և հարկավոր դիկատատուրան, յեթէ մեծամասնութիւնն կա: Իսկ Մարքոսն ու Ենդելսը պարզաբանում են .

— Նրա համար, վորպեսզի ջախջախենք բուրժուազիայի զիմադրութիւնը,

— Նրա համար, վորպեսզի վախ ներշնչենք ռեակցիոներներին,

— Նրա համար, վորպեսզի զինված ժողովրդի հեղինակութիւնը սրահպանենք՝ ընդդէմ բուրժուազիայի,

— Նրա համար, վորպեսզի պրոլետարիատը կարողանա բռնի կերպով ճնշել իր հակառակորդներին:

Կառուցիկին չի հասկանում այս պարզաբանումները: Միբահարված լինելով դեմոկրատիայի «մաքրութեան» վրա, չտեսնելով

նրա բուրժուականութիւնը, նա «հետեոյականորեն» այն կարծիքին ե մնում, վոր մեծամասնութիւնը, քանի վոր մեծամասնութիւն ե, չպետք ե փոքրամասնութեան «դիմադրութիւնը ջախջախի», չպետք ե նրան «բռնի կերպով ճնշի», — բավական ե ճնշել դեմոկրատիայի խախտման դեպքերը: Միտահարված լինելով դեմոկրատիայի «մաքրութեան» վրա՝ կառուցելին անակնկալ կերպով կատարում ե այն ամենափոքրիկ սխալը, վոր միշտ գործում են բոլոր բուրժուական դեմոկրատները, այն ե՝ նա ձեւական (կապիտալիզմի որով մինչև ուղն ու ծուծը ստահող ու կեղծավոր) հավասարութիւնն ընդունում ե փաստականի՝ տեղ: Մանրո՛ւնք:

Շահագործողը չի կարող հավասար լինել շահագործվողին:

Այս ճշմարտութիւնը, վորքան ել կառուցու համար այդ տահաձ լինի, կաղմում ե սոցիալիզմի ամենաեյական բովանդակութիւնը:

Մյուս ճշմարտութիւնը՝ իրական, փաստական հավասարութիւն լինել չի կարող, քանի դեռ բոլորովին վոչնչացված չե մեկ դասակարգի կողմից մյուսին շահագործելու ամեն մի հնարավորութիւն:

Շահագործողներին մեկեն կարելի յե ջախջախել՝ կենտրոնում բռնկած հաջող ապստամբութեան կամ զորքի խռովութեան զեպջում: Բայց, թերևս բոլորովին հազվադուրտ ու հատուկ զեպքերի բացառութեամբ, շահագործողներին չի կարելի մեկեն վոչնչացնել: Չի կարելի մեկեն եքսպրոպրիացիայի յենթարկել քիչ թե շատ մեծ յերկրի բոլոր կալվածատերերին ու կապիտալիստներին: Այնուհետև, մենակ եքսպրոպրիացիան, վորպես իրավարանական կամ քաղաքական ակտ, ամենևին ել չի վճռում բանը, վորովհետև պետք ե փաստորեն հեռացնել կալվածատերերին ու կապիտալիստներին, փաստորեն վախարհնել նրանց՝ Փարբիկաների ե կարվածքների ալլ, բանվորական, կառավարչութեամբ: Չի կարող հավասարութիւն լինել շահագործողների ե շահագործվողների միջև, քանի վոր շահագործողները յերկար սերունդների ընթացքում աչքի յե ընկել թե՛ կրթութեամբ, թե՛ հարուստ կյանքի պայմաններով, թե սովորքներով (НАВЫКИ), մինչդեռ շահագործվողների մասսան նույնիսկ ամենաառաջավոր ե ամենից դեմոկրատական բուրժուական հանրապետութիւններում ծեծկված ե, խավար, տգետ, ահարեկված, բաժան-բաժան արված: Շահագործողները հեղաշրջումից հետո յերկար ժամանակ անխուսափելիորեն պահպանում են մի շարք հակայական փաստա-

կան առաջելու թյուններ. նրանց մոտ մնում է փողը (փողը մեկն է վոչնչացնել չի կարելի), վորոչ շարժական, հաճախ խոշոր, գույք, մնում են կապերը, կազմակերպման ու կառավարման սովորքները, կառավարման բոլոր «զաղտնիքների» (սովորույթներ, յեղանակների, միջոցների, հնարավորությունների) գլխուկները, մնում է ավելի բարձր կրթությունը, մոտիկությունը ակնհիշապես բարձր (բուրժուականորեն ասլոզ ու մտածող) անձնակազմին, մնում է անչափելիորեն ավելի մեծ սովորքը ուղմական դործում (այդ շատ կարևոր է) և այլն, և այլն:

Յեթե շահագործողները ջախջախված են միայն մի յերկրում—իսկ այդ, իհարկե, տիպիկ դեպք է, վորովհետև հարվադեպ բացառություն է միաժամանակ հեղափոխությունը մի շարք յերկիրներում—ասլա նրանք շահագործվողներին այնուամենայնիվ ուժեղ են մնում, վորովհետև շահագործողների միջազգային կապերը հսկայական են: Վոր շահագործվողների կամ ամենից սկսած զարդացած միջին-գյուղացիական, արհեստավորական և այլ նման մասսաների մի մասը դնում է և ընդունակ է գնալու շահագործողների հետևից, այդ մինչև այժմ ցույց են տվել քուլտուր հեղափոխությունները, այդ թվում Կոմունան (վորովհետև Վերսալի դորքերի մեջ կային նաև սլոլետարներ, վորպիսի հանդամանքի մասին «մոռացել է» դիտնականագույն Կաուցկին):

Իրերի այս դրության սլարազայում յենթադրել, թե շատ թեքիչ խոր ու լուրջ հեղափոխության ժամանակ հարցը վճռում է սլարգապես մեծամասնության վերաբերմունքը դեպի փոքրամասնությունը, այդ—մեծագույն բթամտություն է, սովորական լիբերալի ամենահիմար նախասլաշարմունք, այդ նշանակում է մասսաներին խաբել, նրանցից սլատմական ակներև ճամարությունը թաղցնել: Այդ սլատմական ճամարությունն այն է, վոր ամեն մի խոր հեղափոխության ժամանակ շահագործվողների նկատմամբ մի շարք տարիների ընթացքում փաստական խոշոր առաջելություններ սհասանող շահագործողների յերկարատև, համառ, հուսահատ գիմադրությունը կանոն է հանդիսանում: Յերբեք,—այլ կերպ, բայց յեթե քաղցրիկ հիմարուկ Կաուցկու քաղցրիկ յերևակայության մեջ—շահագործողները չեն յենթարկիլի շահագործվողների մեծամասնության վճռին, չփորձելով իրենց առաջելությունը վերջին, հուսահատ ճակատամարտում, մի շարք ճակատամարտերում:

Անցումը կալիտալիզմից դեպի կոմունիզմ մի ամբողջ պատ-

մական դարաշրջան է: Քանի այն չի ավարտվել, շահագործվող-ներին մեջ անխուսափելիորեն մնում է ռեստավրացիայի հույսը, իսկ այդ հույսը ռեստավրացիայի փորձերի յե վերածվում: Յեվ առաջին լուրջ պարտութունից հետո, տապալված շահագործողները, վորոնք չեյին սպասում իրենց տապալմանը, չեյին հավատում դրան, մտքով անգամ չեյին անցկացնում այդ, տասնապատկված յեռանդով, կատաղի կրքով, հարյուրապատիկ աճած ատելությամբ նեովում են դեպի մարտ՝ խլված «դրախտը» վերադարձնելու համար, իրենց ընտանիքներին համար, վորոնք այնքան քաղցր եյին սսլրում, և վորոնց այժմ «ռամիկ խուժանը» դատապարտում է տնտեսական քայքայման ու թշվառության (կամ «հասարակ» աշխատանքի...): Իսկ շահագործող-կապիտալիստներին հեռեկց ձգվում է մանր-բուրժուազիայի լայն մասսան, վորին մասին բոլոր յերկիրներին տասնյակ տարիների պատմական փորձը վկայում է, վոր նա յերեւրվում է ու տատանվում, այսոք դնում է սրողեստարիատի հեռեկց, վաղը վախենում է հեղաշրջման դժվարութուններից, խուճապի մեջ և ընկնում բանվորների առաջին պարտութունից կամ կիսապարտութունից, նյարդայնանում է, պատեպատ է դիպչում, նվնվում, բանակից բանակ է փախստակում... Ինչպես մեր մենչեիկներն ու եսերները:

Յեվ իրերի այսպիսի դրության պարալալում, կատաղի, սըրված պատերազմի դարաշրջանում, յերբ պատմության կողմից որվա հերթին յեն դրվում դարավոր և հաղարամյա արտոնութունների լինել-չլինելու հարցերը,— խոսել՝ մեծամասնության ու վորքրամասնության մասին, մաքուր դեմոկրատիայի մասին, դիկտատուրայի անհարկավորության մասին, շահագործողի և շահագործվողի հավասարության մասին: Ի՞նչ անսահման բխամտութուն, վորպիսի անհո՛ւն ֆիլիստերութուն և հարկավոր դրա համար:

Բայց 1871-1914 թվականների, համեմատաբար «խաղաղ» կապիտալիզմի, տասնամյակները ոպորտունիզմին հարմարվող սոցիալիստական կուսակցութունների մեջ կուտակել են ֆիլիստերության, նեղճակատության, ռենեզատության ավդյան ախոռներ...

\* \* \*

Ընթերցողը նկատեց, հավանորեն, վոր կաուցիկին՝ նրա գըրքից վերը բերված ցիտատում խոսում է ընդհանուր ընտրական իրավունքի դեմ վորոնճութուն անելու մասին (այդ իրավուն-

քըն անվանելով—իսկազդեցում նկատենք—հզոր բարոյական հեղինակութեան խոր արդյուք, մինչդեռ Ենգելը նույն Փարիզի Կոմունայի առթիվ և դիկտատուրայի նույն հարցի առթիվ խոսում և բուրժուազայի դեմ ղինված ժողովրդի հեղինակութեան մասին. բնորոշ և համեմատել Ֆրիխտերի և հեղափոխականի հայացքը «հեղինակութեան» վերաբերյալ...):

Պետք է նկատել, վոր շահագործողներին ընտրական իրավունքից զրկելու հարցը գուտ-նուսական հարց է և վոչ թե առհասարակ պրոլետարիատի դիկտատուրայի հարց: Յեթե Կաուցկին առանց կեղծավորելու իր բրոշյուրը վերնագրեր՝ «Ռոչևիկները դեմ», այն ժամանակ վերնագրերը կհամապատասխաներ բրոշյուրի բովանդակութեանը և այն ժամանակ Կաուցկին իրավունք կունենար ուղղակի խոսելու ընտրական իրավունքի մասին: Բայց Կաուցկին կամեցել է հանդես գալ նախ և առաջ վորպես «Թեոքետիկ»: Նա իր բրոշյուրը վերնագրել է՝ «Պրոլետարիատի դիկտատուրա» ընդհանրապես: Նա խորհուրդների մասին և Ռուսաստանի մասին հատկապես խոսում է բրոշյուրի յերկրորդ մասում միայն, սկսած նրա 5-րդ պարագրաֆից: Իսկ առաջին մասում (վորից յես վերցրել եմ ցիտատը) խոսքը վերաբերում է դեմոկրատիային և դիկտատուրային ընդհանրապես: Խոսք բաց անելով ընտրական իրավունքի մասին՝ Կաուցկին մատնեց իրեն, վորպես բոչևիկները դեմ բանավիճող, վորը գոռշի արժեք չի տալիս քեոքիային: Վորովհետև թեոքիան, այսինքն դատողութունը դեմոկրատիայի և դիկտատուրայի ընդհանուր (և վոչ թե ազգային-հատուկ) դասակարգային հիմքերի մասին, պետք է խոսի վո՛չ թե ընտրական իրավունքի պես հատուկ հարցի մասին, այլ ընդհանուր հարցի մասին, այն է՝ կարո՞ղ է արդյոք դեմոկրատիան պահպանվել նաև հարուստների համար, շահագործողների համար՝ շահագործողներին տապալելու և նըրանց պետութունը շահագործվողների պետութեամբ փոխարինելու պատմական ժամանակաշրջանում:

Այսպես և միայն այսպես կարող է հարցը դնել թեոքետիկը:

Մենք դիտենք Կոմունայի որինակը, մենք գիտենք մարքսիզմի հիմնադիրների բոլոր դատողութունները նրա կապակցութեամբ և նրա առթիվ: Այդ նյութի հիման վրա յես քննութեան եմ առել, որինակ, դեմոկրատիայի և դիկտատուրայի հարցը իմ «Պետութուն և հեղափոխութուն» բրոշյուրում, վորը գրված է մինչև հոկտեմբերյան հեղաշրջումը: Ընտրական իրավունքի սահ-

մանախաղման մասին յես չեմ ասել վոչ մի խոսք: Յեւ այժմ պետք ե ասել, վոր ընտրական իրավունքի սահմանափակման հարցը դիկտատուրայի ազդային—հատուկ և վոչ թե ընդհանուր հարցըն ե: Ընտրական իրավունքի սահմանափակման հարցին պետք ե մոտենալ՝ ուսումնասիրելով ուստական հեղափոխութեան հատուկ պայմանները, նրա զարգացման հատուկ ուղին: Հենց այդ եւ կարվի հետագա շարադրանքի մեջ: Բայց սխալ կլիներ նախապես յերաշխափորել, թե Յեւրոպայում դալիք պրոլետարական հեղափոխութեանն են անպատճառ կտան՝ բոլորը կամ մեծամասնութունը՝ ընտրական իրավունքի սահմանափակում—բուրժուազիայի համար: Դա կարող ե այդպես լինել: Պատերազմից հետո և ուստական հեղափոխութեան փորձից հետո այդ, հավանորեն, այդպես կլինի, բայց այդ պարտադիր չե դիկտատուրայի իրականացման համար, այդ—դիկտատուրայի տրամաբանական հասկացողութեան անհրաժեշտ հատկանիշը չե, այդ չի մտնում դիկտատուրայի սլատմական և դասակարգային հասկացողութեան մեջ վորպես անհրաժեշտ պայման:

Դիկտատուրայի անհրաժեշտ հատկանիշ, սլարտադիր պայման հանդիսանում ե շահագործողների, վորպես դասակարգի, բռնի ճնշումը և, հետևաբար, այդ դասակարգի նկատմամբ «մաքուր դեմոկրատիայի», այսինքն հավասարութեան և ազատութեան, խախտումը:

Այսպես և միայն այսպես կարող ե դրվել հարցը թեորիպես: Յեւ այն բանով, վոր կաուցիկին հարցն այդպես չդրեց, նա ազացուցեց, վոր բոլշևիկները դեմ հանդես ե դալիս վոչ թե վորպես թեորետիկ, այլ վորպես ոպորտունիստներ և բուրժուազիայի սիկոֆանտ:

Թե ինչ յերկիրներում, այս կամ այն կապիտալիզմի ազդային վորպիսի առանձնահատկութեանն են պարադայում կկիրառվի (բացառապես կամ առավելապես) դեմոկրատիայի այս կամ այն սահմանափակումը, խախտումը շահագործողների համար, դա—այս կամ այն կապիտալիզմի, այս կամ այն հեղափոխութեան ազդային առանձնահատկութեանն են հարց ե: Թեորիական հարցն այլ կերպ ե դրված, այդ հարցը դրված ե այսպես. արդյոք հնարավոր ե պրոլետարիատի դիկտատուրան, առանց խախտելու դեմոկրատիան շահագործողների դասակարգի վերաբերմամբ:

Կաուցիկին դանց ե արել հենց այդ, թեորիպես միակ կա-

ըևոր և էյական հարցը: Կառուցկին ամեն տեսակ ցիտատներ և բերել Մարքսից ու Ենդելսից, բացի այն ցիտատներից, վորոնք վերաբերում են տվյալ հարցին և վորոնք վերը բերված են իմ կողմից:

Կառուցկին խոսել է ամեն բանի մասին, ինչ վոր կամենաք, ամեն բանի մասին, ինչ վոր ընդունելի չէ լիբերալներին և բուրժուական դեմոկրատներին համար, ինչ վոր դուրս չէ դալլա նրանց գաղափարների շրջանից,— բացի գլխավորից, բացի այն բանից, վոր պրոլետարիատը չի կարող հաղթել՝ չջախջախելով բուրժուազիայի դիմադրությունը, բռնի կերպով չննջելով իր հակառակորդներին, և վոր այնտեղ, վորտեղ կա «բանի ճնշում», վորտեղ չկա «ազատութիւն», իհարկե, չկա դեմոկրատիա:

Կառուցկին այդ չհասկացաւ:

\* \* \*

Անցնենք ուսական հեղափոխութեան վորձին և այն տարածայնութեանը Սովիետների ու Սահմանադիր Ժողովի միջև, վորը տարավ դեպի Ուչրեդիլայի ցրումն ու բուրժուազիային ընտրական իրավունքից դրկելը:

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԶՆԱՄԱՐՁԱԿՎԵՆ ԴԱՌՆԱԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհուրդները պրոլետարական դիկտատուրայի ուսական ձևն են: Յեթե պրոլետարիատի դիկտատուրայի մասին աշխատութիւնը գրող թեորետիկ-մարքսիստն իրոք ուսումնասիրեք այդ յերևույթը (և վոչ թե կրկներ մանր-բուրժուական վորդերն ընդդէմ դիկտատուրայի, ինչպես Կառուցկին է անում, ալիւլի բարձրաձայն վերերդելով մենչևիկյան մելոդիաները), ապա այդպիսի թեորետիկը կտար դիկտատուրայի ընդհանուր սահմանումը, և ապա քննութեան կառնեք նրա հատուկ, ազգային ձևը՝ խորհուրդները, կտար նրանց վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ձևերից մեկի քննադատութիւնը:

Հասկանալի չէ, վոր այն բանից հետո, յերբ Կառուցկին լիբերալ «մշակման» յենթարկեց Մարքսի ուսմունքը դիկտատուրայի մասին, նրանից չի կարելի սպասել վորևէ լուրջ բան: Բայց վերին աստիճանի բնորոշ է դիտել, թե նա ինչպես է մոտեցել

այն հարցին, թե ինչ են խորհուրդները և ինչպես է գլուխ հանել այդ հարցից:

Նորհուրդները, գրում է նա, մտաբերելով նրանց ծագումը 1905 թվականին, ստեղծեցին «պրոլետարական կազմակերպություն աշխարհի ձև, վորը բոլորից ամենահամայնապարփակն էր (umfassendste), վորովհետև այն ընդգրկում էր բոլոր վարձուրանվորներին» (էջ 31): 1905 թվականին նրանք տեղական կորպորացիաներ էլին միայն, 1917 թվականին դարձան համառուսաստանյան միավորում:

«Այժմ արդեն,—չարունակում է Կաուցկին,—խորհրդային կազմակերպությունն ունի իր հետևում մեծ և փառապանծ պատմություն: Իսկ նրան սպասում է և՛ ավելի հզորը և այն էլ վրչ միայն Ռուսաստանում: Ամենուրեք պարզվում է, վոր այն հակադասական ուժերի հանդեպ, վորոնց տնորինությունը տնտեսական և քաղաքական տեսակետից պատկանում է ֆինանսական կապիտալին, պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի նախկին մեթոդները բավական չեն» (versagen.—այս դերմանական արտահայտությունը մի փոքր ավելի ուժեղ է, քան «բավական չեն», և մի փոքր ավելի թույլ, քան «անզոր են»): Դրանցից հրաժարվել չի կարելի, դրանք անհրաժեշտ են նորժալ ժամանակների համար, բայց ժամանակ առ ժամանակ դրանց առաջ ծառանում են աշխարհի խնդիրներ, վորոնց կատարումը դրանց ուժերից վեր է, աշխարհի խնդիրներ, յերբ հաջողություն խոստանում է բանվոր դասակարգի ուժի բոլոր քաղաքական ու տնտեսական զենքերի միացումը միայն» (էջ 32):

Սրան հետևում է դատողություն մասսայական գործադուլի մասին և այն մասին, թե «արհեստակցական միությունների բյուրոկրատիան», վորը նույնքան անհրաժեշտ է, վորքան արհեստակցական միությունները, «պիտանի չե ղեկավարելու աշխարհի հզոր մասսայական ճակատամարտերը, վորոնք ավելի ու ավելի յեն դառնում ժամանակի նշանակ...»:

«... Այսպիսով,—յեղրափակում է Կաուցկին,—խորհրդային կազմակերպությունը մեր ժամանակի կարևորագույն յերևույթներից մեկն է: Այդ կազմակերպությունը խոստանում է վճռողական նշանակություն ձեռք բերել կապիտալի և աշխատանքի միջև մղվող այն մեծ վճռական ճակատամարտերում, վորոնց ընդառաջ ենք դնում մենք:

Բայց իրավունք ունե՞ք արդյոք խորհուրդներից պահանջելու էլ ավելին: Բուլճիկները, վորոնք 1917 թվականի նոյեմբերյան (նոր տոմարով, այսինքն մեր հաշվով՝ հոկտեմբերյան) հեղափոխությունից հետո ձախ սոցիալիստ-հեղափոխականների հետ միասին մեծամասնություն ձեռք բերին Բանդորսկան Գատաճավորների ուսանական Նորհուրդներում, Սահմանադիր Ժողովի ցրտմից հետո ձեռնարկեցին մինչ այդ մեկ դասակարգի մարտական կազմակերպություն հանդիսացող Նորհուրդը դարձնելու պետական կազմակերպություն: Նրանք վրչնայցրին ղեժոկրատիան, վոր ուսս Ժողովուրդը նշանել էր

մարտյան (նոր տոմարով, իսկ մեր հաշվով՝ փետրվարյան) Հեղափոխությամբ: Դրան համապատասխան՝ բուլղեիկները դադարեցին իրենց անվանել սոցիալ-դեմոկրատներ: Նրանք իրենց անվանում են կոմունիստներ» (Էջ 33, ընդգծումը Կառուցիչուն է):

Ով գիտե ուուսական մենչևիկյան դրականությունը, նա իսկույն տեսնում է, թե ինչպես Կառուցիկն ստրկորեն արտագրում է Մարտովին, Աքսելրոզին, Շտեյնին և Ընկ.: Հենց «ստրկորեն», վորովհետև Կառուցիկն ծիծաղելի լինելու չափ խեղաթյուրում է փաստերը ը հաճույս մենչևիկյան նախապաշարմունքների: Կառուցիկն չի հոգացել, որինակ, տեղեկանալու բեռլինյան Շտեյնի կամ ստոկհոլմյան Աքսելրոզի նման իր ինֆորմատորներից, թե յերբ են բարձրացվել բուլղեիկներին կոմունիստներ վերանվանելու և խորհուրդների, վորպես պետական կազմակերպությունների, նշանակության հարցերը: Յեթե Կառուցիկն ստանար այդ հասարակ տեղեկանքը, նա չեր գրի ծիծաղ հարուցող իր սողերը, վորովհետև այդ յերկու հարցերն ել բուլղեիկների կողմից բարձրացվեցին 1917 Բ-վականի ապրիլին, որինակ, 1917 թվականի ապրիլի 4-ի իմ «թեզիսներում»\*), այսինքն 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ (ել չեմ խոսում Ուչրեդիլկայի ցրման մասին, վորը տեղի ունեցավ 1918 թվականի հունվարի 5-ին):

Բայց Կառուցիու դատողությունը, վոր յես ամբողջությամբ մեջ բերի, խորհուրդների ամբողջ հարցի մեխն է: Մեխը հենց այն է — թե պե՞տք է արդյոք խորհուրդները ձգտեն դառնալու պետական կազմակերպություններ (բուլղեիկները 1917 թվականի ապրիլին լողունդ առաջագրեցին՝ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին», և 1917 թվականի նույն ապրիլին բուլղեիկներին կուսակցության կոնֆերենցիայում բուլղեիկները հայտարարեցին, վոր չեն բավարարվում բուրժուական պառլամենտար հանրապետությամբ, այլ պահանջում են կոմունայի տիպի կամ խորհուրդների տիպի բանվորա-դյուրացիական հանրապետություն), Բ-ի խորհուրդները չպետք է ձգտեն դրան, չպետք է իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը, չպետք է դառնան պետական կազմակերպություններ, այլ պետք է մնան մեկ «դասակարգի» «մարտական կազմակերպություններ» (ինչպես արտահայտվում եր Մարտովը, իր անմեղ ցանկությամբ վայելուչ կերպով գեղադարձելով այն փաստը, վոր խորհուրդները մենչևիկյան դե-

\*) Տե՛ս Յերկերի XX հատ., էջ 87—90: Խմբ.:

կաՎարությամբ յեղել են բանվորներին բուրժուազիային յեմ-  
քարկելու գործիք) :

Կառուցկին սարկորեն կրկնել է Մարտովի խոսքերը, բուլճեիկ-  
ների և մենչեիկների թեորիական վեճից վերջնելով կոորներ և  
այդ կոորները, առանց քննադատության ու առանց իմաստի,  
փոխադրելով ընդհանուր թեորիական, համա-յեվրոպական հողի  
վրա : Դուրս յեկավ այնպիսի շիլափլափ, վորը յուրաքանչյուր  
դիտակից ոռու բանվորի հոմերական ծիծաղը կհարուցեր, յեթե  
այդ բանվորը ծանոթանար Կառուցկու մեջբերված դատողու-  
թյանը :

Նույնպիսի ծիծաղով կղիմալորեն Կառուցկուն բոլոր յեվրո-  
պական բանվորները (բացի մի բուն թունդ սոցիալ-իմպերիա-  
լիստներէց), յերբ մենք բացատրենք նրանց, թե այստեղ բանն  
ինչումն է :

Կառուցկին արջի ծառայություն մատուցեց Մարտովին, ար-  
տասովոր ակնառությամբ աբսուրդի հասցնելով Մարտովի սխա-  
լը : Հիրավի, տեսե՛ք, թե ինչ է դուրս յեկել ըստ Կառուցկու :

Սորհուրդներն ընդգրկում են բոլոր վարձու բանվորներին :  
Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական պայքարի նախկին  
մեթոդները, Ֆինանսական կապիտալի դեմ բալական չեն : Սոր-  
հուրդներին մեծ դեր է սպասում վոչ միայն Ռուսաստանում :  
Նրանք վճռողական դեր են խաղալու Յեվրոպայում կապիտալի  
և աշխատանքի միջև լինելիք վճռողական մեծ ճակատամարտե-  
րում : Այսպես է ասում Կառուցկին :

Հիանալի յե : «Կապիտալի և աշխատանքի միջև լինելիք վրճ-  
ողական ճակատամարտերը» չե՞ն վճռում արդյոք այն հարցը,  
թե այդ դասակարգերից վո՞րն է տիրանալու պետական իշխա-  
նությանը :

Սկի ել չե : Աստված չանի :

«Վճռողական ճակատամարտերում բոլոր վարձու բանվոր-  
ներին ընդգրկող միությունները չպիտք է դառնան պիտակաճ  
կազմակերպություն :

Իսկ ի՞նչ է պետությունը :

Պետությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի դասակարգի կող-  
մից մյուսին ճնշելու մեքենա :

Այսպես ուրեմն, ճնշված դասակարգը, բոլոր աշխատավոր-  
ների և շահագործվողների ավանդարդը ժամանակակից հաս-  
րակության մեջ, պետք է ձգտի «կապիտալի և աշխատանքի միջև

լինելիք վճռողական ճակատամարտերին», բայց չպե՛տք է ձեռք տա այն մեքենային, վորի միջոցով կապիտալը ճնշում է աշխատանքը:—Չպե՛տք է ջարդի այլ մեքենան:— Չպե՛տք է իր համայնապարփակ կազմակերպությունն ռզտագործի շահագործողներին ֆնշելու համար:

Հոյակա՛ւ պ է, հիանալի՛, սրբոն կառուցիլ: «Մենք» ընդունում ենք դասակարգային կռիվը,— ինչպես այն ընդունում են բոլոր լիբերալները, այսինքն առանց բուրժուազիայի տասալման...

Ահա թե վորտեղ է ակներև դառնում կառուցիլու լիակատար հրաժարումը թե՛ մարքսիզմից, թե՛ սոցիալիզմից: Այդ, փաստորեն, անցումն է բուրժուազիայի կողմը, վորը պատրաստ է թույլ տալու ինչ վոր կամենաք, բացի իր կողմից ճնշված դասակարգի կազմակերպությունները պետական կազմակերպությունների վերածելուց: Այստեղ կառուցիլին արդեն վոչ մի կերպ չի կարող փրկել ամեն ինչ հաշտեցնելու, բոլոր խոր հակասություններից ֆրազներով գլուխն աղատելու իր դիրքը:

Կա՛մ կառուցիլին հրաժարվում է պետական լիխանության ամեն մի անցումից բանվոր դասակարգի ձեռքը, կա՛մ նա թույլատրելի է համարում, վոր բանվոր դասակարգն իր ձեռքը վերցնի հին, բուրժուական, պետական մեքենան, բայց վոչ մի կերպ թույլատրելի չի համարում, վոր նա կտորի, փշրի այն, փոխարինելով նորով, պրոլետարականով: Կառուցիլու դատողությունն այսպես «մեկնաբանես» ու «սլարդաբանես», թե՛ այնպես, յերկու դեպքումն էլ խղումը մարքսիզմից ու բուրժուազիայի կողմն անցնելն ակներև է:

Դեռ ես «Կոմունիստական մանիֆեստ»-ում Մարքսը, խոսելով այն մասին, թե ինչ պետություն է հարկավոր հաղթանակած բանվոր դասակարգին, գրում եր. «Պետություն, այսինքն վորպես տիրապետող դասակարգ կազմակերպված պրոլետարիատ»: Այժմ հանդես է դալիս մի մարդ այն հավակնությամբ, թե ինքը շարունակում է մարքսիստ լինել, ու հայտարարում է, վոր զլխովին կազմակերպված և կապիտալիզմի դեմ «վճռողական պայքար» մղող պրոլետարիատը իր դասակարգային կազմակերպությունը չպետք է դարձնի պետական կազմակերպութուն: «Դեպի պետությունը ցուցաբերվող սնտրիապաշտական հավատ», վորի մասին 1891 թվին Ենդելսը գրում եր<sup>11</sup>, թե այն «անցել է Գերմանիայում բուրժուազիայի և նույն իսկ շատ բանվորներ

ընդհանուր դիտակցութեան մեջ» , — ահա թե ինչ յերևան բերեց այստեղ Կառուցիկին : — Պայքարեցե՛ք, բանավորներ , — «համաձայնում ե՞ք մեր ֆիլիստերը (դրան «համաձայն ե՞ք բուրժուան ել, քանի վոր, միևնույն ե, բանավորները պայքարում են, և հարկ ե լինում մտածել միայն այն մասին, թե ինչպես կոտորել նրանց սրի ծայրը) , — պայքարեցե՛ք, բայց չհամարձակվե՛ք հաղթել : Մի՛ խորտակեք բուրժուազիայի պետական մեքենան, բուրժուական «պետական կազմակերպութեան» տեղը մի՛ դնեք պրոլետարական «պետական կազմակերպութեանը» :

Ով լրջորեն բաժանում ե մարքսիստական այն հայացքը, վոր պետութեանը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի դասակարգի կողմից մյուսին ճնշելու մեքենա, ով փոքրիշատե լրջորեն մտածել ե այդ ճշմարտութեան մասին, նա յերբեք չեր կարող այն տեղը հասնել, վորպէսզի այնպիսի անտոութեան ասեր, թե ֆինանսական կապիտալին հաղթելու ընդունակ պրոլետարական կազմակերպութեանները չպետք ե պետական կազմակերպութեանների վերածալին : Հենց այս կետում յերևան յեկալ մանր բուրժուան, վորի համար պետութեանն «այնուամենայնիւ» մի ինչ-վոր արտադասակարգային կամ վերադասակարգային բան ե : Իսկպես, ել ինչո՞ւ պետք ե պրոլետարիատին՝ «մեկ դասակարգի», թույլատրվեր վճռողական պատերազմ մղելու ընդդէմ կապիտալի, վորն իշխում ե վո՛չ միայն պրոլետարիատի վրա, այլև ամբողջ ժողովրդի վրա, ամբողջ մանր-բուրժուազիայի վրա, ամբողջ գյուղացիութեան վրա, — բայց պրոլետարիատին՝ «մեկ դասակարգի», չպետք ե թույլատրվի իր կազմակերպութեանը պետական դարձնել : Այն պատճառով, վոր մանր բուրժուան վախենում ե դասակարգային կռիւց և չի հասցնում այն մինչև վերջը, մինչև ամենագլխավորը :

Կառուցիկն բոլորովին խճճվել ե ու դիտովին մատնել իրեն : Նկատեցե՛ք. նա ինքն ընդունեց, վոր Յեվրոպան ընդառաջ ե գնում կապիտալի և աշխատանքի վճռողական ճակատամարտերին և վոր պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական պայքարի նախկին մեթոդները բավական չեն : Իսկ այդ մեթոդների ելութեան ել բուրժուական դեմոկրատիայի ոգտազործումն եր չենց : Հետևաբար...

Կառուցիկն վախեցել ե մինչև վերջը մտածել, թե դբանից ինչ ե հետևում :

... Հետևաբար, միայն ուեակցիոները, բանավոր դասակարգի

Թշնամին, բուրժուազիայի սպասաւորը կարող եւ այժմ տալիակա-  
մտորեն նկարել բուրժուական դեմոկրատիայի հրաշալիքները և  
դատարկարաննէ մաքուր դեմոկրատիայի մասին, յերեսը դարձ-  
րած դեպի իր դարն ապրած անցյալը: Բուրժուական դեմոկրա-  
տիան առաջադիմական եր միջնադարականութեան նկատմամբ,  
և այն ողտադործել հարկաւոր եր: Բայց այժմ այդ դեմոկրա-  
տիան բավական չե բանւոր դասակարգի համար: Այժմ պետք ե  
նայել վո՛չ թե դեպի հետ, այլ դեպի առաջ, բուրժուական դեմո-  
կրատիան պրոլետարականով փոխարինելու համար: Յեւ յեթե  
պրոլետարական հեղափոխութեան նախապատրաստական աշխա-  
տանքը, պրոլետարական բանակի ուսուցումն ու կազմումը հնա-  
րավոր ելին (և անհրաժեշտ) բուրժուական-դեմոկրատական պե-  
տութեան շրջանակներում, ապա, քանի վոր բանը հասել ե «վրճ-  
ուղական ճակատամարտերին», պրոլետարիատին այդ շրջանակ-  
ներով սահմանափակել՝ նշանակում ե պրոլետարական դործի  
դաւաճան լինել, նշանակում ե ռենեդատ լինել:

Կառուցիկն առանձնապես ծիծաղելի կերպով նեղն ե ընկել,  
վորովհետեւ կրկնել ե Մարտովի փաստարկը, չնկատելով, վոր  
Մարտովի մոտ այդ փաստարկը հենւում ե մյո՛ւս փաստարկի  
վրա, վոր Կառուցիկն չունի: Մարտովն ասում ե (իսկ Կառուցիկն  
նրա հետեւց կրկնում), թե Ռուսաստանը դեռ չի հասունացել  
սոցիալիզմի համար, վորից բնականաբար հետեւում ե, թե՛ Խոր-  
հուրդները պայքարի որդաններից պետական կազմակերպու-  
թյուններ դարձնելը դեռևս վաղաժամ ե (կարգա՛ պատահաժամ  
ե մենչևիկյան առաջնորդների ոգնութեամբ Խորհուրդները դարձ-  
նել բանւորներին իմպերիալիստական բուրժուազիային յենթար-  
կելու որդաններ): Իսկ Կառուցիկն չի կարող ուղղակի ասել, թե  
Յեւրոպան չի հասունացել սոցիալիզմի համար: Կառուցիկն  
դրում եր 1909 թվականին<sup>2</sup>, յերբ նա դեռևս ռենեդատ չեր,  
թե այժմ չի կարելի վախենալ վաղաժամ հեղափոխութեանից,  
թե դաւաճան կլիներ այն մարդը, ով պարտութեան յերկյուղից  
կհրաժարվեր հեղափոխութեանից: Ուղղակի հրաժարվել դրա-  
նից Կառուցիկն սիրտ չի անում: Յեւ ստացվում ե այնպիսի ան-  
մտութեան, վորը մինչև վերջը մերկացնում ե մանր բուրժուա-  
զիայի ամբողջ հիմարութեանն ու վախկոտութեանը. մի կողմից,  
Յեւրոպան հասուն ե սոցիալիզմի համար և դնում ե դեպի այն  
վճուղական ճակատամարտերը, վոր ունենալու յե աշխատանքը  
կապիտալի դեմ, — իսկ մյուս կողմից, մարտական կազմակեր-

պությունը, (այսինքն ձևավորվող, աճող, պայքարի մեջ ամբաստանվող կազմակերպությունը), ճնշվածների ավանդարդ և կազմակերպիչ, առաջնորդ հանդիսացող պրոլետարիատի կազմակերպությունը չի՝ կարելի դարձնել պետական կազմակերպություն:

\* \* \*

Այն դադարը, թե Խորհուրդները վերպես մարտական կազմակերպություն անհրաժեշտ են, բայց չպետք է դառնան պետական կազմակերպություններ, պրակտիկ-քաղաքական տեսակետից ե՛լ ավելի անսահմանորեն անհեթեթ է, քան թեորիապես: Նույնիսկ խաղաղ ժամանակ, յերբ հեղափոխական սրտուսցիա չկա, բանվորների մասսայական պայքարը կապիտալիստներին դեմ, որինակ, մասսայական դործադուլները, յերկու կողմից ել առաջացնում են սոսկալի դադարում, պայքարի չափազանց կրճատություն, բուրժուազիայի մշտական մատնանշումն այն մասին, վոր նա մնում է և կամենում է մնալ «տան տեր» և այլն: Իսկ հեղափոխություն ժամանակ, յերբ քաղաքական կյանքը յետում է, այնպիսի մի կազմակերպություն, ինչպես խորհուրդներն են, վորն ընդգրկում է արդյունաբերության բոլոր ճյուղերի բոլոր բանվորներին, հետո բոլոր զինվորներին ու դյուզական ամբողջ աշխատավոր և չքավորազույն բնակչությունը, — այդպիսի կազմակերպություն ինքնըստինքյան, պայքարի ընթացքով, դրոհի և հակահարվածի պարզ «տրամաբանություն» անխուսափելիորեն հանդում է հարցի շեշտակի դրման: Միջակա դիրք բռնելու, պրոլետարիատն ու բուրժուազիան «հաշտեցնելու» փորձը բթամություն է և վողորմելի կրախի յե յենթարկվում. այդպիսի վախճան ունեցավ Ռուսաստանում Մարտովի և մյուս մենչևիկների քարոզը, այդպես ել անխուսափելիորեն կլինի Գերմանիայում և մյուս յերկիրներում, յեթե Խորհուրդները վորեն չափով լայն դարգանան, կարողանան միավորվել և ամբանալ: Ասել խորհուրդներին՝ պայքարեցե՛ք, բայց ինքներդ ձեր ձեռք մի՛ վերցնեք ամբողջ պետական իշխանությունը, մի՛ դառնաք պետական կազմակերպություններ, — նշանակում է քարոզել դասակարգերի համադործակցություն և պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև «սոցիալական խաղաղություն»: Մտածելն անգամ ծիծաղելի յե, թե կատաղի պայքարում այդպիսի դիրքը կարող է հասցնել վորեն այլ բանի, բացի խայտառակ կրախից: Յերկու աթոռի միջև նստեցնել կառուց-

կու հասլիտենական ճակատագիրն է: Նա այնպես է ձևացնում,<sup>\*)</sup> թե թեորիայում վոչ մի բանով համաձայն չէ ուղորտունխտանբին, իսկ իրապես նա բոլոր ելախան հարցերում (այսինքն՝ հեղափոխութեանը վերաբերող բոլոր հարցերում) համաձայն է նրանց հետ պրակտիկայում:

## ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադիր Ժողովի և բուլճեիկներին կողմից այն ցրելու հարցը կաուցիու ամբողջ բրոչյուրի մեխն է: Նա շարունակ վերադառնում է այդ հարցին: II Բնաերնացիոնալի զաղալարային աուաջնորդի ամբողջ յերկը լնիլ-լեցուն է աղնարկներով այն մասին, թե ինչպես բուլճեիկները «վոչնչացրին դեմոկրատիան» (տե՛ս վերը՝ կաուցիուց բերված մի ցիտատը): Իրոք, հետաքրքրական և կարևոր մի հարց, վրոյվհետե բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի հարաբերակցությունն այստեղ գարծնակաւնրին ծաուացալ հեղափոխութեան աուաջ: Տեսնենք, ուրեմն, թե ինչպես է այս հարցը քննարկում մեր «թեորետիկ-մարքսիստը»:

Նա ցիտատներ է բերում իմ դրած և 1917 թ. XII. 26-ի «Правда»-յում հրապարակված «թեզիսներ Սահմանադիր Ժողովի մասին»-ից<sup>\*)</sup>:

Թ՛վում է, թե կաուցիու կողմից դործին լուրջ, դուլումենտները ձեռքին մոտենալու վերաբերյալ ալեիլ լալ ապացուցց չի ել կարելի սպասել: Բայց նայեցե՛ք, թե ի ն չ պ է ս է ցիտատ բերում կաուցիին: Նա չի աուում, վոր այդ թեորիաները 19 էլին, նա չի աուում, վոր նրանցում դրված եր ինչպես սովորական բուրժուական հանրապետութեան՝ Սահմանադիր Ժողովով հանդերձ ու Սորհուրդների Հանրապետութեան հարաբերակցութեան, այնպես ել մեր հեղափոխութեան մեջ Սահմանադիր Ժողովի ու պրոլետարիատի դիկտատուրայի տարաձայնութեան պատմութեան հարցը: կաուցիին դանց է անում այդ բոլորը և պարզապես հայտարարում է բնթերցողին, թե «աուանձնապես կարևոր են դրանցից (այդ թեզիսներից) յերկուը, մեկը—վոր Եսերները Սահմանադիր Ժողովի բնարություններից հետո, բայց մինչև նրա դուժարվելը, պաուակալուել են (կաուցիին լուում է այն մասին, վոր

\*) Տե՛ս Յերկերի XXII հատոր, էջ 163—168: Խմբ.:

այդ հինդերորդ թեղիսն է), մյուսը — վոր Խորհուրդներէ հան-  
րապետութիւնն առհասարակ ավելի բարձր դեմոկրատական ձև  
է, քան Սահմանադիր ժողովը: (Կառուցիկն լուծւեալ է այն մասին,  
վոր այդ — յերրորդ թեղիսն է):

Յեւ ահա միայն այս յերրորդ թեղիսից Կառուցիկն լրիւ  
բերում է վորպէս ցիտատ նրա մի փոքր մասը, այն է՝ հետևյալ  
դրույթը.

«Խորհուրդներէ Հանրապետութիւնը վո՛չ միայն դեմոկրա-  
տական հիմնարկներէ ավելի բարձր ձևն է (համեմատած ավորա-  
կան, բուրժուական հանրապետութեան հետ՝ նրա պակաս հան-  
դիսացող Սահմանադիր ժողովով հանդերձ), այլև միակ ձևն է,  
վորն ընդունակ է ապահովելու ամենից անհիմանդազին\*) ան-  
ցումը դեպի սոցիալիզմ» (Կառուցիկն բաց է թողնում «սովորա-  
կան» բառը և թեղիսի ներածական բառերը՝ «բուրժուական կար-  
գերից սոցիալիստական կարգերին անցնելու համար, պրոլետա-  
րիատի դիկտատուրայի համար»):

Մեջ բերելով այդ խոսքերը՝ Կառուցիկն հիանալի հեզնանքով  
բացականչում է:

«Միայն ցավալի յէ, վոր այդ յեղբայրացութեանը հասել են լոկ այն բա-  
նից հետո, յերբ դուրս է յեկել, վոր Սահմանադիր ժողովում փոքրամասնու-  
թիւն են կազմում: Առաջ վոչ վոք ավելի բուն կերպով Սահմանադիր ժողով  
չէր պահանջում, վորքան Լենինը»:

Տառացի այսպե՛ս է ստված Կառուցիկու դրքի 31-րդ եջում:

Չե՞ վոր սա ուղղակի գոհա՛ր է: Միայն բուրժուալիստի սի-  
կոֆանտը կարող է բանն այնպէս ստահող կերպով ներկայացնել,  
վոր ընթերցողն ստանա այն ապավորութիւնը, թէ իբր բուլչեիկ-  
ներէ բոլոր խոսակցութիւնները պետութեան ավելի բարձր տիպի  
մասին հերքութեամբ են, վորոնք լույս աշխարհ յեկան այն բա-  
նից հետո միայն, յերբ դուրս յեկաւ, վոր բուլչեիկները Սահմա-

\*) Ի միջի այլոց՝ այդ արտահայտութիւնը՝ «ամենից անհիմանդազին»  
անցումն, Կառուցիկն բազմիցս մեջ է բերում, ակներևաբար, հեզնելու փորձ  
անելով: Բայց վորովհետև այդ փորձն արվում է նպատակաւրեպ միջոցներով,  
ուստի Կառուցիկն մի քանի եջից հետո խարդախութիւն է անում և ցիտատը  
կեղծելով է մեջ բերում՝ «անհիմանդազին» անցումն: Իհարկէ, այդպիսի մի-  
ջոցներով հակառակորդին անմտութիւն վերադրելը դժվար չէ: Խարդախումն  
ոգնում է նույնպէս զանց անելու փաստարկն ըստ ելութեան, այն է՝ ամենից  
անհիմանդազին անցումը դեպի սոցիալիզմ հնարավոր է միայն այն դեպքում,  
յերբ չբաւորութիւնը զլիսովին կազմակերպված է (Խորհուրդներ) և յերբ  
դեմոկրատական իշխանութեան կենտրոնը (պրոլետարիատը) սփանդալում է այդ  
կազմակերպութեանը:

նադիր ժողովում փոքրամասնություն են կաղմում: Այսքան նողկալի սուտ ասել կարող եր միայն մի սրիկա, վորը վաճառվել է բուրժուակրային կամ, վոր բոլորովին միևնույնն է, վստահացել է Պ. Ա. Բրեյլովին և թաղցնում է իր ինֆորմատորներին:

Վորովհետև ամենքին հայտնի չէ, վոր յես իմ Ռուսաստան դալու առաջին որն ևեթ, 1917 թ. IV. 4-ին, հրապարակով կարգացի թեղիսներ, վորոնց մեջ հայտարարեցի բուրժուական պառլամենտար հանրապետությունից Կոմունայի տիպի պետության դերազանց լինելու մասին: Հետո յես այդ քանիցս հայտարարել եմ մամուլում, որինակ, քաղաքական կուսակցությունները մասին դրած բրոշյուրում\*), վորը թարգմանից անդլերեն և 1918 թ. հունվարին լույս տեսավ Ամերիկայում, Նյու-Յորքի «Evening Post\*\*» լրագրում: Բացի դրանից, բոլշևիկները կուսակցության կոնֆերենցիան 1917 թ. ապրիլի վերջերին բանաձև ընդունեց այն մասին, վոր պրոլետարական-դուրաղակա հանրապետությունը բարձր է բուրժուական պառլամենտար հանրապետությունից, վոր մեր կուսակցությունը վերջինով չի բավարարվի, վոր կուսակցության ծրագիրը պետք է համապատասխան կերպով փոփոխվի:

Դրանից հետո ի՞նչպես անվանենք Կառուցիու այդ արտառոց վարմունքը, յերբ նա հավատացնում է դերմանական ընթերցողներին, թե իբր յես բուն կերպով պահանջել եմ Սահմանադիր ժողովի գումարում և միայն այն բանից հետո, յերբ բոլշևիկները փոքրամասնություն մնացին նրանում, յես սկսեցի «նվազեցնել» Սահմանադիր ժողովի պատիվն ու արժանապատվությունը: Ինչո՞վ կարելի չէ ներել այդպիսի արտառոց վարմունքը\*\*\*): Նրանով, վոր Կառուցիին չի՞ իմացել փաստերը: Բայց այդ դեպքում ինչո՞ւ յեր նա ձեռնարկում դրանց մասին գրելու կամ ինչո՞ւ ՀՀայտարարեր աղնլարար, թե յես, Կառուցիկա, դրում եմ մենչևիկներ Ծտեյնի ու Պ. Ա. Բրեյլովի և Ընկ. հաղորդած տեղեկությունների հիման վրա: Կառուցիին ցանկանում է որբկատիլ լինելու հավակնությամբ քողարկել իրենց պարտության հետևանքով վերավորված մենչևիկներին սպասախորելու իր դերը:

Բայց որանք միայն ծաղիկներն են: Պտուղները հետո կլինեն:

\*) Տե՛ս Յերկերի XX հատոր, էջ 136—141: Խմբ.:

\*\*) «Յերկիտյան Փոստ»: Խմբ.:

\*\*\*) Իդեպ սասծ. նմանորինակ մենչևիկյան սուսթյուն շատ կա Կառուցիու բրոշյուրում: Դա—դազազած մենչևիկի պամֆլետ է:

Յենթադրենք, թե Կառուցկին չի ցանկացել կամ չի կարողացել (°°) իր ինֆորմատորներից ստանալ բուլչեիկյան բանաձևերի ու հայտարարութիւնների թարգմանութիւնն այն հարցի մասին, թե արդյոք նրանք բավարարվում են բուրժուական պառլամենտար դեմոկրատական հանրապետութեամբ: Յենթադրենք նույնիսկ այդ, թեև այդ անհավանական է: Բայց չե՞ վոր 1917 թ. XII. 26-ի իմ թեղիսները Կառուցկին ուղղակի հիշատակում է իր դրքի 30-րդ եջում:

Կառուցկին լիովին դիտե՞ այդ թեղիսները, թե դրանցից նա դիտե միայն այն, ինչ վոր նրա համար թարգմանել են Շտեյնները, Աքսելրոզները և Ընկ.: Կառուցկին ցիտատ է բերում յերրորդ թեղևից այն հիմնական հարցի մասին, թե մինչև Սահմանադիր ժողովի ընտրութիւններն արդյոք բուլչեիկները ղետակցում էին և ասում էին նրանք ժողովրդին, վոր Խորհուրդների հանրապետութիւնն ալեկի բարձր է բուրժուական հանրապետութիւնից: Բ ա յ ց Կ ա ու ը ց կ ի ն լ ո ու ը յ ա ն է տ ա լ ի ու 2 - ր դ ք ե գ ի ու ը :

Իսկ յերկրորդ թեղևն ասում է.

«Առաջադրելով Սահմանադիր ժողովի դամարման պահանջը՝ հեղափոխական սցիւալ-դեմոկրատիան 1917 թվի հեղափոխութեան հենց սկզբից քանիցս ընդգծել է, վար Խորհուրդների հանրապետությունը դեմոկրատիզմի ավելի բարձր ձև է, քան սովբակյան բուրժուական հանրապետությունը՝ Սահմանադիր ժողովով հանդերձ» (ընդգծումն իմն է):

Բուլչեիկներին անսկզբունք մարդիկ, «հեղափոխական ուղրտունիստներ» (այդ արտահայտութիւնը Կառուցկին իր դրքում ինչ-վոր անդ զործ է ածում՝ չեմ հիշում, թե ինչ կապակցութեամբ) ներկայացնելու համար պարոն Կառուցկին քազցրել է զերմանացի ընքերցողներին, վոր թեղիսներում ուղղակի հիշատակութիւն կա ք ա ն ի ց ս արված հայտարարութիւնների մասին:

Սրանք են այն մանր, չնչին ու արհամարհելի ձևերը, վոր բանեցնում է պարոն Կառուցկին: Նա քեռրիական հարցից այդ կերպ է խուսափել:

Ճի՞շտ է այդ, թե վոչ, վոր բուրժուական-դեմոկրատական պառլամենտար հանրապետութիւնն ավելի ցածր է կանդնած, քան Կոմունայի տիպի կամ խորհուրդների տիպի հանրապետութիւնը: Այդ է մեխը, իսկ Կառուցկին այդ զանց է արել: Այն ամենը, ինչ Մարքսը տվել է Փարիզի Կոմունայի վերլուծման մեջ, Կառուցկին «մոռացել է»: Նա մոռացել է նաև Շնդելսի նամակը

Բերելին, վոր դրված է 1875 թվի III. 28-ին և վորի մեջ առանձնապես ակնառու և դյուրըմբռնելի կերպով արտահայտված է Մարքսի նույն այդ միտքը՝ «Կոմունան արդեն պետութուն չէր բառիս բուն իմաստով»:

Ահա II Ինտերնացիոնալի ամենաականավոր թեորետիկը, վոր «Պրոլետարիատի գիկտատուրա»-յի մասին հատուկ բրոշյուրում, հատկապես խորհրդածելով Ռուսաստանի մասին, վորտեղ ուղղակի և քանիցս դրվել է ղեմոկիրատական-բուրժուական հանրապետութունից ավելի բարձր պետութւյան ձևի հարցը, լուծւթյան է տալիս այդ հարցը: Սա իրականում ինչո՞վ է տարբերվում բուրժուադիայի կողմն անցնելուց:

(Փակադժերում նկատենք, վոր այստեղ էլ Կաուցկին ռուսական մենչևիկներին պոչից է քարշ դալիս: Նրանց մեջ կան վորքան կամենաք այնպիսի մարդիկ, վորոնք գիտեն «բոլոր ցիտասները» Մարքսից ու Ենգելսից, բայց վոչ մի մենչևիկ 1917 թ. ապրիլից մինչև 1917 թ. հոկտեմբերը և 1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. հոկտեմբերը վոչ մի անգամ վորձ չարեց քննելու Կոմունայի տիպի պետութւյան հարցը: Պլեխանովն ևս զանց արեց այդ հարցը: Հավանորեն, հարկադրված էյին լռել):

Ինքնըստինքյան հասկանալի չէ, վոր Սահմանադիր ժողովիցրման մասին խոսել այնպիսի մարդկանց հետ, վորոնք իրենց սոցիալիստներ և մարքսիստներ են անվանում, բայց իրականում գլխավոր հարցում, Կոմունայի տիպի պետութւյան հարցում անցնում են բուրժուադիայի կողմը, կնշանակի մարդարեւը դջել խողերի առաջ: Բալական կլինի իբրև ներկա բրոշյուրի հավելված ամբողջությամբ տպադրել Սահմանադիր ժողովի վերաբերյալ իմ թեղիսները: Ընթերցողը կտեսնի զբանցից, վոր հարցը դրվել է 1917 թ. XII. 26-ին և՛ թեորիպես, և՛ պատմականորեն, և՛ դորձնականապես-քաղաքականորեն:

Յեթե Կաուցկին վորպես թեորետիկ բոլորովին հրաժարվել է մարքսիզմից, ապա նա կարող էր, վորպես պատմաբան, քննարկել Նորհուրդներին կողմից Սահմանադիր ժողովի դեմ մղած պայքարի հարցը: Կաուցկու շատ աշխատութւյուններից մենք գիտենք, վոր նա կարողանում էր մարքսիստական պատմաբան լինել, վոր նրա այդպիսի աշխատութւյունները կմնան վորպես պրոլետարիատի հաստատուն սեփականութուն, չնայած նրա հետագա ռենեզատութւյան: Բայց ավյալ հարցում Կաուցկին ճշմարտութունից յերես է դարձնում նաև վորպես պատմաբան, ան-

տեսում է հանրահայտ փաստերը, վարվում է սիկոֆանտի պես: Նա կամեւում է բոլջեիկներին ներկայացնել վորպես անսկզբունք մարդիկ, և նա պատմում է, թե բոլջեիկներն ինչպես էյին փորձում մեղմացնել կոնֆլիկտը Սահմանադիր ժողովի հետ՝ նախքան այն ցրելը: Այստեղ բացարձակապես չկա վորևէ վատ բան, այստեղ չկա մի այնպիսի բան, վորից մենք հրաժարվենք. թեզիսները յես տպագրում եմ ամբողջութամբ, և նրանց մեջ պարզից էլ պարզ ասված է. պարոնա՛յք տատանվող մանր բուրժուաներ, վոր ամուր նստել էք Սահմանադիր ժողովում, — կա՛մ հաշտվեցե՛ք պրոլետարական դիկտատուրայի հետ, կա՛մ մենք ձեզ «հեղափոխական ճանապարհով» կհաղթենք (18-րդ և 19-րդ թեզիսներ):

Իսկապես հեղափոխական պրոլետարիատը միշտ այսպես է վարվել և միշտ այսպես է վարվելու տատանվող մանր բուրժուան դիպի հետ:

Սահմանադիր ժողովի հարցում Կառուցիկն կանգնած է ձևական տեսակետի վրա: Իմ թեզիսներում պարզ և բազմիցս ասված է, վոր հեղափոխության շահերը բարձր են կանգնած Սահմանադիր ժողովի ձևական իրավունքներից (տե՛ս 16-րդ և 17-րդ թեզիսները): Չեւական-դեմոկրատական տեսակետը հենց բուրժուական դեմոկրատի տեսակետն է, վորը (այդ դեմոկրատը) չի ընդունում, վոր պրոլետարիատի և պրոլետարական դասակարգային կռիվի շահն այնքի բարձր է կանգնած: Կառուցիկն վորպես պատմաբան չէր կարող չընդունել, վոր բուրժուական պառլամենտները այս կամ այն դասակարգի որդաններն են: Բայց այժմ Կառուցիկուն հարկավոր յեղալ (հեղափոխությունից հրաժարվելու կեղտոտ դործի համար) մոռանալ մարքսիզմը, և Կառուցիկն չի դնում այն հարցը, թե Ռուսաստանում վո՞ր դասակարգի որդանն էր Սահմանադիր ժողովը: Կառուցիկն քննության չի առնում կոնկրետ իրադրությունը, նա ցանկություն չունի նայելու փաստերին, նա վոչ մի խոսք չի ասում դերմանական ընթերցողներին այն մասին, վոր թեզիսներում տրված է վո՛չ միայն բուրժուական դեմոկրատիայի սահմանափակության հարցի թեորիական լուսաբանությունը (№ № 1—3 թեզիսները), վո՛չ միայն այն կոնկրետ պայմանները, վորոնք վորոշեցին 1917 թ. հոկտեմբերի կեսի կուսակցական ցուցակների անհամապատասխանությունը 1917 թ. դեկտեմբերի իրականությանը (№ № 4—6 թեզիսները), այլև 1917 թ. հոկտեմբեր-դեկտեմբերի դասակարգային կռիվ և ֆաղափսխական պատերազմի պատմությունը (№ № 7—15 թեզիս-

ները) : Այդ կոնկրետ պատմութիւնից մենք յեղրակացութիւն արինք (№ 14 թեղիւրը) ; վոր «ամբողջ իշխանութիւնը Սահմանադիր Ժողովին» լողունդը իրականում դարձել է կազեաների և կալեդիւնյանների ու նրանց աջակիցների լողունդը :

Պատմարան Կառուցիկն չի նկատում այդ : Պատմարան Կառուցիկն յերբեք չի լսել, վոր ընդհանուր ընտրական, իրաւունքը տալիս է յերբեմն մանր-բուրժուական, յերբեմն ուսակցիոն և հակահեղափոխական պառլամենտներ : Պատմարան-մարքսիստ Կառուցիկն չի լսել, վոր մեկ բան է՝ ընտրութիւնները ձեւը, դեմոկրատիայի ձեւը, այլ բան է տվյալ հիմնարկի դասակարգային բովանդակութիւնը : Սահմանադիր Ժողովի դասակարգային բովանդակութիւնն այդ հարցն ուղղակի դրված և լուծված է իմ թեզիսներում : Հնարավոր է, վոր իմ լուծումը ճիշտ չէ : Մեզ համար վոչինչ այնքան ցանկալի չէր լինի, վորբան մեր վերլուծութիւն մարքսիստական քննադատութիւնն ուրիշի կողմից : Փոխանակ բոլորովին հիմար Քրադներ դրելու (դրանք շատ են Կառուցիկ մոտ) այն մասին, թե իբր ինչ-վոր մեկը խնդարում է բոլշևիզմի քննադատութիւնը, պետք է վոր Կառուցիկն ձեռնարկեր այդպիսի քննադատութիւն : Բայց բանն էլ հենց այն է, վոր նրա մոտ քննադատութիւն չկա : Նա նույնիսկ չի ել դնում, մի կողմից՝ Սորհուրդների և, մյուս կողմից՝ Սահմանադիր Ժողովի դասակարգային վերլուծութիւնն հարցը : Այդ պատճառով էլ հնարավորութեամբ չկա վիճելու, դիսկուսիա մղելու Կառուցիկու հետ, այլ մնում է միայն ցույց տալ ընթերցողին, թե ինչու չի կարելի Կառուցիկուն այլ կերպ անվանել, յեթէ վոչ ունեզատ :

Սորհուրդների տարածայնելը Սահմանադիր Ժողովի հետ ունի իր պատմութիւնը, վորը դանց անել չէր կարող նույնիսկ դասակարգային կռիւ տեսակետի վրա չկանդնած պատմաբանը : Կառուցիկն այդ վաստական պատմութիւնն էլ չի ցանկացել շրջափել : Կառուցիկն թաղցրել է դերմանական ընթերցողները այն հանրահայտ փաստը (վորն այժմ միայն չարաննդ մենչեխիկներն են թաղցնում), վոր Սորհուրդները մենչեխիկների տիրապետութիւնն ուրիւ էլ, այսինքն 1917 թվականի փետրվարի վերջից մինչև հոկտեմբերը, տարածայնում էին «համապետական» (այսինքն բուրժուական) հաստատութիւնների հետ : Կառուցիկն իսկապէս կանդնած է պրոլետարիատի և բուրժուազիայի հաշտեցման, համաձայնեցման, աշխատակցութիւնն տեսակետի վրա : վորբան էլ հրաժարի Կառուցիկն դրանից, բայց նրա այդպիսի տեսակետ մի

վաստ է, վոր հաստատւում է Կառուցիւ աւրոյժ բրոշյուրով: Պետք չէր ցրել Սահմանադիր Ժողովը, այդ հենց նշանակում է՝ սկսեք չէր մինչև վերջը հասցնել բուրժուազիայի դեմ ուղղված պայքարը, սկսեք չէր նրան տասպալել, պրոլետարիատը պետք է հաշտվեր բուրժուազիայի հետ:

Ապա ինչո՞ւ յե Կառուցիկն լուել այն մասին, վոր մենչեխի-նները 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր զբաղվում էին այդ քիչ պատվարեր զործով և վոչնչի չհասան: Յեթե հնարավոր էր հանդեսնել բուրժուազիան պրոլետարիատի հետ, ել ինչո՞ւ մենչեխիկներն որով հաշտեցումը չհաջողվեց, բուրժուազիան իրեն հեռու յեր պահում Սորհուրդներից, Սորհուրդները անվանւում էին (մենչեխիկների կողմից) «հեղափոխական դեմոկրատիա», իսկ բուրժուազիան՝ «ցենզային տարրեր»:

Կառուցիկն թագրել է դերմանական ընթերցողներից, վոր հենց մենչեխիկներն էին իրենց տիրապետութեան «գարաչըմանում» (1917 թ. II—X) հեղափոխական դեմոկրատիա անվանում Սորհուրդները, դրանով իսկ ճանաչելով նրանց դերազանց լինելը բոլոր այլ հիմնարկներից: Միայն այս վաստը թագրելու շնորհիվ պատմարան Կառուցիւ մոտ այնպես դուրս յեկավ, վոր Սորհուրդներն տարածայնելը բուրժուազիայի հետ չունի իր պատմութեանը, վոր այդ տարածայնութեանը յերևան յեկավ մեկեն, հանկարծակի, առանց պատճառի, բոլչեխիկների վատ վարքի պատճառով: Իսկ իրականում մենչեխիկյան համաձայնողականութեան, պրոլետարիատը բուրժուազիայի հետ հաշտեցնելու ճիգերի հետց ալիլի քան կիսամյա փորձը (հեղափոխութեան համար այդ հսկայական ժամանակամիջոց է) համոզեց ժողովրդին այդ ճիգերի անպտուղ լինելը և պրոլետարիատին հետ վանեց մենչեխիկներից:

Սորհուրդները պրոլետարիատի հիանալի, մեծ ապագա ունեցող, մարտական կազմակերպութեանն են,—խոստովանում է Կառուցիկն: Քանի վոր այդպես է, Կառուցիւ աւրոյժ դիրքը փլչում է վորպես թղթե տնակ կամ վորպես մանր բուրժուազիայի յերազանք՝ առանց պրոլետարիատի ու բուրժուազիայի սուր կռիւի յոյս դնելու մասին: Վորովհետև աւրոյժ հեղափոխութեանը մի համատարած և ընդամին կատարի կռիւ է, իսկ պրոլետարիատը բոլոր ճնշվածների առաջավոր դասակարգն է, բոլոր ու ամեն տեսակ ճնշվածների ազատագրական բոլոր ձգտումների կիզակեան ու կենտրոնն է: Սորհուրդները—ճնշված մասսաների

պաշքարի որդանը—ընտանանարար այդ մասսաների տրամադրութիւններն ու հայացքների փոփոխութիւնն արտացոլում և արտահայտում էին անչափ ամօքի արագ, ամօքի լրիվ ու ամօքի ճիշտ, քան վորեւէ այլ հիմնարկներ (ի միջի այլոց, այդ է մեկն այն աղբյուրներից, թե ինչու յե խորհրդային ղեմօկրատիան ղեմօկրատիայի բարձրագույն տիպը):

Սորհուրդները 1917 թ. փետրվարի 28-ից (հին տոմարով) մինչև հոկտեմբերի 25-ը կարողացան ղուժարել Ռուսաստանի բնակչութեան վիթխարի մեծամասնութեան—բոլոր բանվորների և զինվորների, գյուղացիութեան յոթ կամ ութ տասերորդական մասի յերկու համառուսաստանյան համադումար, չհաշվելով բազմաթիւ տեղական, զավառական, քաղաքային, նահանգական ու մարզային համադումարները: Այդ ժամանակի ընթացքում բուրժուազիան չկարողացաւ ղուժարել վոչ մի հիմնարկ, վորը մեծամասնութեան ներկայացներ (բացի ակնհայտ կերպով կեղծ, ծաղրական, պրոլետարիատին դայրացնող «ղեմօկրատական խորհրդակցութեանից»): Սահմանադիր ժողովն արտացոլեց մասսաների նույն տրամադրութեանը, նույն քաղաքական խմբավորումը, ինչ վոր Սորհուրդների առաջին (հունիսյան) Համառուսաստանյան Համադումարը: Մինչև Սահմանադիր ժողովի ղումարումը (1918 թիվ հունվար) կայացաւ Սորհուրդների յերկրորդ (1917 թիվ հոկտեմբեր) և յերրորդ (1918 թ. հունվար) Համադումարը, ըստ վորում նրանք յերկուսն էլ պարզից պարզ ցույց տվին, վոր մասսաները ձախացել են, հեղափոխականացել, յերեսն դարձրել մենչեիկներից ու եսերներից, անցել են բուլչեիկների կողմը, այսինքն յերեսն դարձրել մանր-բուրժուական ղեկավարութեանից, բուրժուազիայի հետ համաձայնութեան գալու պատրանքներից և անցել են բուրժուազիայի տասպալման համար մղվող պրոլետարական հեղափոխական պաշքարի կողմը:

Հետևարար, խորհուրդների սոսկ արտաքին պատմութեանն արդեն ցույց է տալիս Սահմանադիր ժողովի ցրման անխուսափելիութեանը և Սահմանադիր ժողովի ռեակցիոնութեանը: Բայց նիտուցկին ամուր կանդնած է իր «լուցունդի» վրա. թող կործանվի հեղափոխութեանը, թող բուրժուազիան հաղթանակ տանի պրոլետարիատի նկատմամբ, միայն թե ծաղկի «մաքուր ղեմօկրատիան»: Fiat justitia, percat mundus!\*:

\*) — «Թող արգարադատութեանն իրադործվի, թեկուզ աշխարհը կործանվի»: ԽՄԲ.:

Ահա խորհուրդների Համառուսաստանյան Համագումարների Համառոտ հանրագումարը ուսական հեղափոխութեան պատմութեան մեջ.

Խորհուրդների Համառուսաստանյան Համագումարները	Պատգամավորների թիվը	Նրանցից բուլեիկները	Բուլեիկների %-ը
I (1917 թ. VI 3)	790	103	13 <sup>0</sup> / <sub>100</sub>
II (1917 » X 25)	675	343	51 <sup>0</sup> / <sub>100</sub>
III (1918 » I 10)	710	434	61 <sup>0</sup> / <sub>100</sub>
IV (1918 » III 14)	1.232	795	64 <sup>0</sup> / <sub>100</sub>
V (1918 » VII 4)	1.164	773	66 <sup>0</sup> / <sub>100</sub>

Իրավական և նայել այս թվերին, վորպեսզի հասկանանք, թե ինչու համար Սահմանադիր Ժողովի պաշտպանութունը կամ ճառերը (նման Կառուցիչ ճառերին) այն մասին, թե բուլեիկներն իրենց կողմը ազգաբնակչության մեծամասնութունն չունեն, մեզանում միայն ծիծաղով են ընդունվում:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես յես արդեն մատնանշել եմ, բուրժուազիային ընտրական իրավունքից զրկելը չի կազմում սլոբետարիատի դիկտատուրայի պարտադիր ու անհրաժեշտ հատկանիշը: Յեւ Ռուսաստանում բուլեիկները, վորոնք հսկանքներից դեռ չատ առաջ այդպիսի դիկտատուրայի լողունդ էլին առաջադրել, վաղորոք չէին խոսում շահագործողներին ընտրական իրավունքներից զրկելու մասին: Դիկտատուրայի այդ բաղկացուցիչ մասը լույս աշխարհ է յեկել վո՛չ թե վորևե կուսակցութեան «սլանի համաձայն», այլ ինքնին անել և կոչի ընթացքում: Պատմաբան Կառուցիչն այդ, իհարկե, չի նկատել: Նա չի հասկացել, վոր բուրժուազիան, դեռևս այն ժամանակ, յերբ մենչեիկները (համաձայնողականներ՝ բուրժուազիայի նկատմամբ) տիրապետում էին խորհուրդներում, ինքն եր իրեն առանձնացրել խորհուրդներից, բոյկոտի յեր յենթարկել խորհուրդները, իրեն հակադրել եր նրանց, ինտրիկներ եր լարում նրանց դեմ: Խորհուրդներն առաջացան առանց վորևե սահմանադրութեան և մեկ տարուց ավելի (1917-ի դարնանից մինչև 1918-ի ամառը) ապրեցին առանց վորևե սահմանադրութեան: Բուրժուազիայի դադաղումը ճնշվածների ինքնուրույն և ամենազոր (վորովհետև ամենքին ընդգրկող և) կազմակերպու-

Թյան դեմ, բուրժուազիայի կռիվը—այդ ամենամանկատեղան, շահագրգռական, կեղտոտ կռիվը—խորհուրդների դեմ, վերջապես, բուրժուազիայի (կադետներից մինչև աջ եսերները, Միլյուկովից մինչև Կերենսկին) ակնհայտ մասնակցութունը կոռնիլովականությանը—ահա թե ինչն էր նախապատրաստել բուրժուազիայի ֆորմալ վտարումը խորհուրդներից:

Կառուցիկն լսել է կոռնիլովականության մասին, բայց նա վեհորեն թքում է պատմական փաստերի և ընթացքի վրա, կռվի ձևերի վրա, վորոնք վորոչում են գիկատատուրայի ձևերը. խսկապես, ինչացո՞ւ յեն այստեղ փաստերը, յերբ խոսքը վերաբերում է «մաքուր» դեմոկրատիային: Կառուցիկը «քննադատությունը», վոր ուղղված է բուրժուազիայից ընտրական իրավունքները խլելու դեմ, այդ պատճառով աչքի յե ընկնում այնպիսի... քաղցրիկ անմեղությամբ, վոր սրտաուռչ կլիներ, յեթե յերևան բերվեր յերեսայի կողմից, և վորն առաջացնում է դղվանք, յերբ յերևան է բերում մի անձ, վորը դեռ պաշտոնապես տկարամիտ չի ճանաչվել:

«...Յեթե ընդհանուր ընտրական իրավունքի ժամանակ կապիտալիստները աննշան փոքրամասնություն կազմեյին, նրանք ավելի շուտ կհաշտվեյին իրենց ճակատագրի հետ» (33) ...: Լա՛վ է, այնպես չե՞: Խելոք Կառուցիկն պատմության մեջ շատ անգամ է տեսել և առհասարակ կենդանի կյանքի դիտողություններից հիանալի կերպով գիտե այնպիսի կալվածատերեր ու կապիտալիստներ, վորոնք հաշվի յեն առնում ճնշվածների մեծամասնության կամքը: Խելոք Կառուցիկն ամուր կանգնած է «ոպորդիցիայի» տեսակետի վրա, այսինքն ներպառլամենտական պայքարի տեսակետի վրա: Նա տառացի այդպես էլ գրում է՝ «ոպորդիցիա» (եջ 34 և շատ ուրիշն.):

Ո՛ր, գիտնական պատմաբան ու քաղաքագետ: Ձեզ չեր խանգարի իմանալ, վոր «ոպորդիցիան» խաղաղ և միայն պառլամենտական պայքարի հասկացողություն է, այսինքն մի հասկացողություն, վոր համապատասխանում է վոչ-հեղափոխական սիտուացիային, մի հասկացողություն, վոր համապատասխանում է հեղափոխության բացակայությանը: Հեղափոխության մեջ խոսքը վերաբերում է անխնա թշնամուն քաղաքացիական պատերազմում—այդպիսի պատերազմից վախեցող, ինչպես նրանից Կառուցիկն է վախենում, մանր բուրժուայի վոչ մի ուեակցիոն յերեմիական այդ փաստը չի փոխի: Քննու-

Թյան առնել անխնա քաղաքացիական սպաներազմի հարցերը, յերբ բուրժուազիան դիմում է բոլոր վոճիւրներին—վերսպայաների որինակը և նրանց դործարքը Բիւմարկի հետ վորոչ բան ասում է ամեն մի մարդու, ով պատմութեանը վերաբերվում է վոչ դուրսյան Պետրուշիայի նման,—յերբ բուրժուազիան ողնութեան է կոչում ոտարեկրյա պետութեաններին և նրանց հետ միասին ինտրիղներ է լարում հեղափոխութեան դեմ, այդ—կոմիդմ է: Հեղափոխական պրոլետարիատը պետք է, «խառնաշփոթութեան խորհրդական» Կառուցիւ նման, դիչերային թասակ դնի և դիտի բուրժուազիային, վորը կազմակերպում է դուտովյան, կրասնովյան և չեխական հակահեղափոխական ապստամբութեաններ, վորը միլիոններ է վճարում սարտաթ անողներին,—դիտի այդ բուրժուազիային վորպես ոպողիցիա: Ո՞ր, խորամտութեան:

Կառուցիւն հետաքրքրում է դործի բացառապես ձեական-իրավարանական կողմը, այնպես վոր, յերբ կարգում են նրա դատողութեանները խորհրդային սահմանադրութեան մասին, ա-կամա մտաբերում են Բերելի խոսքերը. «Իրավարանները—դրանք մինչև ուղն ու ծովը ղեակցիոն մարդիկ են»: «Իրականութեան մեջ,—գրում է Կառուցիւն,—մենակ կապիտալիստներին չի կարելի իրավադուրի դարձնել: Ո՞վ է կապիտալիստն իրավարանական իմաստով: Ունեո՞րը: Նույնիսկ տնտեսական առաջադիմութեան ուղիով շատ հեռու դնացած մի այնպիսի յերկրում, ինչպես Գերմանիան է, վորի պրոլետարիատն այնքան բազմամարդ է, խորհրդային հանրապետութեան հիմնադրումը քաղաքականորեն իրավադուրի կդարձնէր մեծ մասսաներ: Գերմանական կայսրութեան մեջ 1907 թիվականին արհեստադործական աշխատանքով զբաղվածների ու նրանց ընտանիքների թիվը յերեք մեծ խմբում—գյուղատնտեսութեան, արդյունարեութեան և անտուր—կադմում եր ծառայողների և վարձու բանվորների խմբում մոտ 35 միլիոն, իսկ ինքնուրույնների խմբում՝ 17 միլիոն: Հեռաբար, կուսակցութեանը միանդամայն կարող է մեծամասնութեան լինել վարձու բանվորների մեջ, բայց փոքրամասնութեան՝ բնակչութեան մեջ» (եջ 33):

Ահա Կառուցիւ դատողութեանների նմուշներից մեկը: Դե՛, մի՞թե սա բուրժուայի հակահեղափոխական նվաճոց չէ: Ինչո՞ւ դուք բոլոր «ինքնուրույններին» իրավադուրիների շարքը դասեցիք, պարո՞ն Կառուցիւ, յերբ դուք հիանալի կերպով դիտեք, վոր ուս դյուրացիների ամենահսկայական մեծամասնութեանը վար-

ձու բանվոր չի պահում, ուրեմն իրավունքներից չի զրկվում :  
Մի՞թե այդ կեղծարարութունն չէ :

Ինչո՞ւ դուք, դիւանական տնտեսագետ, չբերիք ձեզ լավ  
հայտնի և 1907 թվի նույն այդ դերմանական վիճակագրութեան  
մէջ յեղած տվյալները վարձու աշխատանքի վերաբերմամբ դյու-  
ղատեստութեան մեջ՝ ըստ տնտեսութունները խմբերի : Ինչո՞ւ  
դուք ցույց չտվիք դերմանական բանվորներին, ձեր բրոշյուրի  
ընթերցողներին, այդ տվյալները, վորոնցից յերևար, թե, ըստ  
դերմանական վիճակագրութեան, «դյուղական տնտեսատերերի»  
ամբողջ թվի մէջ վորքան են շ ա հ ա գ ո թ ո ղ ն Ե Ի ք Ե , վորքան  
քիչ են շահագործողները :

Վորովհետև ձեր ռենդատութունը ձեզ դարձրել է բուր-  
ժուազիայի հասարակ սիկոֆանտը :

Կապիտալիստը, դիտե՞ք ինչ, անորոշ իրավաբանական հա-  
կացողութունն է, և Կառուցկին միքանի եջերում ումրակոծում է  
խորհրդային սահմանադրութեան «կամայականութունը» : Այդ  
«լուրջ դիտնականը» անդլիական բուրժուազիային թույլ է տալիս  
դարերով մշակելու և վերամշակելու նոր (միջնադարականութեան  
համար նոր) բուրժուական սահմանադրութունը, իսկ մեզ,  
Ռուսաստանի բանվորներին ու դյուղացիներին, լաքեյական դե-  
տութեան սույն ներկայացուցիչը վոչ մի ժամկետ չի տալիս : Նա  
մեզանից պահանջում է մինչև վերջին տառիկը մշակած սահմա-  
նադրութունն միքանի ամսում...

...«Կամայականութեան» : Ապա մի մտածեցեք, թե այսպիսի  
կշտամբանքով ինչ անսահման ամենակեղտոտ լաքեյութունն բուր-  
ժուազիայի առաջ, անսահման ամենաբութ պեղանտութունն է  
յերեան բերվում : Յերբ կապիտալիստական յերկիրները մինչև  
ուղն ու ծուծը բուրժուական ու մեծ մասամբ ռեակցիոն իրավա-  
բանները դարերի կամ տասնամյակների ընթացքում մշակեցին  
մանրամասնագույն կանոններ, դրեցին տասնյակ և հարյուրավոր  
հատորներով որենքներ ու որենքներ յարգարանումներ, վորոնք  
նեղում են բանվորներին, կաշկանդում են չքավորի ձեռքերն ու  
վտտքերը, հաղարավոր բժականութուններ ու արդեւքներ են  
դնում ժողովրդից յեղած յուրաքանչյուր հասարակ աշխատավոր  
մարդու առաջ, ո՛ր, այն ժամանակ բուրժուական լիբերալներն ու  
պարոն Կառուցկին այստեղ չեն տեսնում «կամայականութուն» :  
Այստեղ «կարգ ու կանոնն է» և «որինականութեան» : Այստեղ  
ամեն ինչ մտածված է ու դրի առնված, թե ինչպես կարելի յե

«մինչև վերջը քամել» չքալորին: Այստեղ կան հազարավոր բուր-  
 ժուական փաստաբաններ ու չինովնիկներ (Կաուցկին առհասա-  
 բակ նրանց մասին լուծւմ է, հավանորեն, հենց այն պատճառով,  
 վոր Մարքսը հսկայական նշանակութիւնն է տալիս չինովնիկական  
 մեքենան ջախջախելուն...), փաստաբաններ ու չինովնիկներ, վո-  
 բոնք կարողանում են այնպես մեկնաբանել որենքները, վոր  
 բանվորն ու միջակ գյուղացին յերբեք չեն կարող անցնել այդ  
 որենքներէ լարափակոցներէց: Այդ—բուրժուազիայի «կամայա-  
 կանութիւն» չէ, այդ ժողովրդական արյունը խմած շահամու ու  
 կեղտոտ շահագործողներէ դիկտատուրա չէ, նման բան չկա:  
 «Մաքուր դեմոկրատիա» յե այդ, վոր որավուր ավելի ու ավելի  
 մաքուր է դառնում:

Իսկ յերբ իմպերիալիստական պատերազմով իրենց արտասահ-  
 մանյան յեղբայրներէից կտրված աշխատավոր և շահագործվող  
 դասակարգերը, պատմութեան մեջ առաջին անգամ, կազմեցին  
 իրենց խորհուրդները, քաղաքական շինարարութեան կոչեցին այն  
 մասսաներին, վորոնց բուրժուազիան ճնշում էր, ծեծկում, բխաց-  
 նում, ու իրեմք սկսեցին կառուցել նոր, պրոլետարական պետու-  
 թիւն, սկսեցին կատարել կռիւ բոցի մեջ, քաղաքացիական պա-  
 տերազմի կրակի մեջ նշել հիմնական դրույթները առանց շահա-  
 գործողների պետութեան վերաբերյալ, —այն ժամանակ բուրժուա-  
 ղիայի բոլոր սրիկաները, արյունարբունների ամբողջ բանդան,  
 նրանց ձայնակցող Կաուցկու հետ մեկտեղ, վոռնոց բարձրացրեց  
 «կամայականութեամբ» մասին: Դե, այդ անուաները, բանվորնե-  
 րը և դյուղացիները, այդ «ոամիկները» վո՞րտեղից իսկապես կա-  
 բողանան իրենց որենքները մեկնաբանել: Վո՞րտեղից պետք է  
 նրանք վերցնեն արդարութեան զգացումը, նրանք, այդ հասարակ  
 աշխատավորները, վորոնք կրթված փաստաբանների, բուրժուա-  
 կան դրողների, Կաուցկիների և իմաստուն հին չինովնիկների  
 խորհուրդներէից չեն ողտվում:

Պարոն Կաուցկին իմ 1918 թ. IV. 29-ի\*) ճառից ցիտատ և  
 բերում հետևյալ խոսքերը. «...Մասսաներն իրենք են վորոչում  
 ընտրութիւնների կարգն ու ժամկետները...»: Յեւ «մաքուր դե-  
 մոկրատ» Կաուցկին յեղբայրացնում է.

«... Հետևաբար, բանն, ըստ յերևութին, այնպես է, վոր ընտրողների  
 յուրաքանչյուր ժողով ըստ իր հայեցողութեան վորոչում է ընտրութիւննե-  
 րի կարգը: Կամայականութեանն ու իր իսկ պրոլետարիատի ներսում ան-

\*) Տես Յերկեր, XXII հատոր, էջ 613—653: Խմբ.:

Հարձար ուղղիցիոն տարրերից աղտավելու հնարավորությունն այսպիսով կհասցվեին բարձրագույն աստիճանի» (էջ 37) :

Լա՛վ, այս ինչո՞վ է տարրերվում կապիտալիստների կողմից վարձված թանաքի կուլլից, վորը վողրում է դործադուլի ժամանակ «աշխատել ցանկացող» ջանասեր բանվորներին մասսայի կողմից ճնշելու առթիվ : Ինչո՞ւ «մաքուր» բուրժուական գեմոկրատիայում ընտրությունների կարգի չինտիլիկական-բուրժուական սահմանումը կամայականություն է : Ինչո՞ւ պետք է արդարությունը դառնումը իրենց դարավոր շահագործողների գեմ պայքարի յեղած մասսաների մեջ, այդ կատաղի պայքարով լուսավորվող ու կոմիսիոն մասսաների մեջ ավելի ցածր լինի, քան թե բուրժուական նախապաշարմունքներով դաստիարակված մի բուռ չինտիլիկների, ինտելիգենտների, փաստաբանների մեջ :

Կառուցիկն—ճշմարիտ սոցիալիստ է, չհամարձակվե՛ք տարակույսի յենթարկել ընտանիքի այդ ամենապատվարժան հոր, այդ ազնվագույն քաղաքացու անկեղծությունը : Նա—բանվորների հաղթանակի, պրոլետարիական հեղափոխություն հաղթանակի ջերմ և համոզված կողմնակիցն է : Նա միայն կցանկանար, վոր գիշերային թասակ կրող քաղցրիկ ինտելիգենտուկ-քաղցրենիներն ու Ֆիլիստերները մախ՝ մինչև մասսաների շարժումը, մինչև նրանց կատաղի պայքարն ընդդեմ շահագործողների և անպատճառ առանց քաղաքացիական պատերազմի՝ կազմեյին հեղափոխության գարգացման չափավոր ու խնամքով դրված կանոնադրությունը...

Մեր գիտնականագույն Յուդուչկա Գոլովյովը բարոյական խոր վրդովմունքով պատմում է գերմանական բանվորներին, վոր 1918 թ. VI. 14-ին Որհնուրդների Համառուսաստանյան ԿԳԿ վորոշեց Որհնուրդներից վտարել աջ եսերների և մենչևիկների կուսակցությունների ներկայացուցիչներին : «Այդ միջոցառումը, — գրում է Յուդուչկա Կառուցիկն, ազնիվ դայրությունով բորբոքված, — ուղղվում է վոչ թե ընդդեմ վորոշ անձերի, վորոնք վորոշ պատժելի գործողություններ են կատարել... Որհնուրդային հանրապետության սահմանադրությունը վոչ մի խոսք չի ասում Որհնուրդների պատգամավոր-անդամների անձեռնմխելիության մասին : Այստեղ Որհնուրդներից վտարվում են վո՛չ թե վորոշ անձեր, այլ վորոշ կուսակցություններ» (էջ 37) :

Այո՛, այդ իսկապես վոր ստակալի յե, այդ անհանդուրժելի շեղում է մաքուր գեմոկրատիայից, վորի կանոններով է հեղա-

փոխություն անելու մեր հեղափոխական Յուզուչկա Կառուցիկն :  
 Պետք էր, վոր մենք, ռուսական բուլճեիկներս, նախ անձեռնմխ-  
 լիություն խոստանայինք Սավինկովներին և Ընկ., Լիբերդաննե-  
 րին և Պոտրեսովներին («ախտիվիստներին»)՝ ու Ընկ., հետո  
 դրեյինք քրեական որենսզերք, վորը «պատժելի» հայտարարեր  
 չեխո-սլովակյան հակահեղափոխական պատերազմին մասնակցելը  
 կամ դաշնակցելը դերմանական իմպերիալիստների հետ Ուկրաին-  
 նայում կամ Վրաստանում՝ ընդդեմ իրենց յերկրի բանվորների,  
 և հետո միայն, այդ քրեական որենսզերքի հիման վրա, մենք  
 իրավունք կունենայինք, «մաքուր դեմոկրատիայի» համաձայն,  
 խորհուրդներից վտարելու «վորոչ անձերի» : Ընդամին ինքնըս-  
 տինքյան հասկանալի յե, վոր Սավինկովների, Պոտրեսովների ու  
 Լիբերդանների\* միջոցով կամ նրանց ազխտացիայի ողնությամբ  
 անլու-Քրանսական կապիտալիստներից փող ստացող չեխոսլո-  
 վակները, ինչպես և Կրասնովները, վորոնք Ուկրաինայի և Թիֆ-  
 լիսի մենչեիկների ողնությամբ դերմանացիներից ստացած արկեր  
 ունեն, հանդարտ կնստեյին, մինչև վոր մենք պատրաստենք կա-  
 նոնավոր քրեական որենսզերք և, վորպես ամենամաքուր դեմո-  
 կրատներ, կոհամանափակվելին «ոպոզիցիայի» դերով...

Կառուցիկու մեջ պակաս ուժեղ բարոյական վրդովմունք չի  
 հարուցանում այն, վոր խորհրդային սահմանադրությունն ընտ-  
 բական իրավունքները խլում և նրանցից, ովքեր «վարձու բան-  
 վորներ են պահում շահույթի նպատակով» : «Տանն աշխատող  
 գործավորը կամ մեկ յենթավարպետ ունեցող փոքրիկ տնտեսա-  
 տերը—գրում և Կառուցիկն—կարող և սպրել և զգալ միանգա-  
 մայն պրոլետարորեն, իսկ նա ընտրական իրավունք չունի»  
 (եջ 36) :

Վորպիսի՛ նահանջ «մաքուր դեմոկրատիայից» : Վորպիսի՛  
 անարդարություն : Ճիշտ և, մինչև այժմ բոլոր մարքսիստները  
 յենթադրում եյին և հազարավոր փաստեր հաստատում եյին, վոր  
 մանր տնտեսատերերը վարձու բանվորների ամենամանխիղճ և  
 դժուճ շահագործողներն են, բայց Յուզուչկա Կառուցիկն վերցնում  
 է, հարկավ, վո՛չ թե մանր տնտեսատերերի դասակարգը (և այդ  
 ո՞վ է հնարել զտասակարգային կովի վնասակար\*\*) թեորիան), այլ  
 առանձին անհատների, այնպիսի շահագործողներ, վորոնք

\*) Այս նախադասությունը ձևազրի մեջ չկա : Խմբ. :

\*\*) Ձևազրերի մեջ՝ «հիմար» : Խմբ. :

«ապրում են ու զգում միանգամայն պրոլետարոն»։ Հռչակա-  
վոր «տնտեսող Ազնեսը», վորին համարում եյին վաղուց մեռած,  
հարուժյուն ե առել Կառուցիւմ զըչի տակ։ Այդ տնտեսող Ազնե-  
սին հնարեց ու գործածության մեջ զրեց զերմանական զրակա-  
նության մեջ միջանի տասնամյակ սրանից առաջ «մաքուր» դե-  
մոկրատ, բուրժուա Յեւթենի Ռիխտերը։ Նա գուշակում եր անա-  
սելի աղետներ պրոլետարիատի դիկտատուրայից, շահագործող-  
ների կապիտալի բռնազրավումից, անմեղ տեսք ընդունելով՝ նա  
հարց եր տալիս՝ ո՞վ ե կապիտալիստ իրավաբանական իմաստով։  
Նա վերցնում եր չքաւոր տնտեսող կարողուհու որինակը («տնտե-  
սող Ազնես»), վորից «պրոլետարիատի» չար «դիկտատորները  
խլում են նրա վերջին դուռները։ Կար ժամանակ, յերբ դերմանա-  
կան ամբողջ սոցիալ-դեմոկրատիան ծիծաղում եր մաքուր դեմո-  
կրատ Յեւթենի Ռիխտերի այդ «տնտեսող Ազնեսի վրա»։ Բայց  
այդ վաղուց ե յեղել, այնքան վաղուց, յերբ գեռուս կենդանի յեր  
Բերելը, վորը բացահայտրեն և ուղղակի ասում եր ճամբարու-  
թյունը, թե մեր կուսակցության մեջ շատ կան նացիոնալ-լիբե-  
րալներ. այդ այնքան վաղուց ե յեղել, յերբ Կառուցիւն գեռուս  
ունեգատ չեր։

Այժմ «տնտեսող Ազնեսը» հարուժյուն ե առել ի դեմս «մեկ  
յենթաւարպետ ունեցող միանգամայն պրոլետարոն ապրող  
ու զգացող մանր տնտեսատիրոջ»։ Չար բոլշեիկները վիրավորում  
են նրան, խլում են նրանից ընտրական իրավունքը։ Ճիշտ ե,  
«ամեն մի ընտրական ժողով», ինչպես ասում ե նույն Կառուցիւն,  
Խորհրդային հանրապետության մեջ կարող ե իր մեջ ընդունել,  
ասենք, տվյալ գործարանի հետ կապված չքաւոր վարպետին,  
յեթե նա, իբրև բացառություն, շահագործող չե, յեթե նա իրոք  
«ապրում և զգում ե միանգամայն պրոլետարոն»։ Բայց մի՞թե  
կարելի չե վստահել, վոր հասարակ բանվորները չկարգավորված  
և առանց կանոնադրության դործող—(ո՞ր, սարսա՛վ) գործարա-  
նային ժողովը հանդես կբերի կյանքի ճանաչողություն, արդա-  
բության զգացում։ Մի՞թե պարզ չե, վոր ավելի լավ ե ընտրա-  
կան իրավունք տալ բոլոր շահագործողներին, բոլոր վարձու բան-  
վորներ վարձողներին, քան թե ոխիկ անել՝ հնարավոր դարձնե-  
լով, վոր բանվորները վիրավորեն «տնտեսող Ազնեսին» ու «պրո-  
լետարոն ապրող և զգացող վարպետին»։

Թող սենեգատուժյան արհամարհելի սրիկաները, վողջունվելով բուրժուազիայի և սոցիալ-չովինիստները<sup>\*)</sup> կողմից, վատարանն մեր խորհրդային սահմանադրությունն այն բանի համար, վոր նա խլում է շահագործողներից ընտրական իրավունքը: Այդ լավ է, վորովհետև այդ կարագացնի և կխորացնի Յեվրոպայի հեղափոխական բանվորների պառակտումը Շայդեմանների և կաուցկիների, Ռենդելների և Լոնդենների, Հենդերսոնների և Ռամսեյ Մակդոնալդների, սոցիալիզմի հին առաջնորդների և հին դավաճանների հետ:

Ճնշված դասակարգերի մասսաները, հեղափոխական պրոլետարներից յեւած դիտակից, ազնիվ առաջնորդները մեր կողմը կլինեն: Բախական է այդպիսի պրոլետարներին ու այդ մասսաներին ծանոթացնենք մեր խորհրդային սահմանադրությանը, և նրանք իսկույն կասեն. ահա թե վորտեղ են իսկական մեր մարդիկ, ահա թե վորտեղ է իսկական բանվորական կուսակցությունը, իսկական բանվորական կառավարությունը: Վորովհետև այդ կառավարությունը բանվորներին չի խաբում ռեֆորմների վերաբերյալ շողակրատությունը, ինչպես խաբում էյին մեզ բոլոր հիշյալ առաջնորդները, այլ լուրջ պայքարում է շահագործողների դեմ, լուրջ կերպով հեղափոխություն է կատարում, իրապես պայքարում է բանվորների լրակատար ազատագրման համար:

Յեթե խորհուրդները շահագործողներին զրկել են ընտրական իրավունքից խորհուրդների մեկ տարվա «պրակտիկայից» հետո, նշանակում է այդ խորհուրդներն իրոք ճնշված մասսաների, այլ վոչ թե բուրժուազիային վաճառված սոցիալ-իմպերիալիստների ու սոցիալ-պացիֆիստների, կազմակերպություններ են: Յեթե այդ խորհուրդները շահագործողներից խլել են ընտրական իրավունքը, նշանակում է, վոր խորհուրդները կապիտալիստների նկատմամբ մանր-բուրժուական համաձայնողականության դիմ

\*) Յև հենց նոր կարգացի «Ձրանկիֆուրաի Լրագրի» առաջնորդողը (1918 թ. X. 22 № 293), վորը հիացմունքով շարադրում է կաուցկուրը շուրջ: Բորսայականների լրագրը գոհ է: Դե', իհարկե գոհ կլինի: Իսկ Բեուլինից մի ընկեր զրում է ինձ, վոր Շայդեմանների լրագիր «Ձորվերասը» հատուկ հոգովածում հայտարարել է, թե ստորադրում է կաուցկու գրեթե յուրբանշուր սողի տակ: Ծնորհավորում ենք, շնորհավորում ենք:

վարող որդաններ չեն, պառլամենտական շաղակրատության (Կառուցիկները, Լոնդոնները և Մակդոնալդները շաղակրատության) որդաններ չեն, այլ շահագործողները դեմ կյանքի և մահու կռիվ մղող խկապես հեղափոխական սրբոյնտարիատի որդաններ են:

«Կառուցիկու դրքույկն այստեղ գրեթե անհայտ ե», դրում ե ինձ Բեռլինից այս քանի որս (այսօր X. 30-նն է) լավ իրազեկ մի ընկեր: Յես խորհուրդ կտայի մեր դեսպաններին Գերմանիայում ու Շվեյցարիայում հազարներ չխնայել՝ դնելու համար այս գիրքն ու գիտակից բանվորներին ձրի բաժանելու այն, վորպեսզի ցեխը կոխենք այն «յեվրոպական»—կարգա՝ իմպերիալիստական ու ռեֆորմիստական—սոցիալ-դեմոկրատիան, վորը վաղուց ե դարձել «գարչահոտ դիակ»:

\* \* \*

Իր գրքի վերջում, 61-րդ և 63-րդ եջում, պարոն Կառուցիկն դառնադին լալիս ե այն առթիվ, վոր «նոր թերիան» (ինչպես նա անվանում ե բուլչեիզմը, վախենալով շոչափել Փարիզի Կոմունայի այն վերլուծությունը, վոր տվել են Մարքսն ու Ենգելսը), «կողմնակիցներ ե դտնում նույնիսկ հին դեմոկրատիաներում, ինչպես, որինակ, Շվեյցարիան ե»: «Անհասկանալի յե» Կառուցիկու համար, «յեթե այդ թերիան ընդունում են դերմանական սոցիալ-դեմոկրատները»:

Վո՛չ, այդ միանգամայն հասկանալի յե, վորովհետև հեղափոխական մասսաների համար, պատերազմի լուրջ դասերից հետո, զգվելի յեն դառնում ե՛ Շայդեմանները, ե՛ Կառուցիկները:

«Մենք» միշտ դեմոկրատիայի կողմն ենք յեղել—դրում ե Կառուցիկն—և հանկարծ մենք ինքներս նրանից հրաժարվե՛նք:

«Մենք», սոցիալ-դեմոկրատիայի ոսրտունիստներս, միշտ դեմ ենք յեղել սրբոյնտարիատի դիկտատուրային, և Կոլբերն ու Բնկ. վաղուց եյին ասում այդ բացահայտ կերպով: Կառուցիկն դիտե այդ և իզուր ե կարծում, թե ընթերցողներից կթագցնի Բերնշտայնները և Կոլբերի «ծոցը վերադատնալու» ակներև փաստը:

«Մենք», հեղափոխական մարքսիստներս, «մաքուր» (բուրժուական) դեմոկրատիան յերբեք կուռք չենք դարձրել մեզ համար: Պլեխանովն, ինչպես հայտնի յե, 1903 թվին հեղափոխա-

կան մարքսիստ եր (մինչև նրա տխուր շրջադարձը, վորը նրան հասցրեց ուսական Շայգեմանի գիրքին)։ Յեւ Պլեխանովն այն ժամանակ կուսակցութեան ծրագիրն ընդունող համադումարում ասում եր, վոր պրոլետարիատը հեղափոխութեան մեջ, հարկ յեղած դեպքում, կիշի կապիտալիստներն ընտրական իրավունքը, կցրի ինչ պառլամենտ ել ուզում ե լինի, յեթե այն հակահեղափոխական դուրս դա։ Վոր հենց այդպիսի հայայցը միակն ե, վոր համապատասխանում ե մարքսիզմին, այդ ամեն վոք կտեսնի Մարքսի և Ենգելսի, թեկուզ իմ կողմից վերը բերված, հայտարարութեաններից, այդ, ակներևորեն, բղխում ե մարքսիզմի բոլոր հիմունքներից։

«Մենք», հեղափոխական մարքսիստներս, ժողովրդին չենք ասել այնպիսի ճառեր, վորոնցով սիրում եյին հանդես գալ բոլոր աղգերի կաուցիկականները, լաքեյություն անելով բուրժուազիայի առաջ, հաճոյանալով բուրժուական պառլամենտարիզմին, լուծեյան տալով արդի դեմոկրատիայի բուրժուական բնույթը, և սահանջելով միայն, վոր այն ընդլայնվի, այն մինչև վերջը հասցվի։

«Մենք» ասում եյինք բուրժուազիային. «դուք, շահագործողներդ ու կեղծավորներդ, խոսում եք դեմոկրատիայի մասին, միևնույն ժամանակ յուրաքանչյուր քայլափոխում հազարավոր արդէւքներ դնելով ննչված մասսաների առաջ՝ քաղաքականութեանը մասնակից լինելու դործում։ Մենք ձեր խոսքով բռնում ենք ձեզ և սահանջում ենք, այդ մասսաների շահերի տեսակետից, բնդարյնել ձեր բուրժուական դեմոկրատիան, վարպետի հեղափոխութեան նախապատրաստեմք մասսաներին՝ տապալելու համար ձեզ, շահագործողներդ։ Յեւ յեթե դուք, շահագործողներդ, վորձ անեք դեմադրութեան ցույց տալու մեր պրոլետարական հեղափոխութեանը, մենք ձեզ անխնա կերպով կճնչենք, մենք ձեզ իրավազուրկ կդարձնենք,—այդ քիչ ե. մենք ձեզ հաց չենք տա, վորովհետև մեր պրոլետարական հանրապետութեան մեջ շահագործողներն իրավազուրկ կլինեն, կզրկվեն կրակից ու ջրից, վորովհետև մենք լրջորեն և վոչ թե շայգեմանավարի ու կաուցիկավարի սոցիալիստներ ենք»։

Ահա թե ինչպես ենք խոսել և ինչպես ենք խոսելու «մենք», հեղափոխական մարքսիստներս, և ահա թե ինչու ճնչված մասսաները կլինեն մեր կողմն ու մեզ հետ, իսկ Շայգեմաններն ու Կաուցիկները կլինեն ունեկատուութեան աղբահորում։

## ԻՆՁ Ե ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ

Կառուցիկն ամենահամոզված կերպով իրեն ինտերնացիոնալիստ է համարում և անվանում: Շայգեմաններին նա հայտարարում է «կառավարական սոցիալիստներ»: Մենչևիկներին պաշտպանելով (Կառուցիկն ուղղակի չի ասում, թե համերաշխ է նրանց հետ, բայց ամբողջովին նրանց հայացքներն է անցկացնում), Կառուցիկն զարմանալի ակնառու կերպով յերևան բերեց, թե ինչ տեսակի յե նրա «ինտերնացիոնալիզմը»: Իսկ վորովհետև Կառուցիկն միայնակ չէ, այլ ներկայացուցիչն է մի հոսանքի, վորն անխուսափելիորեն աճել է II Ինտերնացիոնալի միջավայրում (Լոնդեն՝ Ֆրանսիայում, Տուրատին՝ Իտալիայում, Նորսը և Գրիմը, Գրաբերն ու Նենը՝ Շվեյցարիայում, Ռամսեյ Մակդոնալդը՝ Անգլիայում և այլն), ուստի ուսանելի յե կանգ առնել Կառուցիկու «ինտերնացիոնալիզմի» վրա:

Ընդգծելով, վոր մենչևիկները նույնպես յեղել են Յիսմերվալում (գիսլոմ է, անտարակույս, բայց... փտած գիսլոմ), Կառուցիկն հետևյալ կերպ է շարադրում մենչևիկների հայացքները, վորոնց հետ նա համաձայն է.

«...Մենչևիկները ցանկանում եյին ընդհանուր հաշտություն: Նրանք ցանկանում եյին, վոր բոլոր պատերազմողներն ընդունեն՝ առանց աննեքսիաների և կոնտրիբուցիաների լողունդը: Ըստ այդ հայացքի, քանի գեռ այդ ձևով չի բերված, ուստական բանակը պետք է մարտական պատրաստության մեջ գտնվի: Իսկ բոլշևիկները պահանջում եյին անհատազ հաշտություն ինչ գնով ել լինի, նրանք պատրաստ եյին անհրաժեշտության դեպքում, անջատ հաշտություն կնքել, նրանք ջանում եյին ուժով կորզել այն, ուժեղացնելով բանակի առանց այդ ել մեծ կազմալուծումը» (Եջ 27):

Կառուցիկու կարծիքով, բոլշևիկները պետք է չվերցնեյին իշխանությունն դե բավականանային ուշբեղիվկայով:

Այսպես ուրեմն, ահա թե ինչն է Կառուցիկու և մենչևիկների ինտերնացիոնալիզմը. բուրժուական իմպերիալիստական կառավարությունից ռեֆորմներ պահանջել, բայց շարունակել նրան աջակցել, շարունակել այդ կառավարության կողմից մղվող պատերազմին աջակցելը, մինչև վոր բոլոր պատերազմողները կընդունեն առանց աննեքսիաների և կոնտրիբուցիաների լողունդը: Այսպիսի հայացք բազմիցս արտահայտել են թե՛ Տուրատին, թե՛ Կառուցիկիականները (Հաագեն ու մյունն.), թե՛ Լոնդեն ու Ընկ.

վորոնք հայտարարում եյին, թե՛ մենք կռիմնակից ենք «հայրենիքի պաշտպանութան»:

Թեորիապես այդ նշանակում ե սոցիալ-չովինիստներից անջատվելու կատարյալ անկարողութուն և հայրենիքի պաշտպանութան հարցում կատարյալ խառնաչիօթութուն: Քաղաքականապես այդ նշանակում ե ինտերնացիոնալիզմը նենդափոխել քաղքենիական նացիոնալիզմով և անցնել ռեֆորմիզմի կողմը, հրաժարվել հեղափոխութունից:

«Հայրենիքի պաշտպանութան» ընդունումը, պրոլետարիատի տեսակետից, տվյալ պատերազմի արդարացումն ե, նրա որինականութան ընդունումը: Իսկ քանի վոր պատերազմը մնում ե իմպերիալիստական (թե՛ միապետութան որով, թե՛ հանրապետութան որով)—անկախ այն բանից, թե տվյալ մոմենտին վորտեղ են կանգնած թշնամու գործերը, ի՞մ, թե ոտար յերկրում, ուստի հայրենիքի պաշտպանութան ընդունումն իրականում աջակցութուն ե իմպերիալիստական, հալիչտակողական բուրժուազիային, լիակատար դավաճանութուն սոցիալիզմին: Ռուսաստանում Կերենսկու որով ել, բուրժուական-դեմոկրատական հանրապետութան մեջ, պատերազմը շարունակում եր մնալ իմպերիալիստական, վորովհետև այդ պատերազմը վարում եր բուրժուազիան, վորպես տիրապետող դասակարգ (իսկ պատերազմը «քաղաքականութան շարունակութունն» ե), — և պատերազմի իմպերիալիստական բնույթի առանձնապես ակնառու արտահայտութուն եյին այն դադտնի պայմանադրերը աշխարհի բաժանման ու ոտար յերկրների կողոպտման մասին, վոր կնքել եր նախկին ցարն Անդրեայի և Ֆրանսիայի կապիտալիստների հետ:

Մենչևիկները ստորաբար խարում եյին ժողովրդին, այդպիսի պատերազմն անվանելով պաշտպանողական կամ հեղափոխական, և Կաուցկին, հավանութուն տալով մենչևիկների քաղաքականութանը, հավանութուն ե տալիս ժողովրդին խաբելուն, հավանութուն ե տալիս մանր բուրժուաների դերին, վորոնք սպասարկում եյին կապիտալին՝ բանվորներին խաբելու, իմպերիալիստների կառքին նրանց կապելու միջոցով: Կաուցկին կիրառում ե տիպիկ քաղքենիական, ֆիլիստերական քաղաքականութուն, յերևակայելով (և մասսաներին անհեթեթ միտքը ներշնչելով), թե իբր լոգունգ առաջադրելը բանը փոխում ե: Բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պատմութունը մերկացնում ե այդ պատրանքը. ժողովրդին խաբելու համար բուրժուական դեմոկրատ-

ները միշտ առաջադրել են և միշտ առաջադրում են ինչ «լրդունդներ» կամենաք: Բանն այն է, վոր ստուգեմք նրանց անկեղծութունը, վոր խոսքերի հետ զուգադրենք գործերը, վոր չբավականանանք իդեալիստական կամ շառլատանական ֆրագով, այլ վորոնենք-գտնենք դասակարգային ոեալակամութունը: Իմպերիալիստական պատերազմը վո՛չ թե այն ժամանակ և դադարում իմպերիալիստական լինելուց, յերբ շառլատանները, կամ Ֆրագ-յորները, կամ քաղքենի-ֆիլիստերներն առաջադրում են քաղցրիկ «լրդունդ», —այլ միայն այն ժամանակ, յերբ իմպերիալիստական պատերազմ մղող և նրա հետ միլիտանավոր տնտեսական թելերով (յերբեմն ել ճողպաններով) կապված դասակարգն իրականում տապալված կլինի և իշխանության ղեկի մոտ նրան կփոխարինի իսկապես հեղափոխական դասակարգը, պրոլետարիատը: Իմպերիալիստական պատերազմից—մեմանապես և իմպերիալիստական, հափշտակողական հաշտութունից—այլ կերպ չի կարելի դուրս պրծնել:

Հալանություն տալով մենչեիկներին արտաքին քաղաքականությանը, ինտերնացիոնալիստական և ցիմմերվալդիստական հայտարարելով այն, Կաուցկին, 1-ին՝ դբանով ցույց է տալիս ցիմմերվալդական, սոյորտունիստական, մեծամասնության ուժը չենթադնությունը (իդուր չեք, վոր մենք, Յիմմերվալդի ձախ թեք, իսկո՛ւյն անջրպետվեցինք այդպիսի մեծամասնությունից), իսկ 2-րդ՝ —և այս ամենազլխավորն է—Կաուցկին պրոլետարիատի դիրքից անցնում է մանր բուրժուազլալի դիրքին, հեղափոխական գիրքից՝ ոեֆորմիստական գիրքի:

Պրոլետարիատը պայքարում է իմպերիալիստական բուրժուազլալի հեղափոխական տապալման համար, մանր բուրժուազլան՝ իմպերիալիզմի ոեֆորմիստական «կատարելագործման» համար, նրան համակերպվելու համար, նրան յեմքարկվելով հանդերձ: Յերբ Կաուցկին դեռևս մարքսիստ էր, որինակ, 1909 թվականին, յերբ նա գրում էր «Դեպի իշխանություն տանող ուղին», նա պաշտպանում էր պատերազմի կապակցությամբ հեղափոխության անխուսափելիության հենց այդ դադախարը, նա խոսում էր հեղափոխությունների դարագլխի մոտեցման մասին: Բազելի 1912 թվի մանիֆեստն ուղղակի և վորոշակի խոսում է պրոլետարական հեղափոխության մասին հենց այն իմպերիալիստական պատերազմի կապակցությամբ դերմանական ու անզլխական խրմբերի մեջև, վորը և բռնկվեց 1914 թվականին: Յեղ 1918 թվական

նին, յերբ պատերազմի կապակցութեամբ սկսվեցին հեղափոխությունները, փոխանակ պարզաբանելու նրանց անխուսափելիությունը, փոխանակ հիմնավոր խորհրդածության և կշռադատության առարկա դարձնելու հեղափոխական տակտիկան, հեղափոխության նախատարատման յեղանակներն ու ձևերը, Կառուցիկն սկսեց ինտերնացիոնալիզմ անվանել մենչեիկիների ռեֆորմիստական տակտիկան: Մի՞թե այդ ռենեգատությունն է:

Կառուցիկն մենչեիկներին այն բանի համար և դավում, վոր նրանք պնդում էին բանակի մարտական պատրաստականության պահպանման վրա: Նա բուլչեիկներին պախարակում և այն բանի համար, վոր նրանք ուժեղացնում էին բանակի առանց այն էլ արդեն մեծ «կազմավորւածումը»: Այդ նշանակում է՝ դուվել ռեֆորմիզմը և իմպերիալիստական բուրժուազիային յենթարկվելը, պախարակել հեղափոխությունը, հրաժարվել նրանից: Վորովհետև մարտական պատրաստականության պահպանումը նշանակում էր և հանդիսանում էր կերենակու որով բուրժուական (թեկուզ և հանրապետական) հրամանատարություն ունեցող բանակի պահպանումը: Բուրժին հայտնի յե—և դեպքերի ընթացքն ակնատու կերպով հատուտեց,—վոր այդ հանրապետական բանակը պահպանում էր կոռնիլովյան վոզին՝ չնորհիվ կոռնիլովյան հրամանատարական կազմի: Բուրժուական սպայությունը չէր կարող կոռնիլովյան չլինել, չէր կարող չձգտել իմպերիալիզմի, չձգտել բռնի կերպով ճնշելու պրոլետարիատին: Հին ձևով թողնել իմպերիալիստական պատերազմի բոլոր հիմքերը, բուրժուական դեկտատուրայի բոլոր հիմքերը, կարկատել մանրունքները, դունապարզել դատարկ բաները («ռեֆորմներ») — ահա թե իրականում ինչի յեր հանդում մենչեիկյան տակտիկան:

Յեւ ընդհակառակը: Առանց բանակի «կազմայուծման» վոչ մի հեղափոխություն յուր չի դնացել և չի կարող յուր դնալ: Վորովհետև բանակը հին կարգերը պաշտպանելու ամենավտակրացած գործիքն է, բուրժուական կարգապահության, կապիտալի տիրապետությունը պաշտպանելու, աշխատավորներին նրան հպատակեցնելու և ստրկական հնազանդությունը պահպանելու և դաստիարակելու ամենապնդացած նեցուկն է: Հակահեղափոխությունը յերբեք չի հանդուրժել, չէր կարող հանդուրժել դիմաժ բանավորների առկայությունը բանակի կողքին: Փրանսիայում— դրում էր Ենդելը,—յուրաքանչյուր հեղափոխությունից հետո բանավորները դիմաժ էին լինում. «ուստի պետական ղեկի մոտ

դանվող բուրժուաների համար առաջին պատվիրանը բանվորներին դինաթափումն էր»<sup>14</sup>։ Զինված բանվորները նոր բանակի սաղմն էլին, նոր հասարակակարգի կազմակերպական բջիջը։ Ճգմել այդ բջիջը, թույլ չառալ, վոր նա աճի, այդ—բուրժուալիստի առաջին պատվիրանն էր։ Ամեն մի հաղթական հեղափոխութեան առաջին պատվիրանը—Մարքսն ու Ենգելսը բազմիցս ընդգծել են այդ— յեղել է՝ ջախջախել հին բանակը վորպես այդպիսին, ցրել այն, փոխարինել նորով<sup>15</sup>։ Նոր հասարակական դասակարգը դեպի տիրապետութեան բարձրանալիս, յերբեք չէր կարող և այժմ էլ չի կարող հասնել այդ տիրապետութեանն ու ամբողջել այն այլ կերպ, յեթե վոչ բոլորովին քայքայելով հին բանակը («կազմալուծում», —աղաղակում են այս առթիվ ուսուցիչներն կամ պարզապէս վախկոտ քաղքենիները)։ այլ կերպ, յեթե վոչ անցնելով դըժվարագույն, ամենատանջալից մի շրջան՝ առանց վորեւ բանակի (այդ տանջալից շրջանն անցել է նաև Փրանսական մեծ հեղափոխութեանը)։ այլ կերպ, յեթե վոչ աստիճանաբար, քաղաքացիական ծանր պատերազմի մեջ մշակելով նոր բանակ, նոր կարգապահութեան, նոր դասակարգի նոր ռազմական կազմակերպութեան։ Պատմարան Կառուցիկն առաջ հասկանում էր այդ։ Ռեննզատ Կառուցիկն մոռացել է այդ։

Ի՞նչ իրավունք ունի Կառուցիկն «կառավարական սոցիալիստներ» անվանելու Շայգեմաններին, յեթե նա հավանութեամբ է տալիս մենչեիկներին տակախկային ուստական հեղափոխութեան մեջ։ Մենչեիկները Կերենսկուն պաշտպանելով, նրա մինխտրութեան մեջ մտնելով, ճիշտ նույնպէս կառավարական սոցիալիստներ էլին։ Այդ յեղրակացութեանից Կառուցիկն վոչ մի կերպ չի կարող խուսա տալ, յեթե փորձ անի դնելու իմպերիալիստական պատերազմ մղող տիրապետող դասակարգի հարցը։ Բայց Կառուցիկն խուսափում է տիրապետող դասակարգի հարցը—մարքսիստի համար պարտադիր հարցը—դնելուց, վորովհետև այդպիսի հարցի սոսկ գրումը կմեղհացներ ունեգատին։

Կառուցիկականները՝ Գերմանիայում, լոնդետլստները՝ Ֆրանսիայում, Տուրատին ու Ընկ.՝ Իտալիայում դատում են այսպէս. սոցիալիզմը յենթադրում է ազգերի համասարութեանն ու ազատութեանը, նրանց ինքնորոշումը, —ուստի, յերբ հարձակվում են մեր յերկրի վրա, կամ յերբ թշնամու զորքերը ներխուժել են մեր յերկիրը, սոցիալիստներն իրավունք ունեն և պարտավոր են պաշտ-

պանելու հայրենիքը: Բայց այս դատողութիւնը, թերրիապես, կամ ամբողջովին ծաղր եւ սոցիալիզմի նկատմամբ, կամ խարդախ հնարք, իսկ դործնականորեն—քաղաքականապես այդ դատողութիւնը դուզադիպում է այն բոլորովին խալար մուժիկի դատողութեան հետ, վորը նույնիսկ անկարող եւ մտածել պատերազմի սոցիալական, դասակարգային բնույթի և ռեակցիոն պատերազմի ժամանակ հեղափոխական կուսակցութեան ունենալիք խնդիրներէ մասին:

Սոցիալիզմը դեմ է ազգերի վրա բռնութիւն դործ դնելուն: Այս անվիճելի յէ: Բայց սոցիալիզմն առհասարակ դեմ է մարդկանց վրա բռնութիւն դործադրելուն: Սակայն վոչ վոք, բացի քրիստոնէական անարխիստներէց ու տոլստոյականներէց, դեռես այստեղից չի յեղրակացրել, թէ սոցիալիզմը դեմ է հեղափոխական բռնութեան: Ուրեմն խոսել «բռնութեան» մասին առհասարակ, առանց քննելու այն պայմանները, վորոնք տարբերում են ռեակցիոն բռնութիւնը հեղափոխականից, նշանակում է լինել հեղափոխութիւնից հրաժարվող քաղքենի, կամ այդ նշանակում է պարզապես սոփեստաբանութեամբ խարել իրեն և ուրիշներին:

Նույնը վերաբերում է նաև ազգերի վրա բռնութիւն դործ դնելուն: Ամեն մի պատերազմ բռնութիւն է ազգերի վերաբերմամբ, բայց այդ չի խանգարում սոցիալիստներին հեղափոխական պատերազմի կողմնակից լինել: Պատերազմի դասակարգային բնույթը—ահա սոցիալիստի առաջ (յեթէ նա ռենեզատ չէ) ծառայած հիմնական հարցը: 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմը, այդ—պատերազմ է իմպերիալիստական բուրժուազիայի յերկու խմբերի միջև՝ աշխարհը բաժանելու համար, ավարը բաժանելու համար, մանր ու թույլ ազգերին կողոպտելու և խեղդելու համար: Պատերազմի այդպիսի գնահատականը տվել է 1912 թվականին Բագելի մանիֆեստը, այդպիսի գնահատականը հաստատել են փաստերը: Ով վոր չեղվում է պատերազմի վերաբերյալ այս տեսակետից, նա սոցիալիստ չէ:

Յեթէ գերմանացին Վիլհելմի որով կամ Ֆրանսացին Կլեմանտոյի որով ասում են. յես իրավունք ունեմ և պարտավոր եմ, վորպէս սոցիալիստ, պաշտպանելու հայրենիքը, յեթէ թշնամին ներխուժել է իմ յերկիրը, ապա այդ վո՛չ թէ սոցիալիստի, վո՛չ թէ ինտերնացիոնալիստի, վո՛չ թէ հեղափոխական պրոլետարի, այլ քաղքենի—նացիոնալիստի դատողութիւն է: Վորովհետև այդ

դատողութեան մեջ չքանում և բանվորի դասակարգային հեղափոխական սլաքարն ընդդեմ կապիտալի, չքանում և ամբողջութեամբ վերցրած բովանդակ պատերազմի զնահատականը՝ համալսարհային բուրժուազիայի և համաշխարհային պրոլետարիատի տեսակետից, այսինքն չքանում և ինտերնացիոնալիզմը, մնում և աղքատամիտ, քարացած նացիոնալիզմը: Իմ յերկիրը նեղում են, դրանից ավելին յես չեմ ուզում իմանալ,—ահա թե ինչի յես հանդում այդ դատողութունը, ահա թե ինչի մեջ և նրա քաղքենիական-նացիոնալիստական նեղմտութունը: Այդ նույնն և, թե մեկ անձի վերաբերմամբ, անհատական բռնութուն դործ զնեղումասին, վորեւ մեկը դատեր այսպես. սոցիալիզմը դեմ և բռնութեան, այդ պատճառով ավելի լավ և յես դավաճանութուն կատարեմ, քան թե բանտ նստեմ:

Ֆրանսացին, գերմանացին կամ իտալացին, վորն ասում և՛ սոցիալիզմը դեմ և ազգերի վրա բռնութուն դործադրելուն, ուստի յես պաշտպանում եմ, յերբ թշնամին ներխուժել և իմ յերկիրը, դավանանում և սոցիալիզմին և ինտերնացիոնալիզմին: Վորովհետև այդպիսի մարդը տեսնում և միայն իր «յերկիրը», ամենից բարձր և դատում «իր»... «բուրժուազիան», չմտածելով ինտերնացիոնալ կապերի մասին, վորոնք պատերազմն իմպերիալիստական են դարձնում, նրա բուրժուազիան դարձնում են իմպերիալիստական կողոպուտի շղթայի մի ողակը:

Ի՞նչը քաղքենիներն ու բոլոր բուրժուա խալար մուժիկները դատում են հենց այնպես, ինչպես դատում են ունեւատներ կառուցիկականները, լոնգետիստները, Տուրատին և Ընկ., այն և՛ թշնամին իմ յերկրումն և, ուրիշ վոչ մի բանի հետ յես այլևս դործ չունեմ\*):

\*) Սոցիալ-լոյիստները (Շայդեմանները, Ռենդելները, Հենդերսոնները, Գոմպերաները և Ընկ.) պատերազմի ժամանակ բոլորովին հրաժարում են «Ինտերնացիոնալի» վերաբերյալ ամեն տեսակ ճառերից: Նրանք իրենց բուրժուազիայի թշնամիներին համարում են «դավաճաններ»... սոցիալիզմի հանդեպ: Նրանք կողմնակից են իրենց բուրժուազիայի նվաճողական քաղաքականութեան: Սոցիալ-պացիֆիստները (այսինքն՝ խոսքով սոցիալիստները, դործով՝ քաղքենիական պացիֆիստները) արտահայտում են ամեն տեսակ «Ինտերնացիոնալիստական» զղայմունքներ, ըմբոստանում են աննեքսիաների և այլնի դեմ, բայց իրականում չարունակում են պաշտպանել իրենց իմպերիալիստական բուրժուազիային: Տարբերութունը յերկու տիպերի միջև լուրջ չէ, նման այն տարբերութեան, վոր կա բերանում չար ճառեր ունեցող կապիտալիստի և քաղցր ճառեր ունեցող կապիտալիստի միջև:

Սոցիալիստը, հեղափոխական պրոլետարը, ինտերնացիոնալիստն այլ կերպ է դատում. պատերազմի բնույթը (ոեակցիոն է այն, թե հեղափոխական) կախված է վո՛չ թե այն բանից, թե ով է հարձակվել և ում յերկրումն է կանդնած «Թնամին», այլ այն բանից, քե՛ վո՛ր դասակարգն է պատերազմ վարում, ի՛նչ քաղաքականութուն է շարունակվում ավյալ պատերազմով: Յեթե ավյալ պատերազմը ոեակցիոն իմպերիալիստական պատերազմ է, այսինքն մղվում է իմպերիալիստական բռնադատող, կոդուպտիչ ոեակցիոն բուրժուազիայի յերկու համաշխարհային խմբերի կողմից, ապա ամեն մի (մինչև անգամ վորը յերկրի) բուրժուազիան դառնում է կոդուպտի մասնակից, և իմ խնդրը, հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցչի խնդրն է՝ պատրաստել համաշխարհային պրոլետարական հեղափոխութուն, վորպես մի ալ փրկութունը համաշխարհային պատերազմի սարսափներին: Յես պետք է դատեմ վո՛չ թե «իմ» յերկրի տեսակետից (վորովհետև այդ աղքատամիտ բուրժ նացիոնալիստական քաղքենու դատողութուն է, վորը չի հասկանում, թե ինքը խաղալիք է իմպերիալիստական բուրժուազիայի ձեռքին), այլ համաշխարհային պրոլետարական հեղափոխության նախապատրաստման, պրոպագանդայի, այդ հեղափոխությունը մոտեցնելու գործին իմ մասնակցելու տեսակետից:

Ահա թե ինչ է ինտերնացիոնալիզմը, ահա թե վորն է ինտերնացիոնալիստի, հեղափոխական բանվորի, իսկական սոցիալիստի խնդիրը: Ահա թե ինչպիսի այբուբեն «և մուսայել» ոեհեզատ կաուցյկին: Յեվ նրա ոեհեզատությունն է՛լ ավելի ակնառու յե դառնում, յերբ նա մանր-բուրժուական նացիոնալիստների (Ռուսաստանում՝ մենչևիկները, Ֆրանսիայում՝ լոնդետիստների, Իտալիայում՝ Տուրատիի, Գերմանիայում՝ Հապդեյի և Ընհ.) տակրոտիկային հալանություն տալուց՝ անցնում է բուլչեիկյան տակրոտիկայի քննադատության: Ահա այդ քննադատությունը.

«Բուլչեիկյան հեղափոխությունը կաուցյված էր այն յենթադրության վրա, թե նա յեալիկտ կճառայի ընդհանուր յեվրոպական հեղափոխության համար,—թե Ռուսաստանի համարձակ նախաձեռնությունը կզրդի վորտի յելնելու ամբողջ Յեվրոպայի պրոլետարներին»:

Այսպիսի յենթադրության պարադոքս, հարկավ, միևնույն էր, թե ինչ ձևեր կընդունի սուսական անճատ հաշտությունը, թե այդ ինչ նեղություններ ու սերիտորիայի կորուստներ (բառացի՝ խեղանդամություն կամ հաշտություն, Verstümmelyngen) կրերի սուս ժողովրդին, աղքեթի ինքնորոշման վորպիսի մեկնաբանություն կտա այդ: Այն ժամանակ նմանապես միև-

նույն եր, ընդունակ և արդյոք Ռուսաստանը պաշտպանվելու, թե վոչ: Ըստ այդ հայացքի՝ յեվրոպական հեղափոխությունը կաղմնւմ եր ուսական հեղափոխության ամենալավագույն պաշտպանությունը, ուսաստանյան նախկին տերիտորիայի բոլոր ժողովուրդներին պետք է բերեր լիակատար և խիստկան ինքնորոշում:

Յեվրոպայի հեղափոխությունը, վոր այնպէս սոցիալիզմ կրեր և կամբարանդեր այն, պետք է նույնպէս միջոց դառնար վերացնելու այն արգելքները, վոր Ռուսաստանում զբովում էին սոցիալիստական արտադրության իրականացման սուաջ՝ յերկրի տնտեսական հետամնացության հետևանքով:

Այս ամենը շատ արամբարանական եր ու լալ եր հիմնադրված, յեթե միայն թույլ տանք հիմնական յենթադրությունը, վոր ուսական հեղափոխությունն անխուսափելիորեն պետք է սանձարւոյժ անի յեվրոպականը: Լալ, իսկ ի՞նչ պետք է լիներ այն դեպքում, յեթե այդ տեղի չունենար:

Մինչև այժմ այդ յենթադրությունը չարգարացավ: Յեվ այժմ Յեվրոպայի պրոլետարներին մեղադրում են, թե նրանք լքել են ու դալմանակ ուսական հեղափոխությանը: Սա մեղադրանք է անհայտնի դեմ, վորովհետեւ ել ո՞ւմ պատասխանատու դարձնենք յեվրոպական պրոլետարիատի վարմունքի համար» (էջ 28):

Յեվ Կառուցիկն լրացուցիչ կերպով ծամծամում է, վոր Մարքսը, Ենգելսը, Բերեյը մեկ անգամ չէ, վոր սխալվել են իրենց սպասած հեղափոխության դալու նկատմամբ, բայց վոր նրանք յերբեք իրենց տակտիկան չեն կառուցել «վարոշակի ժամկետում» հեղափոխություն սպասելու վրա (էջ 29), մինչդեռ, իբր թէ, բոլշևիկներն «ամբողջ հուլսը դրել են յեվրոպական ընդհանուր հեղափոխության վրա»:

Մենք դիտմամբ մեջ բերինք այսքան յերկար ցիատաք, վորպեսզի ակնառու կերպով ցույց տանք ընթերցողին, թե վորքան «ճարպիկ» է Կառուցիկն կեղծում մարքսիզմը, նենդափոխելով այն դռնհիկ ու ուսակցիոն քաղքենիական հայացքով:

Նախ, հակառակորդին վերագրել ակներև հիմարություն և հետո հերքել այն—շատ ել խելոք մարդկանց վարվելակերպ չէ: Յեթե բոլշևիկներն իրենց տակտիկան կառուցեյին այլ յերկիրներում վարոշակի ժամկետին հեղափոխություն սպասելու վրա, այդ կլինէր անվիճելի հիմարություն: Բայց բոլշևիկյան կուսակցությունը չի արել այդ հիմարությունը. ամերիկական բանվորներին դրած իմ նամակում (1918 թ. VІІІ. 20-ի\*) յես ուղղակի սահմանագատվում եմ այդ հիմարությունից, ասելով, վոր մենք հուլս ունենք ամերիկական հեղափոխության վրա, բայց այդ հուլսը չենք կապում վորոշակի ժամկետի հետ: Իմ բանակովի մեջ

\*) Տե՛ս Յերկերի XXIII հատ., էջ 176—189: Խմբ.:

քննողն ձախ ետերնների և «ձախ կոմունիստների» (1918 թ. հուն-վար-մարտ)<sup>\*)</sup> յես քանիցս զարդացրել եմ նույն այդ միտքը: Կառուցկին կատարել է փոքրիկ... բոլորովին փոքրիկ խարդախություն, վորի վրա էլ կառուցել է իր քննադատությունը բոլջեղովի վերաբերմամբ: Կառուցկին ի մի յե խառնել այն տակտիկան, վոր նկատի ունի յեվրոպական հեղափոխությունն ալելի կամ պակաս մոտավոր, բայց վոչ վորոշակի ժամկետում, ու այն տակտիկան, վոր նկատի ունի յեվրոպական հեղափոխությունը վորոշակի ժամկետում: Փոքրիկ, բոլորովին փոքրիկ կեղծիք:

Յերկրորդ տակտիկան հիմարություն է: Առաջինը պարտադիր է մարքսիստի համար, ամեն մի հեղափոխական պրոլետարի և ինտերնացիոնալիստի համար—պարտադիր է, վորովհետև միայն դա յե մարքսիստորեն ճիշտ հաշվի առնում յեվրոպական բոլոր յերկիրների որյեկտիվ դրությունը, վորը ծնունդ է առնում պատերազմից, միայն այդ տակտիկան է համապատասխանում պրոլետարիատի ինտերնացիոնալ ինդիքներին:

Առհասարակ հեղափոխական տակտիկայի հիմքերի վերաբերյալ խոշոր հարցը նենդափոխելով մանր հարցով այն սխալի մասին, վոր կարող էյին անել հեղափոխական-բոլջեղները, բայց վոր նրանք չեն արել, Կառուցկին բարեհաջող կերպով հրաժարվել է հեղափոխական տակտիկայից առհասարակ:

Քաղաքականության մեջ ունեցա՞տ՝ նա թեորիայում չի կարողանում նույնիսկ հարց դնել հեղափոխական տակտիկայի որյեկտիվ նախադրյալների մասին:

Յեվ այստեղ մենք մոտեցանք յերկրորդ կետին:

2-րդ: Յեվրոպական հեղափոխության վրա հույս ունենալը պարտադիր է մարքսիստի համար, յեթե հեղափոխական սխուռացիան առկա յե: Սա մարքսիզմի այրենական ճշմարտություն է, վոր սոցիալիստական պրոլետարիատի տակտիկան չի կարող միատեսակ լինել հեղափոխական սխուռացիայի առկայության և նրա բացակայության ժամանակ:

Յեթե Կառուցկին դներ այս, մարքսիստի համար պարտադիր, հարցը, նա կտեսներ, վոր կտացվի անպայման իր դեմ ուղղված պատասխան: Պատերազմից շատ առաջ բոլոր մարքսիստները, բոլոր սոցիալիստները համաձայն էյին այն բանում, վոր յեվրոպական պատերազմը կստեղծի հեղափոխական սխուռացիա: Յերբ

\*) Տե՛ս Յերկրի XXII հատորը: Խմբ.:

Կառուցվին դեռևս ունենդատ չեր, նա սլարդ ու վորոչակի ընդունում էր այդ—և՛ 1902 թվականին («Սոցիալիստական հեղափոխութունը»), և՛ 1909 թվականին («Գեպի իշխանութուն տանող ուղին») 16: Բազելի մանիֆեստն ամբողջ II Ինտերնացիոնալի անունից ընդունեց այդ. խղուր չե, վոր բոլոր յերկիրների սոցիալ-չովինիստներն ու կառուցիվանները («Կենտրոնայինները», մարդիկ, վորոնք տատանվում են հեղափոխականների և ուղորտունիստների միջև) Բազելի մանիֆեստի համապատասխան հայտարարութուններից վախենո՞ւմ են՝ վորպես կրակից:

Հետևաբար, Յեկրոպայում հեղափոխական սիտուացիայի սպասումը վո՛չ թե բուլչևիկները հրապուրվելու արդյունքն էր, այլ բոլոր մարքսիստների ընդհանուր կարծիքը: Յեթե Կառուցվին այս անվիճելի ճամարութունից ոճիքը թափում է այնպիսի Փրագներով, թե իբր բուլչևիկները «միշտ հավատացել են բռնութան ու կամքի ամենադուրսթյան», ապա այդ հենց դատարկահնչուն Փրագ է, վորը բողարկում է Կառուցիու վախուստ տալը և խայտառակ վախուստ տալը հեղափոխական սիտուացիայի հարցը դնելուց:

Այնուհետև: Հեղափոխական սիտուացիան իրականում վրա հասե՞լ է, թե վոչ: Այս հարցը ևս Կառուցվին չկարողացավ դնել: Այդ հարցին պատասխանում են տնտեսական փաստերը. սովն ու ավերումը, վոր ամենուրեք ստեղծել է պատերազմը, հեղափոխական սիտուացիա յեն նշանակում: Տվյալ հարցին պատասխանում են նույնպես քաղաքական փաստերը. արդեն 1915 թվականից բոլոր յերկիրներում սլարդ յերևան յեկալ հին, փտած սոցիալիստական կուսակցութունների պառակտման պրոցեսը, սոցիալ-չովինիստական առաջնորդներից պրոլետարիատի մասաների հեռանալու, դեպի ձախ, դեպի հեղափոխական դադափարներն ու տրամադրութունները, դեպի հեղափոխական առաջնորդներն ընթանալու պրոցեսը:

1918 թ. ուղտտոսի 5-ին, յերբ Կառուցվին իր բրոշյուրն էր գրում, հեղափոխութունից վախեցող, նրան դավաճանող մարդը միայն կարող էր չտեսնել այդ փաստերը: Իսկ այժմ, 1918 թ. հոկտեմբերի վերջին, Յեկրոպայի մի շարք յերկիրներում հեղափոխութունն աճում է բոլորի աչքի առաջ և խիստ արագ: «Հեղափոխական» Կառուցվին, վորը ցանկանում է, վորպեսզի առաջվա նման իրեն մարքսիստ համարեն, այնպիսի կարճատես Ֆիլիստեր

գուրս յեկավ, վորը—Մարքսի կողմից ծաղրված 1847 թվի Ֆրիւստերների նման—չտեսա՞վ մտանցող հեղափոխությունը:

Մենք մտանցանք յերբորդ կեանն:

3-րդ: Վորո՞նք են հեղափոխական տակտիկայի առանձնահատկություններն այն պարագայում, յերբ ապա յե յեվրոպական հեղափոխական սխուռացիան: Ռենեզատ դառնալով Կառլցկին վախեցավ դէնէլ մարքսիստի համար պարտադիր այդ հարցը: Կառլցկին դատում է վորպէս տիպիկ Ֆրիւստեր-քաղքենի կամ խավար գյուղացի. վրա՞ յե հասել «ընդհանուր յեվրոպական հեղափոխությունը», թե վոչ: Յեթե վրա յե հասել, այն ժամանակ նա էլ պատրաստ է հեղափոխական դառնալու: Բայց այն ժամանակ—կնկատենք մենք,—ամեն մի սրիկա (նման այն ստորաքարչներին, վորոնք յերբեմն խցկվում են այժմ հաղթանակած բոլշևիկները շարքերը) կսկսի իրեն հեղափոխական հայտարարել:

Յեթե վոչ, այն ժամանակ Կառլցկին յերե՛ս է դարձնում հեղափոխությունից: Կառլցկին չունի այն ճշմարտության բմբրոնման սովերն խակ, վոր հասունացող հեղափոխության անհրաժեշտությունը խավար մասսաներին քարոզելու, այդ հեղափոխության անխուսափելիությունն ապացուցելու, նրա ողուտը ժողովրդի համար պարզաբանելու, նրա համար պրոլետարիատին ու բոլոր աշխատավորական և շահադործվող մասսաներին պատրաստելու հմտությունն է տարբերում հեղափոխական մարքսիստին որիմատելից և քաղքենուց:

Կառլցկին անհեթեթություն է վերագրել բոլշևիկներին, իբր թե նրանք ամեն ինչ բախտախաղի յեն հանձնել, հույս ունենալով, վոր յեվրոպական հեղափոխությունը վրա կհասնի վորոշակի ժամկետում: Այս անհեթեթությունն ուղղվեց Կառլցկու դեմ, վորովհետև նրա մոտ հենց դուրս յեկավ, վոր բոլշևիկները տակտիկան ճիշտ կլինեն, յեթե յեվրոպական հեղափոխությունը վրա հասնի 1918 թ. ողոստոսի 5-ին: Հենց այդ թիվն է հիշատակում Կառլցկին վորպէս իբ բրոշյուրը գրելու թիվական: Յեվ յերբ վոր այդ ողոստոսի 5-ից մի քանի շաբաթ անց պարզվեց, վոր մի շաբթ յեվրոպական յերկիրներում հեղափոխությունը վրա յե հասնում, Կառլցկու ամբողջ ունեզատությունը, մարքսիզմի ամբողջ կեղծումը նրա կողմից, հեղափոխականորեն դատելու և նույնիսկ հարցերը հեղափոխականորեն դնելու նրա ամբողջ անկարողությունը յերեան յեկավ իր բովանդակ հրաշալիությամբ:

Յերբ Յեվրոպայի պրոլետարներին մեղադրում են դառնա-  
նության համար,—դրում և Կառուցիկին,—ասպա այդ մեղադրանք և  
անհայտների դեմ :

Մխարչով՝ և եք, պարոն Կառուցիկ: Նայեցե՛ք հայելու մեջ և  
դուք կտեսնեք այն «անհայտներին», վորոնք դեմ ուղղված և այդ  
մեղադրանքը: Կառուցիկին միամիտ և ձեռնուձեռն, այնպես և ցույց  
տալիս, թե չի հասկանում՝ ով և այդպիսի մեղադրանք ուղղել և  
ինչ իմաստ ունի այդ մեղադրանքը: Իսկ իրապես Կառուցիկին հիա-  
նալի դիտել, վոր այդ մեղադրանքն առաջադրում էլին և առաջա-  
դրում են դերմանական «ձախերը», սպարտակյանները,  
Լիբկնեխտոն ու իր բարեկամները: Այս մեղադրանքն արտահայ-  
տում և այն բանի պարզ գիտակցությունը, վոր դերմանական  
պրոլետարիատը ռուսական (և միջադարյին) հեղափոխությանը  
դավաճանում էր, յերբ խեղդում էր Ֆինլանդիան, Ուկրաինան,  
Լատվիան, Եստլանդիան: Այդ մեղադրանքն ամենից առաջ և ամե-  
նից ավելի ուղղվում և վո՛չ թե մասսայի դեմ, վորը միշտ ծեծկ-  
ված և, այլ այն առաջնորդների դեմ, վորոնք, Շայդեմանների և  
Կառուցիկիների պես, չեյին կատարում մասսաների մեջ սրանց  
դանդաղաչարժության դեմ ուղղված հեղափոխական ազդեցիկա-  
յի, հեղափոխական պրոպագանդայի, հեղափոխական աշխատանքի  
իրենց պարտականությունը, վորոնք դորժում էլին փաստորեն  
հակառակ հեղափոխական բնազդներին ու ձգտումներին, վորոնք  
անթեղված կրակի պես միշտ վառ են ճնշված դասակարգի մաս-  
սայի խորքում: Շայդեմաններն ուղղակի, կոպիտ կերպով, ցինի-  
կարար, մեծ մասամբ շահախնդրորեն դավաճանում էլին պրոլե-  
տարիատին և անցնում բուրժուազիայի կողմը: Կառուցիկականներն  
ու լոնդեռիտները նույն բանն էլին անում՝ տատանվելով, յերե-  
րալով, վախիտ կերպով աչք հառելով նրանց վրա, ովքեր ու-  
ժեղ են տվյալ բոլորին: Կառուցիկին իր բոլոր դրվածքներով պա-  
տերազմի ժամանակ մարում էր հեղափոխական վողին, փոխանակ  
պաշտպանելու, զարգացնելու այն :

Այդ կմնա դերմանական պաշտոնական սոցիալ-դեմոկրատիա-  
յի «միջին» առաջնորդի քաղցրենիական բթացման ուղղակի պատ-  
մական հուշարձան, վոր Կառուցիկին նույնիսկ չի հասկանում, թե  
վորպիսի վիթխարի քեռրիական նշանակություն, վորպիսի ե՛լ  
ավելի քաղցրացիոն ու պրոպագանդիստական նշանակություն  
ունի Յեվրոպայի պրոլետարներին «մեղադրելն» այն բանում, վոր  
նրանք դավաճանեցի՛ն ռուսական հեղափոխությանը: Կառուցիկին

չի հասկանում, վոր այդ «մեղադրանքը»—դերմանական «կայսրության» դրաքննական պայմաններում—դրեթե միակ ձևն է, վորով սոցիալիզմին չդավաճանած դերմանական սոցիալիստները, Լիբկնեխտն ու նրա բարեկամները, արտահայտում են իրենց կոչը գերմանական բանվորներին՝ դեն շարտել Շայդեմաններին ու Կաուցկիներին, հետ մղել այդպիսի «առաջնորդներին», ազատվել նրանց բթացնող ու դռեհկացնող քարոզից, հակառակ նրանց, անցնելով նրանց կողքով, նրանց վրայով բարձրանալ դեպի հեղափոխություն, վոտքի յեղնել հեղափոխության համար:

Կաուցկին այդ չի հասկանում: Ել վո՞րտեղից կարող է նա հասկանալ բուլշևիկների տակտիկան: Ընդհանրապես հեղափոխությունից հրաժարվող մի մարդուց կարելի՞ յե արդյոք սպասել, վոր կչառգատի և դնահատի հեղափոխության զարդացման պայմաններն ամենից ավելի «դժվար» դեպքերից մեկում:

Բուլշևիկների տակտիկան ճիշտ էր, միակ ինտերնացիոնալիստական տակտիկան էր, վորովհետև խարսխվում էր վո՞չ թե համաշխարհային հեղափոխությունից յերկշտաբար վախենալու վրա, վո՞չ թե այդ հեղափոխությանը քաղքենիարար «չհավատարու» վրա, վո՞չ թե «իր» հայրենիքը (իր բուրժուազիայի հայրենիքը) պաշտպանելու, իսկ մնացած ամեն ինչի վրա «թփելու»: նեղ-նացիոնալիստական ցանկության վրա, — այն հիմնված էր յեվրոպական հեղափոխական սխտուացիայի ճիշտ (մինչև պատերազմը, մինչև սոցիալ-չովինիստների և սոցիալ-պացիֆիստների ունեցատությունը բոլորի կողմից ընդունված) հաշվառման վրա: Այդ տակտիկան միակ ինտերնացիոնալիստականն էր, վորովհետև կիրառում էր մաքսիստները, ինչ վոր մի յերկրում իրադրվելի յե՞ զարդացնելու, պաշտպանելու, դարթեցնելու համար հեղափոխությունը բոլոր յերկիրներում: Այդ տակտիկան արդարացալ հսկայական հաջողությամբ, վորովհետև բուլշևիզմը (ամենևին մոչ ոտև բուլշևիկների յերախտիքի շնորհիվ, այլ շնորհիվ այն համաբանքի, վոր մասսաներն ամենուրեք խորագույն համակրանք են տածում դեպի իրապես հեղափոխական տակտիկան) դարձալ համաշխարհային բուլշևիզմ, տվեց գաղափար, թերեխ, ծրարիք, տակտիկա, վոր կոնկրետորեն, պրակտիկ կերպով տարբեր է սոցիալ-չովինիզմից ու սոցիալ-պացիֆիզմից: Բուլշևիզմը ջախջախեց Շայդեմանների ու Կաուցկիների, Ռենդելների ու Լոնդոնների, Հենդերսոնների ու Մակդոնալդների հին, փտած ինտերնացիոնալը. նրանք պետք է այժմ միմյանց վոտքերը կոխկրեն՝

յերագելով «միութեան» մասին և դիակին հարուժուած տալով: Բոլշևիկմն ստեղծեց III Ինտերնացիոնալը զազափարային ու տակտակտիկան հիմքերը, մի Ինտերնացիոնալ, վոր խկատես պրոլետարական ու կոմունիստական և, վորը հաշվի յե առնում և՛ խաղաղ դարաշրջանի նվաճումները, և՛ հեղափոխութիւնները սկսված դարաշրջանի փորձը:

Բոլշևիկմն ամբողջ աշխարհովը մեկ ժողովրդականացրեց «պրոլետարիատի դիկտատուրայի» զազափարը, այդ խոսքերը լատիներենից թարգմանեց նախ ուսաներեն, իսկ հետո աշխարհի բոլոր լեզուներով, Խորհրդային իշխանութեան որինակով ցուց տալով, վոր նույնիսկ հետամնաց յերկրի բանվորներն ու չքավորագույն գյուղացիները, նույնիսկ նրանք, ովքեր ամենից պակաս էյին վորձված, կրթված, կազմակերպման սովոր, ի վիճակի յեղան մի ամբողջ տարի՝ վեթխարի գծաբուժուցուցներ կրելով շահագործողների դեմ ուղղված պայքարում (վորոնց պաշտպանում ևր ամբողջ աշխարհի բուրժուազիան), պահպանելու աշխատավորների իշխանութիւնը, ստեղծելու մի դեմոկրատիա, վորն անչափելիորեն ավելի բարձր և և լայն, քան աշխարհի բոլոր նախկին դեմոկրատիաները, սկսելու տասնյակ միլիոնավոր բանվորների և գյուղացիների ստեղծագործութիւնը սոցիալիզմի պրակտիկ իրականացման համար:

Բոլշևիկմը գործով ոգնեց պրոլետարական հեղափոխութեան պարզացմանը Յեթրոպայում ու Ամերիկայում այնպես ուժոյնորեն, ինչպես մինչև այժմ վո՛չ մի յերկրի վո՛չ մի կուսակցութեան չեր հաջողվել ոգնել: Այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհի բանվորները համար որավոր պարզվում և, վոր Շայքեմանների ու կուսակցիւնների տակտիկան չեր փրկում իմպերիալիստական պատերազմից ու իմպերիալիստական բուրժուազիայի վարձու ստրուկը լինելուց, վոր այդ տակտիկան վորպես որինակ բոլոր յերկրները համար՝ անպետք և,—այդ ժամանակ բոլոր յերկրները պրոլետարները մասսաները համար որավոր ավելի յե պարզվում, վոր բոլշևիկմը պատերազմի և իմպերիալիզմի սարսափներից փրկվելու ճիշտ ուղի յե մատնանշել, վոր բոլշևիկմը պիտանի յե վորպես տակտիկայի որինակ բոլորի համար:

Վո՛չ միայն համայնվորպական, այլ համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան և հասունանում բոլորի աչքի առաջ, և այդ հեղափոխութեանը ոգնեց, նրան ոժանդակեց, այն արագացրեց պրոլետարիատի հաղթանակը Ռուսաստանում: Այս ամենը

քի՞չ է սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար: Իհարկե, քիչ է: Մեկ յերկիրն ավելին անել չի կարող: Բայց այդ մեկ յերկիրը, շնորհիվ խորհրդային իշխանության, այնուամենայնիվ, այնքան է արել, վոր նույնիսկ, յեթե վաղը համաշխարհային իմպերիալիզմը, ասենք, անդլո-ֆրանսական իմպերիալիզմի հետ դերմանականի համաձայնության դալու միջոցով ճղմի ուսական խորհրդային իշխանությունը, նույնիսկ վատերից վատթարագույն այդ դեպքում բոլլևիկյան տակտիկան հակայական ողուտ բերած կլինի սոցիալիզմին և ոժանդակած կլինի անհաղթելի համաշխարհային հեղափոխության ամամեր:

## ՍՊԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ \*) ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻՆ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ» ԱՆՎԱՆ ՏԱԿ

Ինչպես արդեն ասվեց, Կաուցկու դերքը պետք է անվանվեր— յեթե վերնադիրը ճիշտ արտահայտեր բովանդակությունը—վո՛չ թե «Պրոլետարիատի դեկտատուրա», այլ «Բոլլևիկներին դեմ ուղղված բուրժուական հարձակումների վերերդություն»:

Մենչևիկներին հին «թեորիաները» ուսական հեղափոխության բուրժուական բնույթի մասին, այսինքն մարքսիզմի հին խեղաթյուրումը մենչևիկներին կողմից (վոր 1905 թ. մերժվե՛ց Կաուցկու կողմից), այժմ նորից է տաքացնում մեր թեորետիկը: Մտիպված պիտի լինեմ կանդ առնել այս հարցի վրա, վորքան ել այդ ձանձրավի յե ուսական մարքսիստներին համար:

Ռուսական հեղափոխությունը բուրժուական է,—ասում եյին Ռուսաստանի բոլոր մարքսիստները 1905 թվականի նախորեյին: Մարքսիզմը նեղափոխելով լիբերալիզմով, մենչևիկներն այստեղից յեզրակացնում եյին. հետևաբար, պրոլետարիատն առաջ չպետք է դնա այն բանից, ինչ ընդունելի յե բուրժուազիայի համար, նա պետք է վարի բուրժուազիայի հետ համաձայնելու քաղաքականություն: Բոլլևիկներն ասում եյին, վոր այդ լիբերալ-բուրժուական թեորիա յե: Բուրժուազիան ձգտում է պետություն բարեփոխություն կատարել՝ բուրժուականորեն, ռեֆորմիստորեն, և վո՛չ թե հեղափոխականորեն, ըստ հնարավորության պահպանելով թե՛ միապետությունը, թե՛ կալվածատիրական հողատիրությունը և այլն: Պրոլետարիատը պետք է

\*) Ձեռագրում՝ «Պաշտպանություն»: Խմբ.:

մինչև վերջը տանի բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը, թույլ չտալով, վոր իրեն «կաշկանդեն» բուրժուադիայի ունեֆորմիզմով: Ուժերի դասակարգային հարաբերակցությունը բուրժուական հեղափոխության ժամանակ բողջեւիկները ձևակերպում էին այսպես. պրոլետարիատը իրեն միացնելով դյուղացիությունը, չեզոքացնում է լիբերալ բուրժուադիային և մինչև վերջը կործանում միապետությունը, միջնադարականությունը, կալվածատիրական հողատիրությունը:

Այն դաշինքում, վոր պրոլետարիատը կնքում է ընդհանրապես դյուղացիության հետ, հենց յերևան է դալիս հեղափոխության բուրժուական բնույթը, վորովհետև ընդհանրապես դյուղացիությունը մանր արտադրողներ են, վորոնք կանգնած են սպրանքային արտադրության հողի վրա: Այնուհետև, հենց այն ժամանակ ավելացնում էին բողջեւիկները, պրոլետարիատն իրեն է միացնում ամբողջ կիսապրոլետարիատը (բոլոր շահագործվողներին ու աշխատավորներին), չեզոքացնում է միջակ դյուղացիությունը և տապալում է բուրժուադիային. դրանում է կայանում սոցիալիստական հեղափոխությունն՝ ի տարբերություն բուրժուական-դեմոկրատականից: (Տես 1905 թվականի իմ բրոշյուրը՝ «Յերկու տակտիկա», վոր արտատպւած է «За 12 лет» ժողովածուի մեջ, Պետերբուրգ, 1907 թ.\*):

Կառուցկին 1905 թվին անուղղակի կերպով մասնակցեց այդ վիճարանությանը, ի ստատոսիս այն ժամանակվա մենչեիկ Պլեխանովի հարցման, ըստ բանի եյության, արտահայտվելով ընդդեմ Պլեխանովի, վոր այն ժամանակ հարուցեց բողջեւիկյան մամուլի հատուկ ծաղրը<sup>17</sup>): Այժմ Կառուցկին մի բառով եւ չի մտաբերում այդ ժամանակվա վիճարանությունները (վասնում է իր իսկ հայտարարություններով մերկացվելուց) և դրանով դերմանական ընթերցողին զրկում է բանի եյությունն ըմբռնելու ամեն մի հնարավորությունից: Պարոն Կառուցկին չէր կարող դերմանական բանվորներին 1918 թվին սլամբել այն մասին, թե ինչպես ինքը 1905 թվականին կողմնակից եր բանվորների դաշինքին դյուղացիների և վոչ թե լիբերալ բուրժուադիայի հետ, և թե ինչ սլամբաններով եր նա սլաշտպանում այդ դաշինքը, ինչ ծրագիր եր նախադժում այդ դաշինքի համար:

Հետ նահանջելով, Կառուցկին «տնտեսական վերլուծության»

\*) Տես Յերկերի VIII հատ., ուսու. էջ 27—126: Խմբ.:

անվան տակ, «սպտմական մատերիալիզմի» վերաբերյալ հստակ ֆրազներով այժմ պաշտպանում և բանվորների յենթարկումը բուրժուազիային, մենչևիկ Մասլովից վերցրած ցիտատների ողնությամբ ծամծամելով մենչևիկներին հին լիբերալ հայացքները. ընդամին մեջբերումներով ապացուցվում և Ռուսաստանի հետամնացության վերաբերյալ նոր միտքը, իսկ այդ նոր մտքից արվում և հին յեղրակացութուն այն վողով, թե իբր բուրժուական հեղափոխության ժամանակ չպետք և բուրժուազիայից ավելի հեռուն դնալ: Յեւ այդ հակառակ այն ամենի՛ն, ինչ ասում էլին Մարքսն ու Ենդելսը, համեմատելով Ֆրանսիայի 1789—1793 թվականների բուրժուական հեղափոխութունը Գերմանիայի 1848 թ. բուրժուական հեղափոխության հետ<sup>18</sup>):

Նախքան Կառուցիչը դիտարկելու «սխառարկիւն» ու «տնտեսական վերլուծության» դիտարկումը բովանդակությանն անցնելը նշենք, Վոր առաջին իսկ նախադասութունները յերևան են բերում հեղինակի մտքերի կուրյոզային խառնաշփոթութունը կամ նրա մտքերի կռադատված չլինելը.

«Ռուսաստանի տնտեսական հիմք — աղարարում և մեր «թեորետիկը» — մինչև այժմ հանդիսանում և դուրդատնտեսութունը, ըստվորում հենց դուրդացիական մանր արտադրութունը: Նրանով աղբում և բնակչության մոտ <sup>4</sup>/<sub>5</sub>-ը, գուցե նույնիսկ <sup>5</sup>/<sub>6</sub>-ը» (եջ 45): Նախ, սիրալիբ թեորետիկ, մտածե՛ր և քարոզող գուք, թե մանր արտադրողների այդ մասսայի մեջ վորքան շահագործող կարող և լինել: Իհարկէ, նրանց ամբողջ թվի <sup>1</sup>/<sub>10</sub>-ից մոտ ավելին, իսկ քաղաքներում ե՛լ ավելի պակաս, վորովհետև այնտեղ խոշոր արտադրութունը ավելի յե զարգացած: Վերցրենք նույնիսկ անհավանական բարձր թվանշան, յենթադրեցենք, վոր մանր արտադրողներ <sup>1</sup>/<sub>5</sub>-ը շահագործողներ են, վորոնք կորցնում են ընտրական իրավունքը: Յեւ այն ժամանակ դուք կստանաք, վոր Սորհուրդների V Համադումարում 66% կադմոդը լուչեիկները ներկայացնում էլին բնակչության մեծամասնութունը: Իսկ դրան պետք և նույնպես ավելացնել, վոր ձախ եսերներին մեջ դալի մասը միշտ կողմնակից և յեղել Սորհուրդային իշխանության, այսինքն սկզբունքով բոլոր ձախ եսերները կողմնակից էլին Սորհուրդային իշխանության, իսկ յերբ ձախ եսերներին մի մասը 1918 թ. հուլիսին դիմեց ասպտամբության ավանադուրայի, այն ժամանակ նրանց նախկին կուսակցութունից բաժանվեցին յերկու նոր կուսակցութուն՝ «նարոդնիկ կո-

մունիստները» և «Տեղափոխական կոմունիստները» կուսակցությունները (ականավոր ձախ եսերները, վորոնց դեռևս հին կուսակցությունն առաջ եր քաշում պետական կարևորագույն պոստերի համար. առաջինին պատկանում է, որինակ, Չակսը, յերկրորդին՝ Կոլեդայելը)։ Հետևաբար, Կաուցկին ինքը—անակընկալ կերպով—հերքեց այն ծիծաղաշարժ հեքիաթը, թե իբր բոլշևիկներին կողմնակից է բնակչության փոքրամասնությունը։

2-րդ, սիրալի՛ր թեորեաիկ, արդյոք մտածե՞լ էք դուք այն մասին, վոր դյուզացիական մանր արտադրողն անխուսափելիորեն տատանվում է պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Յեվրոպայի ամբողջ նորագույն պատմությամբ հաստատված այս մարքսիստական ճշմարտությունը Կաուցկին շատ ի դեպ «մոռացել է», վորովհետև այդ ճշմարտությունը ջարդուվչուր է անում Կաուցկու կողմից կրկնվող ամբողջ մենշևիկյան «թեորիան»։ Յեթե Կաուցկին «չմոռանար» այդ, նա չէր կարողանա բացասել պրոլետարական դիկտատուրայի անհրաժեշտությունը մի յերկրում, վորտեղ դերակշռում են դյուզացիական մանր արտադրողները։

Քննարկենք մեր թեորեաիկի «տնտեսական վերլուծության» գլխավոր բովանդակությունը։

Վոր խորհրդային իշխանությունը դիկտատուրա չէ, այդ անվիճելի չէ, ասում է Կաուցկին։

«Քայց արդյոք պրոլետարիատի՞ գիկտատուրա չէ այդ» (եջ 34)։

«Դյուզացիներն, ըստ խորհրդային սահմանադրության, կազմում են որենդրությանն ու կառավարմանը մասնակցելու իրավունք ունեցող բնակչության մեծամասնությունը։ Այն, ինչ վոր մեզ ներկայացնում են վորպես պրոլետարիատի դիկտատուրա, դուրս կդար գյուղացիության դիկտատուրա, յեթե այդ կիրավեր հետևողականորեն և յեթե մի դասակարգ, ընդհանրապես ասած, կարողանար անմիջականորեն իրագործել դիկտատուրան, վորն իրագործելի չէ կուսակցության համար միայն»։ (եջ 35)։

Յեվ այդքան խորիմաստ ու սրամիտ դատողությունից չափազանց դժ՛բարի Կաուցկին փորձ է անում սրախոսելու. «կարծես թե դուրս է դալիս, վոր իբր թե սոցիալիզմի ամենից ավելի անհիմանդազին իրականացումն ապահովված է այն ժամանակ, յերբ այն տրվում է դյուզացիներին ձեռքը» (եջ 35)։

Մեր թեորեաիկը ամենամանրամասն կերպով, կիսալիբերալ Մասլովից վերցրած մի շարք չափազանց դիտնական ցիտատներով ապացուցում է մի նոր միտք, թե դյուզացիները չահագըր-

գլըւլած են հացի բարձր դներով, քաղաքային բանվորների ցածր աշխատավարձով և այլն և այլն: Այս նոր մտքերն, իդեալ ասած, այնքան ավելի ձանձրալի յեն շարադրված, վորքան պակաս և ուշադրութուն դարձված հետպատերազմյան ժամանակի իսկապես նոր յերեւոյթները վրա, որինակ, այն բանի վրա, վոր գյուղացիները հացի դիմաց պահանջում են վոչ թե փող, այլ ապրանքներ, վոր գյուղացիներն այնպիսի դործիքների պակաս են դդում, վորոնք անհրաժեշտ թվով ճարել չի կարելի վոչ մի դնով: Այս մասին ստորև դեռ հատուկ կերպով կխոսենք:

Այսպիսով, Կառուցիկն մեղադրում է բոլշեիկներին, սլոլե-տարիատի կուսակցութունը, այն բանի համար, վոր սա տվել է դիկտատուրան, սոցիալիզմը կիրառելու դործը տվել է մանր-բուրժուական գյուղացիության ձեռքը: Հիանալի՛ յե, պարոն Կառուցիկ: Ապա, ձեր լուսավոր կարծիքով, սլոլետարական կուսակցութունն ի՞նչպիսի հարաբերությունների մեջ պետք է դտնվեր մանր-բուրժուական գյուղացիության հետ:

Այդ մասին մեր թեորետիկը դերադասել և լուել,—յերևի մտարեբերլով այն առածը, վոր «խոսքն արծաթ և, լուությունը՝ վոսկի»: Բայց Կառուցիկն իրեն մատնել է հետևյալ դատողու-թյամբ.

«Խորհրդային Հանրապետության սկզբում Գյուղացիական Խորհուրդները ներկայացնում էին ընդհանրապես գյուղացիության կազմակերպություններ: Այժմ այդ Հանրապետության ազգարարում և, վոր Խորհուրդները ներկայացնում են սլոլետարների և չքավոր գյուղացիների կազմակերպություններ: Ունեորները կորցնում են Խորհուրդների ընտրությանը մասնակցելու իրավունքը: Չքավոր գյուղացին այստեղ ճանաչվում և սոցիալիստական ազգաբային ռեֆորմի մշտական ու մասսայական արդյունք «սլոլետարիատի դիկտատուրայի» որով» (եջ 48):

Վորպիսի՛ սպանիչ հեղնանք: Ռուսաստանում այդ կարելի յե լսել ամեն մի բուրժուայից. նրանք բոլորն ել շարախնդում ու ծիծաղում են, վոր Խորհրդային Հանրապետությունը բացահայտ կերպով խոստովանում է չքավորագույն գյուղացիների դոյու-թյունը: Նրանք ծիծաղում են սոցիալիզմի վրա: Այդ նրանց իրավունքն է: Բայց «սոցիալիստ», վորը ծիծաղում է այն բանի վրա, թե քառամյա ամենաավերիչ պատերազմից հետո մեզանում մնում են—և յերկար ժամանակ կմնան—չքավորագույն գյուղացիներ, այդպիսի «սոցիալիստը» կարող եր ծնվել մի-այն մասսայական ռենեզատության պայմաններում:

Լսեցե՛ք շարունակությունը.

«... Խորհրդային Հանրապետութիւնը խառնվում է հարուստ և չքավոր գյուղացիների հարարերութիւնների մեջ, բայց վոչ հողի նոր բաշխման միջոցով: Գաղաքացիների հացի կարիքը վերացնելու համար գյուղերն են ուղարկվում դինված բանվորների ջոկատներ, վորոնք հարուստ գյուղացիներից խլում են հացի ավելցուկները: Այդ հացի մի մասը տրվում է քաղաքային բնակչութանը, մյուսը՝ չքավորագույն գյուղացիներին» (Եջ 48):

Հարկիւմ, սոցիալիստ և մարքսիստ Կառուցիկին խորապէս վերդովված է այն մտքից, վոր այսպիսի միջոցը կարող էր տարածվել ավելի հեռուն, քան մեծ քաղաքի շրջակայքն է (իսկ մեղանում այդ միջոցը տարածվում է ամբողջ յերկրի վրա): Սոցիալիստ և մարքսիստ Կառուցիկին խրատական շեշտով, Ֆիլիստերի աննման, անդուգական, սքանչելի սառնասրտութեամբ (կամ բթամտութեամբ) նկատում է. «...Դրանք (ունենոր գյուղացիների եքսպրոպրիացիաները) անհանդատութեան և քաղաքացիական պատերազմի նոր տարր են մտցնում արտադրութեան պրոցեսի մեջ»... («արտադրութեան պրոցեսի մեջ» մտցվող քաղաքացիական պատերազմ, այս արդեն ինչ-վոր զերբնակա՞ն բան է)... «վորն իր առողջացման համար անհրաժեշտարար կարիք ունի անդորրութեան ու անվտանգութեան» (49):

Այո՛, այո՛, շահագործողների և հացի ավելցուկները թաղանոց, հացի մոնոպոլիայի որեւնքը վիժեցնող, քաղաքները բնակչութիւնը սովի հասցնող հացի սպեկուլանտների անդորրութեան և անվտանգութեան համար մարքսիստ և սոցիալիստ Կառուցիկին, իհարկէ, պետք է վոր հառաչի ու արցունք թափի: Մենք բոլորս սոցիալիստներ ենք և մարքսիստներ ու ինտերնացիոնալիստներ — խմբովին ճշում են պարոնայք Կառուցիկները, Հայնրիխ Վերերները (Վիլեննա), Լոնգեն (Փարիզ), Մակգոնալլը (Լոնդոն) և այլն — մենք բոլորս կողմնակից ենք բանվոր դասակարգի հեղափոխութեան, միայն թէ... միայն թէ այնպէս, վոր չխանգարվի հացի սպեկուլանտների անդորրութեանն ու անվտանգութեանը: Յեւ կապիտալիստներին արված այս կեղտոտ սպասավորութիւնը մենք թողարկում ենք «արտադրութեան պրոցեսի» վերաբերյալ «մարքսիստական» մատնանշումով... Յեւ թէ այս մարքսիզմ է, ապա էլ ի՞նչն է կոչվում լաբելութիւն բուրժուազիայի առաջ:

Տեսեք, թէ ինչ ստացվեց մեր թեորեալիկի ասածներից: Նա բողջեիկներին մեղադրում է այն բանի համար, վոր նրանք գյուղացիութեան դիկտատուրան հրամցնում են իրրև պրոլետարիատի դիկտատուրա: Յեւ միևնույն Ժամանակ նա մեզ մե-

զադրում և այն բանի համար, վոր մենք քաղաքացիական պա-  
տերազմ ենք մտցնում գյուղը (այդ մենք համարում ենք մեր  
յերախտիքը), վոր մենք գյուղ ենք ուղարկում զինված բանվոր-  
ների ջոկատներ, վորոնք բացահայտ կերպով աղարարում են,  
վոր իրականացնում են «պրոլետարիատի և չքավորազույն գյու-  
ղացիության դիկտատուրան», ոգնում են այդ գյուղացիությա-  
նը սպեկուլանտներից, հարուստ գյուղացիներից եքսպրոպրիա-  
ցիայի յեն յենթարկում հացի ավելցուկները, վոր նրանք թագ-  
ցընում են՝ խախտելով հացի մոնոպոլիայի որենքը:

Մի կողմից, մեր մարքսիստ-թեորետիկը կողմնակից է մա-  
քուր դեմոկրատիայի, կողմնակից է, վոր հեղափոխական դա-  
սակարգը՝ աշխատավորների և շահագործվողների առաջնորդը  
յենթարկվի բնակչության մեծամասնությանը (հետևաբար, ներ-  
առյալ նաև շահագործողներին): Մյուս կողմից, նա մեր դեմ  
պարզաբանություն և անում, թե հեղափոխության բուրժուական  
բնույթն անխուսափելի յե, բուրժուական այն պատճառով, վոր  
գյուղացիությունն ամբողջովին վերցրած՝ կանգնած է բուր-  
ժուական հասարակական հարաբերությունների հողի վրա, և  
միևնույն ժամանակ կաուցիկն հավակնություն ունի պրոլետա-  
րական, դասակարգային, մարքսիստական տեսակետի պաշտ-  
պա՛նը լինելու:

«Տնտեսական վերլուծություն» փոխարեն, շխտիլով և այդ  
և առաջին տեսակի խառնաշփոթություն: Մարքսիզմի փոխարեն,  
այդ լրբերալ ուսմունքների կտորտանքներ են և բուրժուազիայի  
առաջ ու կուլակների առաջ լաքեյություն անելու քարոզ:

Կաուցիկու խճճած հարցը բուլճեիկներն արդեն 1905 թվին  
պարզաբանել են լիովին: Այո՛, մեր հեղափոխությունը բուր-  
ժուական է, քանի դեռ մենք միասին ենք գնում գյուղացիու-  
թյան, իրբև ամբողջի հետ: Այդ մենք պարզից ել պարզ ենք  
դիտակցել, 1905 թվականից սկսած հարյուրավոր ու հազարա-  
վոր անդամ ասել ենք, յերբեք չենք փորձել պատմական պրո-  
ցեսի այդ անհրաժեշտ աստիճանի վրայով վոչ ցատկել, վոչ ել  
գեկրետներով վերացնել այն: Մեզ այս կետում «մերկացնելու»  
համար կաուցիկու գործադրած ճիգերը մերկացնում են միայն  
նրա հայացքների խառնաշփոթությունը և նրա վախը՝ մտաբե-  
րելու այն, ինչ վոր նա դրում եր 1905 թվին, յերբ դեռևս ու-  
նեկատ չեր:

Բայց 1917 թվականին, ապրիլ ամսից սկսած, Հոկտեմբերյան

հեղափոխութիւնից շատ առաջ, մինչև մեր կողմից իշխանութիւն վերցնելը, մենք բացահայտորեն ասում եյինք ու սլար-զարանում ժողովրդին. հեղափոխութիւնը սրա վրա այժմ չի կարողանա կանգ առնել, վորովհետև յերկիրն առաջ և դնացել, կապիտալիզմը քայլել և դեպի առաջ, չտեսնված չափերի յե հասել քայքայումը, վորը կպահանջի (վորևէ մեկը ցանկանում և այդ, թե վոչ), կպահանջի քայլեր դեպի առաջ, դեպի սոցիալիզմը: Վորովհետև այլ կերպ առաջ դնալ, այլ կերպ վերելն պատերազմից խոշտանդված յերկիրը, այլ կերպ քեք-կացնել աշխատավորներին և շահագործվողներին տանջանքները չի կարելի:

Հենց այնպես դուրս յեկալ, ինչպես մենք եյինք ասում: Հեղափոխութեան ընթացքը հաստատեց մեր դատողութեան ճշտութիւնը: Սկզբում «ամբողջ» դյուղացիութեան հետ միասին՝ ընդդէմ միապետութեան, ընդդէմ կալվածատերերի, ընդդէմ միջնադարականութեան (և այդ չափով հեղափոխութիւնը մնում և բուրժուական, բուրժուական-դեմոկրատական): Այլա, չքավորագույն դյուղացիութեան հետ միասին, կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործվողներին հետ միասին՝ ընդդէմ կապիտալիզմի, այդ թիւում ընդդէմ դյուղական հարուստներին, կուլակներին, սպեկուլանտներին,—և այդ չափով հեղափոխութիւնը դառնում և սոցիալիստական: Փորձել մեկի և մյուսի միջև արհեստական չինական պարիսպ քաշել, նրանց միմյանցից բաժանել վորևէ այլ բանով, բացի պրոլետարիատի նախապատրաստութեան աստիճանը և դյուղացիական չքավորութեան հետ նրա միավորման աստիճանը, այդ—մարքսիզմի մեծագույն խեղաթյուրումն և, նրա դուհակացումը, փոխարինումը լիբերալիզմով: Այդ կնշանակէր միջնադարականութեան համեմատութեամբ բուրժուադեպի առաջադիմական լինելու վերաբերյալ իբր-զիտական մատնանշումներ անելու միջոցով՝ անցկացնել բուրժուազլալի ուսակցիոն պաշտպանութիւնը, ընդդէմ սոցիալիստական պրոլետարիատի:

Սորհուրդներն, ի միջի այլոց, հենց այն պատճառով են ներկայացնում դեմոկրատիզմի անչափ ավելի բարձր ձևն ու տիպը, վոր բանվորների և գյուղացիների մասսան միավորելով ու քաղաքականութեան մեջ քաշելով, նրանք տալիս են «ժողովրդին» ամենից մոտիկ (այն իմաստով, ինչ իմաստով Մարքսը 1871 թվականին խոսում էր իսկական ժողովրդական հեղափոխութեան մասին)<sup>19)</sup>, ամենազգայուն ծանրաչափը, մասսաների քաղաքա-

կան, դասակարգային հասունութեան դարձացման ու աճման ծանրաչափը: Խորհրդային սահմանադրութիւնը չի դրվել վերեւ «պլանով», չի կազմվել առանձնասենյակներում, չի փաթաթվել աշխատավորների վզին բուրժուազիայից յեւած իրավարանների կողմից: Վո՛չ, այդ սահմանադրութիւնն անել է դասակարգային կռիւի զարգացման ընթացքից՝ դասակարգային հակառութուններին հասունացման համեմատ: Հենց այն փաստերը, վորոնք հարկադրված է ընդունել Կառուցիկն, այդ են ապացուցում:

Խորհուրդներն սկզբում միավորում էին դյուղացիութիւնն ամբողջութեամբ վերցրած: Հենց չքավորագույն դյուղացիների անդարդացածութիւնը, հետամնացութիւնը, տգիտութիւնը՝ դեկավարութիւնը հանձնում էին կուլակների, հարուստների, կապիտալիստների, մանր բուրժուազիայի, մանր-բուրժուական մտավորականների ձեռքը: Այդ մանր բուրժուազիայի, մենչեիկների և սոցիալիստ-հեղափոխականների տիրապետութեան ժամանակն էր (մենչեիկներին և սոցիալիստ-հեղափոխականներին համարել սոցիալիստ կարող են միայն հիմարները, կամ Կառուցիու նման ունեզատները): Մանր բուրժուազիան անսպասմանորեն, անխուսափելիորեն տատանվում էր բուրժուազիայի դիկտատուրայի (Գերեմսիկի, Կոռնիլով, Սալինկով) և սլոյտարիատի դիկտատուրայի միջև, վորովհետև մանր բուրժուազիան իր անտեսական դրութեան արմատական հատկութիւնների հետեանքով վորեւէ ինքնուրույն բանի ընդունակ չէ: Ի դեպ ասած, Կառուցիկն լիովին հրաժարվում է մարքսիզմից, ուսական հեղափոխութիւնը վերլուծելիս ոճիք թափելով «դեմոկրատիայի» իրավարանական, ձեւական հասկացողութեամբ, վորը ծառայում է բուրժուազիային՝ իր տիրապետութիւնը քողարկելու և մասսաներին խաբելու համար, և մոռանալով այն, վոր «դեմոկրատիան» իրականում յերբեմն արտահայտում է բուրժուազիայի դիկտատուրան, յերբեմն այդ դիկտատուրային յենթարկվող քաղքենիութեան անզոր ռեֆորմիզմը և այլն: Ըստ Կառուցիու այնպես է դուրս գալիս, վոր կապիտալիստական յերկրում յեղել են բուրժուական կուսակցութիւններ, յեղել է սլոյտարիական կուսակցութիւն, վորն իր հետեից էր տանում սլոյտարիատի մեծամասնութիւնը, նրա մասսան (բուլչեիկներ), բայց չե՛ն յեղել մանր-բուրժուական կուսակցութիւններ: Մենչեիկներն ու եսերները չե՛ն ունեցել դասակարգային արմատներ, մանր-բուրժուական արմատներ:

Մանր բուրժուազիայի, մենչեիկների և եսերների տատա-

նումները լուսավորեցին մասսաներին և այդպիսի «առաջնորդներից» վանեցին այդ մասսաների հսկայական մեծամասնությունը, բոլոր «ներքնախավերը», բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին :

Սորհուրդներում բոլշևիկները գերակշռություն ստացան (Պիտերում և Մոսկվայում 1917 թ. հոկտեմբերի նախորյակին), ևսերների և մենշևիկների մեջ ուժեղացավ պառակտումը :

Հաղթանակած բոլշևիկյան հեղափոխությունը նշանակում էր տատանումների վերջ, նշանակում էր միապետության և կարգավատիրական հողատիրության լիակատար կործանում (այդ հողատիրությունը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը կործանված չէր) : Մենք մինչև վերջը հասցրինք բուրժուական հեղափոխությունը : Գյուղացիությունն ամբողջաբայաբար վերցրած դեռավ էր մեր հետևից : Նրա հակամարտությունը սոցիալիստական պրոլետարիատի նկատմամբ չէր կարող յերևան դալ մի վայրկյանում : Սորհուրդները միավորում էյին գյուղացիությունն ընդհանրապես : Դասակարգային բաժանումը գյուղացիության ներսում գեռևս չէր հասունացել, գեռևս չէր դրսևորվել :

Այդ պրոցեսը դարգացավ 1918 թվականի ամառն ու աշնանը : Չեխո-սլովակյան հակահեղափոխական ապստամբությունն արթնացրեց կուլակներին : Ռուսաստանով անցավ կուլակային ապստամբությունների ալիքը : Չքավորագույն գյուղացիությունը վոչ թե դրքերից, վոչ թե լրագրերից, այլ կյանքից էր սովորում իր շահերի անհաշտելիությունը կուլակների, հարուստների, գյուղական բուրժուազիայի շահերի հետ : «Չախ ևսերները», ինչպես ամեն մի մանր-բուրժուական կուսակցություն, արտացոլում էյին մասսաների տատանումները, և նրանք հենց 1918 թվի ամառը պառակտվեցին . մի մասը դնաց չեխո-սլովակներին հետ միասին (ապստամբությունը Մոսկվայում, յերբ Պուշյանը, դրավելով հեռադրատունը — մի՛ ժամով — ծանուցում էր Ռուսաստանին բոլշևիկների սապարման մասին, այնուհետև չեխո-սլովակները դեմ դործող բանակի գլխավոր հրամանատար Մուրավյովի դավաճանությունը և այլն), վերևում հիշված մասը մնաց բոլշևիկների հետ :

Պարենային կարվքի սրումը քաղաքներում ավելի ու ավելի կարուկ էր դնում հացի մոնոպոլիայի հարցը (յորի մասին «մոռացե՛լ և» թերթատիկ Կաուցկին իր տեսեսական վերլուծության

մեջ, վերը կրկնում ե տասը տարի առաջ Մասլովի գրվածքում կարգացածը) :

Հին, կալվածատիրական ու բուրժուական, նույնիսկ դեմոկրատական հանրապետական պետութիւնը գյուղ եր ուղարկում զինված ջոկատներ, վորոնք փաստորեն գտնվում եյին բուրժուազիայի տրամադրութեան տակ : Պարոն Կառուցկին այդ չգիտե՛ : Դրանում նա չի տեսնում «բուրժուազիայի դիկտատուրա», աստ՝ վա՛ճ չանի : Այդ—«մաքո՛ւր դեմոկրատիա յե», մանավանդ, յեթե բուրժուական պառլամենտի հավանութիւնը ստանար : Այն մասին, թե ինչպե՞ս Ավիսենտյեփն ու Ս. Մասլովը՝ Կերենսկիներէ, Ծերեթեկիներէ և այլ եսերներէ ու մենչևիկներէ ընկերակցութեամբ 1917 թվի ամառն ու աշնանը ձերբակալում եյին հողային կոմիտեներէի անդամներին, — այդ մասին Կառուցկին «չի՛ լսել», այդ մասին նա լռո՛ւմ ե :

Ամբողջ բանն այն ե, վոր դեմոկրատիկ հանրապետութեան միջոցով բուրժուազիայի դիկտատուրան իրականացնող բուրժուական պետութիւնը ժողովրդի առաջ չի կարող խոստովանել այն, վոր ինքը ծառայում ե բուրժուազիային, չի կարող ասել ճշմարտութիւնը, ստիպված ե կեղծավորութիւն անել :

Իսկ Կոմունայի տիպի պետութիւնը, խորհրդային պետութիւնը բացահայտորեն և ուղղակի ասում ե ժողովրդին ոչնչատալքունը, հայտարարելով, վոր ինքը պրոլետարիատի ու չքավորազույն գյուղացիութեան դիկտատուրան ե, հենց այդ ճշմարտութեամբ իր կողմը գրավելով ամեն մի դեմոկրատիկ հանրապետութեան որով ծեծկված տասնյակ և տասնյակ միլիոնավոր նոր քաղաքացիներ, վորոնք խորհուրդներէ կողմից ներգրավվում են քաղաքականութեան մեջ, դեմոկրատիայի մեջ, պետութեան կառավարման դործի մեջ : Խորհրդային Հանրապետութիւնն ուղարկում ե գյուղերը զինված բանվորներէ ջոկատներ. առաջին հերթին ակելի առաջավորներին, մայրաքաղաքներէց : Այդ բանվորները սոցիալիզմ են տանում գյուղը, իրենց կողմն են դրամ վում չքավորութիւնը, կազմակերպում ու լուսավորում են նրան, ոգնում են նրան՝ անշեյու բուրժուազիայի դիմադրութիւնը :

Ի ուր նրանք, ովքեր դործը գիտեն և յեղել են գյուղում, ասում են, վոր մեր գյուղը միայն 1918 թվի ամառն ու աշնանն ե ինքն ապրում «հոկտեմբերյան» (այսինքն պրոլետարական) «հեղափոխութիւնը» : Վրա յե հասնում բեկումը : Կուլակային ասպտամբութիւններէ ակիքին փոխարինում ե չքավորութեան

վերելքը, «չքաղտորության կոմիտեաների» աճումը: Բանակում ա-  
ճում է բանվորներից յեւած կոմիսարների, բանվորներից յեւած  
սպանների, գերվիզիանների ու բանակիների՝ բանվորներից յեւած  
հրամանատարների թիւը: Այն ժամանակ, յերբ\*) Կառուցկին՝  
վախեցած հուլիսյան (1918 թ.) ճգնաժամից և բուրժուազիայի  
վայնասուռնից, «աքլորալաղ և տալիս» բուրժուազիայի հետեից  
և գրում է մի ամբողջ բրոշյուր, վորը տողորված է այն համոզ-  
մունքով, թե բուլճարիկները գտնվում են գյուղացիության կողմից  
տապալվելու նախորդակին, — այն ժամանակ, յերբ Կառուցկին\*\*)  
ձախ ետերների անջատվելու մեջ տեսնում է բուլճարիկներին պաշտ-  
պանողների չըջանի «նեղացում» (էջ 37), — այդ ժամանակ բու-  
լճիզմի կողմնակիցների իսկական չըջանն անսահմանորեն աճում  
է, վորովհետև ինքնուրույն քաղաքական կյանքի համար արթնա-  
նում են տասնյակ և տասնյակ միլիոնավոր գյուղական չքավոր-  
ներ, ազատվելով կուլակների ու գյուղական բուրժուազիայի  
խնամակալութունից և սզղեցութունից:

Մենք կորցրինք հարյուրավոր ձախ ետերներ, անհաստատա-  
կամ ինտելիգենտներ և գյուղացի-կուլակներ, մենք ձեռք բերինք  
չքաղտորության միլիոնավոր ներկայացուցիչներ\*\*\*):

Մայրաքաղաքներում տեղի ունեցած պրոլետարական հեղա-  
փոխութունից մի տարի անց, նրա ազղեցությամբ ու նրա ող-  
նությամբ, գյուղական խուլ վայրերում վրա հասավ պրոլետա-  
րական հեղափոխութունը, վորը վերջնականապես ամբացրեց  
Պորհրդային իշխանութունն ու բուլճարիզմը, վերջնականապես  
ապացուցեց, վոր յերկրի ներսում բուլճարիզմի դեմ ուժեր չկան:

Ավարտելով բուրժուական-դեմոկրատական հեղափոխու-  
թյունն ընդհանրապես գյուղացիության հետ միասին, Ռուսաս-  
տանի պրոլետարիատը վերջնականապես անցավ սոցիալիստական  
հեղափոխության, յերբ նրան հաջողվեց պառակտել գյուղը, իրեն  
միացնել նրա պրոլետարներին ու կիսապրոլետարներին, նրանց  
միավորել կուլակների և բուրժուազիայի դեմ, այդ թիվում գյու-  
ղացիական բուրժուազիայի դեմ:

Այ, յեթե մայրաքաղաքների ու արդյունաբերական խոշոր

\*) Ձեռագրում դրան հետևում է՝ «տխմար»: Խմբ.:

\*\*) Ձեռագրում՝ «այս տխմարը»: Խմբ.:

\*\*\*) Պորհուրդների VI համադումարում (1918 թ. IX 7—9) վճռողական  
ձայնով 967 պատգամավորներ կային, վորոնցից 950-ը բուլճարիկ, ու խորհրդ-  
դակցական ձայնով՝ 351 հ. վորոնցից 335-ը բուլճարիկ: Ընդամենը 97% բու-  
լճարիկներ: (Այս ծանոթագրութունը ձեռագրում չկա: Խմբ.):

Ֆենտրոնները բուլճարի կյանքը պրոլետարիատը չկարողանար իր շուրջը միավորել դյուղական չքավորութունն ընդդեմ հարուստ դյուղացիութան, այն ժամանակ դրանով սպացուցված կլինեք միուսաստանը «հասունացած չլինելը» սոցիալիստական հեղափոխության համար, այն ժամանակ դյուղացիութունը կմնար «ամբողջ», այսինքն կմնար կուլակների, հարուստների, բուրժուազիայի տնտեսական, քաղաքական և հոգևոր ղեկավարության տակ, այն ժամանակ հեղափոխութունը չէր դուրս գա բուրժուական-դեմոկրատական հեղափոխության սահմաններից: (Բայց դրանով էլ, փակադժերում ասած, սպացուցված չէր լինի, թե պրոլետարիատը չպետք է իշխանութունը վերցնեք, վորովհետև միայն պրոլետարիատը իսկապես մինչև վերջը հասցրեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխութունը, միայն պրոլետարիատը վորոշ լուրջ բան արեց՝ մոտեցնելու համար համաշխարհային պրոլետարական հեղափոխութունը, միայն պրոլետարիատն ստեղծեց խորհրդային պետութունը, վորը կոմունայից հետո յերկրորդ քայլն է սոցիալիստական պետութան ուղղությամբ):

Մյուս կողմից, յեթե բուլճարի կյանքը պրոլետարիատը 1917 թվի հոկտեմբեր-նոյեմբերին փորձ անեք միանգամից, չկարողանալով սպասել դյուղի դասակարգային շերտավորման, չկարողանալով նախապատրաստել ու անցկացնել այն, փորձ անեք «դեկրետներ» քաղաքացիական պատերազմը կամ «սոցիալիզմ մտցնելը» դուրս դուրս, փորձ անեք յուր ղնալ առանց ընդհանրապես դյուղացիության հետ ժամանակավոր բռնի (դաշինք) կնքելու, առանց միջակ դյուղացուն արված մի շարք զիջումների և այլն, — այն ժամանակ այդ կլինեք մարքսիզմի բլանկիստական խեղաթյուրում, այն ժամանակ այդ կլինեք մի փորձ՝ փոքրամասնության կողմից իր կամքը փաթաթելու մեծամասնության վրին, այն ժամանակ այդ կլինեք թեորիական անհեթեթութուն, չըմբռնելն այն բանի, վոր ընդհանուր-դյուղացիական հեղափոխութունը դեռևս բուրժուական հեղափոխութուն է և վոր հետամնաց յերկրում այն չի կարելի սոցիալիստական դարձնել առանց մի շարք անցումների, անցման աստիճանների:

Կաուցկին ամեն ինչ շփոթել է թեորիական և քաղաքական կարևորագույն հարցում և դործնականում դուրս է յեկել պարզապես իբրև բուրժուազիայի սպասավոր, վորը վայնասուն է բարձրացնում պրոլետարիատի դիկտատուրայի դեմ:

Նույնպիսի, յեթե վոչ ավելի մեծ, շիթթութիւնն ե մտցրել Կառուցիկն մյուս ամենահետաքրքրական ու կարևորագույն հարցի մեջ, այն է՝ արդո՞ք սկզբունքորեն ճիշտ եր դրված, իսկ հետո նպատակահարմար եր անցկացված Սորհրդային հանրապետութեան որեմադրական դործունեյութիւնն ազրարային բարեփոխութեան ասպարեզում, այդ դժվարագույնն ու միևնույն ժամանակ կարևորագույն սոցիալիստական բարեփոխութեան ասպարեզում: Մենք անասելի շորհակալ կլինեյինք ամեն մի արևմտայնվրոպական մարքսիստից, յեթե նա, ծանոթանալով դոնե կարևորագույն վաստաթղթերին, տար մեր քաղաքականութեան քննադատութիւնը, վորովհետև նա դրանով մեծապես կողներ մեզ, կողներ նաև ամբողջ աշխարհում հասունացող հեղափոխութեանը: Բայց քննադատութեան փոխարեն Կառուցիկն տալիս ե թեորիական չտեսնված խառնաշփոթութիւն, վոր մարքսիզմը վերածում ե լիբերալիզմի, իսկ դործնականում դատարկ, չարամիտ, քաղքենիական յեւույթներ բոլջևիկների դեմ: Թող ընթերցողը դասի:

«Սոցոր հողատիրութիւնն անկարելի յեր պահել: Այդ արամի հեղափոխութիւնը: Այդ իսկույն կեթ պարզ դարձավ: Անկարելի յեր այդ չհանձնել դյուղացիական բնակչութեանը»... (Ճիշտ չե, պարոն Կառուցիկ, տարբեր դասակարգերի դեպի այս հարցն ունեցած վերաբերմունքի փոխարեն, դուք դեմ եք անում այն, ինչ ձեզ համար «պարզ» ե. հեղափոխութեան պատմութիւնն ապացուցել ե, վոր բուրժուայի կոալիցիոն կառավարութիւնը, վորին մասնակցում եյին մանրբուրժուան, մենչևիկներն ու եսերները, վարում եր խոշոր հողատիրութիւնը պահպանելու քաղաքականութիւն: Այդ առանձնապես ապացուցել ե Ս. Մասլովի<sup>20</sup> որենքը ե հողային կոմխտների անդամների ձերբակալումները: «Գյուղացիական բնակչութիւնն» առանց պրոլետարիատի դիկտատուրայի չեր հաղթի կապիտալի հետ միալորված կալվածատիրոջը):

... «Սակայն այն բանի նկատմամբ, թե ինչ ձևերով պետք ե այդ տեղի ունենար, միասնականութիւնն չկար: Մտածելի եյին զանազան վճիռներ»... (Կառուցիկուն ամենից շատ մտահոգում ե «սոցիալիստների» «միասնութիւնը», ոյ ել վոր իրեն այդ անունով կոչեր: Սյն մասին, վոր կապիտալիստական հոռա-

բակության հիմնական դասակարգերը պետք է հանդեպին տար-  
բեր վճիռներին, — նա մոռանում է) ... «Սոցիալիստական տեսա-  
կետից ամենաբանականը կլինե՞ր խոշոր ձեռնարկությունները  
հանձնել պետութայնը ի սեփականություն և թույլ տալ, վոր  
դրանցում վորպես վարձու բանվորներ աշխատող դյուղացիներն  
ընկերութայն ձևերով մշակեն խոշոր կալվածքները: Բայց այդ  
վճիռը յենթադրում է այնպիսի դյուղական բանվորներ, վորպի-  
սիք չկան Ռուսաստանում: Մյուս վճիռը կարող է լինել խոշոր  
հողատիրութայն հանձնումը պետութայնն ի սեփականություն և  
այդ հողատիրութայն բաժանումը մանր հողամասերի, վորոնք  
վարձակալութայն տրվեյին սահավահող դյուղացիներին: Այն  
ժամանակ թերևս սոցիալիզմից մի ինչ-վոր բան իրագործ-  
վեր...»:

Կառուցկին, ինչպես միշտ, ոճիք է թափում՝ մի կողմից, չի  
կարելի չընդունել, մյուս կողմից, պետք է ընդունել՝ հռչակա-  
վոր կանոնի ոգնությամբ: Նա կողք-կողքի յե դնում տարբեր  
վճիռները, կանգ չառնելով այն մտքի վրա — միակ ունալ, միակ  
մարքսիստական մտքի — թե այս-ինչ հատուկ պայմաններում  
վորպիսին պետք է լինեն անցումները կապիտալիզմից դեպի  
կոմունիզմը: Ռուսաստանում կան դյուղական վարձու բանվոր-  
ներ, բայց նրանք քիչ են, և ինքնուրույն իշխանութայն դրած  
հարցն այն մասին, թե ինչպես պետք է անցնեն հողի կոմունալ  
ու ընկերական մշակման, Կառուցկին չի շոշափել: Ամենից կուր-  
յողայինն այն է, սահայն, վոր Կառուցկին կամենում է «սոցիա-  
լիզմից մի ինչ-վոր բան» տեսնել մանր հողամասերը վարձակա-  
լությամբ բաժանելու մեջ: Այդ իսկապես մանր-բուրժուական լո-  
ղունդ է, և այստեղ «սոցիալիզմից» վոչինչ չկա: Յեթե հողը  
վարձակալությամբ տվող «պետությունը» Կոմունայի տիպի պե-  
տություն չլինի, այլ պառլամենտար բուրժուական հանրապե-  
տություն լինի (հենց այդպիսին է Կառուցկու մշտական յենթա-  
դրությունը), ապա հողի վարձակալութայն տալը մանր մասե-  
րով կլինի տիպիկ լիբերալ ռեֆորմ:

Կառուցկին լրում է այն մասին, վոր ինքնուրույն իշխանու-  
թյունը վերացրել է հողի ամեն մի սեփականությունը: Դրանից  
ափելի վատթարը: Նա կատարում է անասելի խարդախություն և  
ինքնուրույն իշխանութայն դեկրետներից այնպիսի ձևով է ցե-  
տատներ բերում, վոր ամենից եյականը բաց է թողնվում:

Հայտարարելով, վոր «մանր արտադրությունն» ձգտում է

արտադրութեան միջոցներէ լիակատար մասնավոր սեփականութեան», վոր ուչրեղիլկան կլիներ բաժանըը խանդարելու ընդունակ «միակ հեղինակութունը» (մի պնդում, վորը քրքիջ առաջ կրերի Ռուսաստանում, վորովհետեւ բոլորը դիտեն, վոր բանվորներն ու գյուղացիները հեղինակավոր համարում են միայն խորհուրդները, իսկ ուչրեղիլկան դարձել է չխոստովակներէ և կարվածատերերէ լողունդ)։ — Կաուցկին շարունակում է .

«Խորհրդային կառավարութեան առաջին դեկրետներից մեկը վորոչեց 1. Հողի կարվածատիրական սեփականութունը վերացվում է անհատադ, առանց վորեւ հետ դնման վճարի։ 2. Կարվածատիրական կայքերը, ինչպես և կայսերական տանը պատկանող, վանքապատկան, յեկեղեցական բոլոր հողերը, իրենց ամբողջ կենդանի ու մեռյալ ինվենտարով, աղարակային շենքերով և բոլոր պարտքաներով հանդերձ անցնում են վոլոստային հողային կոմիտեների և գյուղական պատղամավորների զավասական խորհուրդներէ անորինութեան՝ մինչև հողի հարցի լուծումը Սահմանադիր Ժողովի կողմից»։

Մեջ բերելով այս յերկու կետը միայն, Կաուցկին յեզրակացնում է .

«Սահմանադիր Ժողովի վկայուհուցումը մնաց մենած տառ։ Առանձին վոլոստների գյուղացիները փաստորեն կարող էին հողի հետ վարվել ինչպես կամենում էին» (47)։

Ահա ձեզ Կաուցկու «ըննդատուությա՛ն» նմուշները։ Ահա մի «գիտական» աշխատութուն, վոր ամենից ավելի նման է կեղծիքի։ Գերմանական ընթերցողին ներշնչվում է, վոր բոլշևիկները հողի մասնավոր սեփականութեան հարցում անձնատուր յեղան գյուղացիութեանը, վոր բոլշևիկները իրավունք ավին գյուղացիներին անջատ-անջատ («առանձին վոլոստներէ») անելու, ինչ վոր կամենում են։

Իսկ իրապես այն դեկրետը, վորից Կաուցկին մեջբերումներ է անում, — առաջին դեկրետը, վոր հրատարակված է 1917 թ. հոկտեմբերի 26-ին (հին տոմ.)\*) — բաղկացած է վոչ թե 2, այլ 5 հոդվածից՝ պլյուս «հրահանգի» ութ հոդվածը, ըստվորում հրահանգի մասին ասված է, վոր այն «պետք է ծառայի վորպես ուղեցույց»։

Գեկրետի 3-րդ հոդվածում ասվում է, վոր տնտեսութուններն անցնում են «Ժ ո զ ո վ ո ղ ի ն», վոր «ամբողջ դրավվող դուշի ճշգրիտ ցուցակադրութունը» կազմելը և «հեղափոխական խոտադույն պահպանութունը» պարտադիր է։ Իսկ հրահան-

\*) Տես Յերկերի XXII հատ., էջ 25—29։ Խմբ.։

գում ասիում է, վոր «հողի մասնավոր սեփականութեան իրավունքն ընդմիջա վերացում է», վոր «բարձր-կուլտուրական տնտեսութեանն ունեցող հողամասերը» «բաժանման յենք-ակա չեն», վոր «գրավում հողերի տնտեսական ամբողջ ինվենտարը՝ կենդանի և մեռյալ՝ անցնում է պետութեան կամ համայնքի բացառիկ ոգտադործման, նայած նրանց մեծութեանն ու նշանակութեանը, — առանց հետզման վճարի», վոր «ամբողջ հողը մտնում է համաժողովրդական հողային ֆոնդի մեջ»:

Այնուհետև, Սահմանադիր Ժողովի ցրման հետ միաժամանակ (1918 թ. I. 5-ի) Սորհուրդներին Յերրորդ Համագումարի կողմից ընդունված է «աշխատավոր և շահագործվող բնակչութեան իրավունքների դեկլարացիան»\*), վորն այժմ մտել է Սորհրդային Հանրապետութեան հիմնական որենքի մեջ: Այդ դեկլարացիայի II, 1 հոդվածն ասում է, վոր «հողի մասնավոր սեփականութեանը վերացում է» և վոր «որինակելի կալվածքներն ու գյուղատնտեսական ձեռնարկութեանները հայտարարվում են ազգային սեփականութեան»:

Հետևաբար, Սահմանադիր Ժողովի վկայակոչումը չմնաց մեռած տառ, վորովհետև համաժողովրդական մի ուրիշ ներկայացուցչական հաստատութեան, վորն անչափ ավելի հեղինակավոր է գյուղացիներին աչքում, իր վրա վերցրեց ազբարային հարցի լուծումը:

Այնուհետև, 1918 թ. փետերվարի 6 (19)–ին հրատարակված է հողի սոցիալիզացիայի որենքը, վորը մի անգամ ևս հաստատում է հողի ամեն մի սեփականութեան վերացումը, թե հողի և թե մասնատիրական ամբողջ ինվենտարի տնորինումը հանձնում է Սորհրդային իշխանութեաններին՝ վերահսկողութեանը վերապահելով խորհրդային ֆեդերալ իշխանութեանը. հողի տնորինման խնդիրներին մեջ դնում է՝

«Հողագործութեան մեջ կրեկտիվ տնտեսութեան՝ վորպես աշխատանքի և արդյունքների տնտեսման իմաստով ավելի ձեռնտու տնտեսութեան զարգացումն է հաշիվ անհատական տնտեսութեաններին՝ սոցիալիստական տնտեսութեանն անցնելու նպատակով» (էջ 11, կետ դ.):

Հավասար հողագտադործում մտցնելով, այդ որենքը «Ո՞վ իրավունք ունի ոգտվելու հողից» հիմնական հարցին պատասխանում է.

\*) Տես Յերկերի XXII հատ., էջ 218—222: Խմբ.:

«Հող. 20. Հողի մակերևութի առանձին մասերից Ռուսաստանի Սորհրդը-  
 դային Ֆեդերատիվ Հանրապետության սահմաններում հասարակական և անձ-  
 նական պետքերի համար ոգտվել կարող են. Ա) Կուլտուրիստական նպատակ-  
 ներով. 1) Պետութունը՝ ի դեմս Սորհրդային (Ֆեդերալ, մարզային, նա-  
 հանդական, դավառական, վոլոստային և դյուդական) իշխանության որգան-  
 ների: 2) Հասարակական կադմակերպությունները (տեղական Սորհրդային իշ-  
 խանության վերահսկողությամբ ու թուլտվությամբ): Բ) Գյուղատնտեսու-  
 թյամբ պարպելու համար. 3) Գյուղատնտեսական կոմունաները: 4) Գյու-  
 ղատնտեսական ընկերությունները: 5) Գյուղական հասարակությունները:  
 6) Առանձին ընտանիքներն ու անձերը...»:

Ընթերցողը տեսնում է, վոր Կառուցիկին բոլորովին բանն ա-  
 ղավաղել է և դերմանական ընթերցողին բացարձակապես կեղ-  
 ծած ձևով է ներկայացրել Ռուսաստանի պրոլետարական պետու-  
 թյան ազրարային քաղաքականությունն ու ազրարային որենս-  
 դրությունը:

Թեորիապես կարևոր, հիմնական հարցեր Կառուցիկին նույնխաջ  
 դնե՛լ չի կարողացել:

Այդ հարցերը հետևյալներն են.

1) Հողոգտադործման հավասարումը և

2) Հողի ազգայնացումը — մեկ թե մյուս միջոցի հարարե-  
 բումը սոցիալիզմին՝ ընդհանրապես և կապիտալիզմից դեպի  
 կոմունիզմ կատարելիք անցմանը՝ մասնավորապես:

3) Հողի հանրային մշակումը, վորպես անցում մանր մաս-  
 նատված հողադործությունից դեպի հասարակական խոշոր հո-  
 ղադործությունը. բավարարո՞ւմ է արդյոք սոցիալիզմի պահանջ-  
 ներին այս հարցի դրումը խորհրդային որենսդրության մեջ:

Առաջին հարցի վերաբերմամբ անհրաժեշտ է հավաստել նախ  
 և առաջ հետևյալ յերկու հիմնական փաստերը. ա) բողչեիկները  
 1905 թվի փորձի հաշվառման միջոցին ևս (մատնանշեմ, որինակ  
 իմ այն աշխատությունը, վորը վերաբերում է ազրարային հար-  
 ցին ռուսական առաջին հեղափոխության մեջ) \*) նշում էյին  
 հավասարարման լողունդի դեմոկրատական-առաջադիմական, դե-  
 մոկրատական-հեղափոխական նշանակությունը և 1917 թ.,  
 մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, միանդամայն վորոշա-  
 կի խոստում էյին այդ մասին: բ) Հողի սոցիալիզացիայի որենճե  
 անցկացնելով, — մի որենք, վորի «հողին» հավասարաբ հողոգ-

\*) Տեա Յերկերի XI հատորը: Խմբ.:

տաղործման լողունդն և, — բոլջևիկներն ամենալիակատար ճըզ-  
դըրատությամբ ու վորոշակիությամբ հայտարարեցին. այդ դա-  
ղափարը մերը չէ, մենք համաձայն չենք այդ լողունդին, մենք  
մեր պարտքն ենք համարում անցկացնել այն, վորովհետև այդպես  
և դյուզացիներէի ճնշող մեծամասնության պահանջը: Իսկ աշխա-  
տավորներէի մեծամասնության դաղափարն ու պահանջները նրանք  
իրեմք պետք է հաղթաւարեն. այդպիսի պահանջները վոչ կարելի  
յե «վերացնել», վոչ նրանց վրայով «ցատկել»: Մենք, բոլջևիկ-  
ներս, կոզմեմք դյուզացիությանը՝ հաղթահարելու մանր-բուր-  
ժուական լողունդները, դրանցից վորքան կարելի յե արագ և  
վորքան կարելի յե հեշտ անցնելու սոցիալիստական լողունդնե-  
րին:

Թեորեաթիկ-մարքսիստը, վորը կկամենար իր դիտական վեր-  
լուծությամբ ողնել բանվորական հեղափոխությանը, պետք է  
պատասխաներ, նախ՝ ճի՞շտ և արդյոք, վոր հողողտաղործման  
հայասարարության դաղափարն ունի դեմոկրատական-հեղափո-  
խական նշանակութիւն, բուրժուական-դեմոկրատական հեղափո-  
խութիւնը մինչև վերջը հասցնելու նշանակութիւն: Յերկրորդ՝  
արդյոք ճի՞շտ վարվեցին բոլջևիկները, իրենց ձայներով անց-  
կացնելով (և ամենալոյալ կերպով պահպանելով) հայասարա-  
րության վերաբերյալ մանր-բուրժուական որենքը:

Կաուցիկին նույնիսկ նկատե՛լ չկարողացաւ, թե թեորիապես  
ինչն է հարցի մեխը:

Կաուցիկուն յերբեք չէր հաջողվի հերքել այն, վոր հայասա-  
րարության դաղափարն առաջագիմական և հեղափոխական նշա-  
նակութիւն ունի բուրժուական-դեմոկրատական հեղաշրջման  
մեջ: Ավելի հեռուն այդ հեղաշրջումը չի կարող գնալ: Մինչև  
վերջը հասնելով, նա դրանով իսկ ավելի պարզ, ավելի արագ,  
ավելի հեշտ է յերևան բերում մասսաների առաջ բուրժուական-  
դեմոկրատական լուծումներէի ա ն բ ա վ ա ր ա ր լ ի ն ե լ ը, նրանց  
չըջանակներէից դուրս դալու, սոցիալիզմին անցնելու անհրաժեշ-  
տութիւնը:

Գյուղացիութիւնը, վոր վար էր նետել ցարիզմը և կարլա-  
ծատերերին, յերազում էր հայասարարության մասին, և վոչ  
մի ուժ չէր կարողանա խանգարել գյուղացիներին, վորոնք ա-  
զատվել էին և՛ կարլածատերերից, և՛ բուրժուական-պառլա-  
մենտար, հանրապետական պետութիւնից: Պրոլետարներն առում  
են գյուղացիներին. մենք ձեզ կողմենք հասնելու «իդեալական»

կապիտալիզմին, վորովհետև հողդառազործման հավասարաբու-  
թյունը կապիտալիզմի իրեալականացումն է մանր արտադրողի  
տեսակետից: Յեւ միևնույն ժամանակ մենք ցույց կտանք զբա-  
անրավարար լինելը, հողի հանրային մշակմանն անցնելու ան-  
հրաժեշտութիւնը:

Հետաքրքրական կլինեն տեսնել, թե ինչպե՛ս Կառուցկին կը-  
վորձեր հերքել դյուզացիական պայքարը պրոլետարիատի կողմից  
այդպէս զեկալարելու ճշտութիւնը:

Կառուցկին գերադասել է հարցից խուսափել...

Ս.յնուհետև, Կառուցկին ուղղակի խարել է գերմանական ըն-  
թերցողներին, թաղցնելով նրանցից, վոր հողի վերաբերյալ ու-  
րեմքի մեջ խորհրդային իշխանութիւնն ուղղակի առավելութիւն  
է տվել կոմուններին ու ընկերութիւններին, զրանք առաջին  
տեղը դնելով:

Գյուղացիութեան հետ մինչև բուրժուական-դեմոկրատական  
հեղափոխութեան վերջը, — դյուզացիութեան չքավորագույն,  
պրոլետարական ու կիսապրոլետարական մասի հետ հռոճ զե-  
պի սոցիալիստական հեղափոխութիւնը: Այս եր բուլշևիկները  
քաղաքականութիւնը և այդ միակ մարքսիստական քաղաքակա-  
նութիւնն էր:

Իսկ Կառուցկին խառնաչփոթում է, չկարողանալով դնել վո՛չ  
մի հարց: Մի կողմից, նա չի համարձակվում ասել, թե պրո-  
լետարները պետք է տարածայնվեյին դյուզացիութեան հետ հա-  
վասարաբութեան հարցում, վորովհետև նա զգում է նման տարա-  
ձայնութեան անհեթեթութիւնը (բացի զրանից 1905 թվին, յերբ  
Կառուցկին դեռևս ունեդատ չեր, նա պարզ և ուղղակի պաշտ-  
պանում էր բանվորների և դյուզացիների դաշինքը, վորպէս հե-  
ղափոխութեան հաղթանակի պայման): Մյուս կողմից, Կառուցկին  
համակրանքով մեջ է բերում մենչևեիկ Մասլովի լիբերալ դեմհա-  
բանութիւնները, այն Մասլովի, վորն «ապացուցում է» մանր-  
բուրժուական հավասարութեան ուտոպիականութիւնն ու ռեակ-  
ցիոնութիւնը՝ սոցիալիզմի տեսակետից և լութեան է տալիս  
այն հանդամանքը, վոր բուրժուական-դեմոկրատական հեղափո-  
խութեան տեսակետից հավասարութեան համար, հավասարաբու-  
թեան համար միջոց մանր-բուրժուական պայքարն առաջադիմա-  
կան է և հեղափոխական:

Կառուցկու մոտ անվերջ խառնաչփոթութիւնն է դուրս գալիս.  
նկատեցեք, վոր Կառուցկին (1918 թվի) պնդում է ուսական հե-

դափոխութեան բուրժուական բնույթի վրա: Կառուցիկն (1918 թ.) պահանջում է. դուրս մի՛ յեկեք այդ շրջանակներից: Յե՛վ այդ նույն Կառուցիկն մանր-բուրժուական ռեֆորմի մեջ, մանր հողամասերը չհալո՞ր դյուղացիներին վարձակալութեան տալու մեջ (այսինքն հավասարութեանը մոտենալու մեջ) տեսնում է «խնչ-վոր բան սոցիալիզմի՛ց» (բուրժուական հեղափոխութեան համար):

Թող հասկանա՛, ո՛վ վոր կարող է:

Բացի դրանից, Կառուցիկն յերևան է բերում Ֆիլիստերական անկարողութուն՝ հաշիվի նստելու վորոշ կուսակցութեան իսկական քաղաքականութեան հետ: Նա մեջ է բերում մենչևիկ Մասլովի փրագները, չցանկանալով տեսնել մենչևիկների կուսակցութեան ի ս կ ա կ ա ն քաղաքականութիւնը 1917 թվականին, յերբ այդ կուսակցութիւնը, կալվածատերերի և կազետների հետ «կոալիցիա» կազմած՝ պաշտպանում էր փաստորեն լիբերալ ագրարային ռեֆորմը և համաձայնութիւնը կալվածատերերի հետ (ասպացույց՝ հողային կոմիտեների անդամներին ձերբակալելն ու Ս. Մասլովի որինագիծը):

Կառուցիկն չի նկատել, վոր Պ. Մասլովը մանր-բուրժուական հավասարութեան ռեակցիոնութեան և ուտոպիականութեան վերաբերյալ փրագներով իրականում պաշտպանութեան տակ է առնում մենչևիկյան քաղաքականութիւնը, այն է՝ դյուղացիներէ համաձայնեցումը կալվածատերերի հետ (այսինքն կալվածատերերի կողմից դյուղացիներին խարելը), փոխանակ դյուղացիներէ կողմից կալվածատերերին հեղափոխականորէն տապալելու:

Ա՛յ թե «մարքսիստ» է Կառուցիկն:

Հենց բոլշևիկներն են, վոր խտրիվ հաշիվի առան բուրժուական-դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխութեան տարբերութիւնը. մինչև վերջը հասցնելով առաջինը, նրանք դուռ ելին բաց անում՝ յերկրորդին անցնելու համար: Այդ—միակ հեղափոխական և միակ մարքսիստական քաղաքականութիւնն է:

Յե՛վ իզուր է Կառուցիկն կրկնում անատամ լիբերալ սրախոսութիւնները. «Դեռևս վոչ մի տեղ և յերբեք մանր դյուղացիները թերութեան համոզումների ազդեցութեան տակ չեն անցել կուլեկտիվ արտադրութեան» (եջ 50):

Շա՛տ սրամիտ է:

Վոչ մի տեղ և յերբեք մեծ յերկրի մանր դյուղացիները չեն յեղել պրոլետարական պետութեան ազդեցութեան տակ:

Վոչ մի տեղ և յերբեք մանր դյուղացիները չեն հանդել չքա-  
վորազույն դյուղացիների բացահայտ դասակարգային կռիւն  
ընդդէմ հարուստներին, ընդհուպ մինչև քաղաքացիական պատե-  
րազմը նրանց միջև՝ պրոլետարական պետական իշխանութեան  
կողմից չքավորազույններին ցույց տրվող պրոպագանդիստական,  
քաղաքական, տնտեսական և ուղղմական աջակցութեան պայման-  
ներում:

Վոչ մի տեղ և յերբեք չի յեղել սպեկուլանտներին և հարուստ-  
ների այսպիսի հարստացում պատերազմից, դյուղացիներին մաս-  
սայի տնտեսութեան այսպիսի քայքայման ժամանակ:

Կառուցելին կրկնում և հինումին բաներ, ծամծամում և հին  
ծամվածքը, վախենալով նույնիսկ մտածել պրոլետարական դիկ-  
տատուրայի նոր խնդիրների մասին:

Իսկ ի՞նչ կասեք, սիրալիք Կառուցիկ, յեթե դյուղացիներին  
պակասում են գործիքներ մանր արտադրութեան համար, իսկ  
պրոլետարական պետութեանն ոգնում և նրանց ձեռք բերելու մե-  
քենաներ հողի կոլեկտիվ մշակութեան համար. այդ «թերրիական  
համոզում» և արդյոք:

Անցնենք հողի ազգայնացման հարցին: Մեր նարոզնիկները,  
նույն թիվում բոլոր ձախ ետերները, ժխտում են, վոր մեզ մոտ  
կիրառված միջոցառումը հողի ազգայնացում և: Թերրիապես  
նրանք իրավացի չեն: Վոր չափով վոր մենք մնում ենք ապրան-  
քային արտադրութեան և կապիտալիզմի շրջանակներում, այդ  
չափով հողի մասնավոր սեփականութեան վերացումը հողի ազ-  
գայնացում և: «Սոցիալիզացիա» բառն արտահայտում և սոցիա-  
լիզմին անցնելու տենդենց, ցանկութեան, նախապատրաստու-  
թեան միայն:

Իսկ վորպիսի՞ն պետք և լինի մարքսիստների վերաբերմուն-  
քը դեպի հողի ազգայնացումը:

Կառուցիկն այստեղ ևս չի կարողանում մինչև անգամ դնել  
թերրիական հարցը կամ — վոր ավելի ևս վատթարազույնն և—  
դիտմամբ դանց և անում հարցը, թեև ուսաց դրականութեան  
նից հայտնի յե, վոր Կառուցիկն դիտե այն վաղուցվա վեճերի  
մասին, վոր յեղել են ուսական մարքսիստների միջև ազգայ-  
նացման, մունիցիպալիզացիայի (սոշոր կալվածների հանձնումը  
տեղական ինքնավարութեաններին), բաժանման հարցի շուրջը:

Ուղղակի ծաղր և մարքսիզմի նկատմամբ Կառուցիկու այն  
պնդումը, թե սոշոր կալվածների հանձնումը պետութեանը և

զրանք մանր հողամասերով սակավահող գյուղացիներին վարձա-  
կալույթյան տալը կիրազործեր «ինչ-վոր բան սոցիալիզմից» :  
Մենք մատնանշեցինք արդեն, վոր այստեղ չկա վոչ մի սոցիա-  
լիզմ : Բայց այդ քիչ է . այստեղ չկա նաև մինչև վերջը հասցրած  
բուրժուակամ-դեմոկրատական հեղափոխություն :

Կառուցիկուն մեծ դժբախտություն է սպառահել, վոր նա վրս-  
տահացել է մենչևիկներին : Դրանից կուրյոզ է առաջացել . մեր  
հեղափոխության բուրժուական բնույթը պաշտպանող Կառուցիկն,  
վոր բողջևիկներին մեղադրում է այն բանի համար, վոր նրանք  
մտածել են դեպի սոցիալիզմ գնալ, ինքը լիբերալ ռեֆորմ է  
տալիս սոցիալիզմի անվան տակ, այդ ռեֆորմը չհասցնելով հո-  
ղատիրության հարաբերությունների մեջ յեղած ամբողջ միջնա-  
դարականության լիակատար գտման : Կառուցիկու մոտ, ինչպես և  
նրա խորհրդատու-մենչևիկների մոտ, ստացվեց հեղափոխու-  
թյունից վախեցող լիբերալ բուրժուազիայի պաշտպանություն,  
փոխանակ հետևողական բուրժուական-դեմոկրատական հեղափո-  
խության պաշտպանության :

Հիրավի : Ինչո՞ւ պետք է պետական սեփականություն դարձ-  
նել խոշոր կալվածքները միայն և վոչ թե բոլոր հողերը :  
Դրանով լիբերալ բուրժուազիան հասնում է հնության առավե-  
լադույն պահպանման (այսինքն՝ նվազագույն հետևողականու-  
թյան հեղափոխության մեջ) և հնին վերադառնալու առավելա-  
գույն դյուրության : Ռադիկալ, այսինքն բուրժուական հեղափո-  
խությունը մինչև վերջը հասցնող, բուրժուազիան առաջադրում  
է հողի ազգայնացման լողունդը :

Կառուցիկն, վոր վաղուց-վաղուց անցած ժամանակներում,  
գրեթե 20 տարի սրանից առաջ, մարքսիստական հիանալի աշխա-  
տություն է գրել ադրարային հարցի մասին, չի կարող չզի-  
տենալ Մարքսի ցուցումներն այն մասին, վոր հողի ազգայնա-  
ցումը բուրժուազիայի հենց հետևողական լողունդն է<sup>21)</sup> : Կառուց-  
իկն չի կարող չբիտենալ Մարքսի բանակույթը Ռոդերբտուսի հետ  
և Մարքսի յնրեկելի պարզաբանումները «Հավելյալ արժեքի թեո-  
րիաները» աշխատության մեջ, վորտեղ առանձնապես ակնառու  
կերպով ցույց է տրված հողի ազգայնացման նաև հեղափոխա-  
կան նշանակությունը բուրժուական դեմոկրատական իմաստով :

Մենչևիկ Պ. Մասլովը, վորին Կառուցիկն այնպես անհաջող  
կերպով խորհրդատու յե ընտրել իր համար, բացասում էր, վոր  
առևս գյուղացիները կկարողանան համաձայնել ամբողջ (այդ

թվում և գյուղացիական) հողի ազգայնացման: Մասլովի այս հայացքը վորոչ չափով կարող եր կսպ ունենալ նրա «որիգինալ» թեորիայի հետ (վոր կրկնում ե Մարքսի բուրժուական քննադատներին), այն ե՝ բացարձակ ունտայի ժխտման ու «հողի նվազող պողաբերության» «որենքի» (կամ, ինչպես Մասլովն եր արտահայտվում, «փաստի») ընդունման հետ:

Իրականում արդեն 1905 թվականի հեղափոխության ընթացքում բացահայտվեց, վոր Ռուսաստանի գյուղացիները՝ թե՛ համայնականները, թե՛ առանձնատնտեսատերերը—հսկայական մեծամասնութունը կողմնակից ե ամբողջ հողի ազգայնացման: 1917 թվի հեղափոխությունը հաստատեց այդ և, լրջխանությունը պրոլետարիատին անցնելուց հետո, իրականացրեց այդ: Բուլձևիկները հավատարիմ մնացին մարքսիզմին, չփորձելով (հակառակ Կաուցկուն, վորը մեղ մեղադրում ե դրա համար՝ առանց ասացուցները վորեւե նշուլի) «ցատկել» բուրժուական—դեմոկրատական հեղափոխության վրայով: Բուլձևիկները նախ և առաջ ոգնեցին գյուղացիության բուրժուական—դեմոկրատական դադափարախոսներից առավել ուղիկալ, առավել հեղափոխական, պրոլետարիատին ամենից ավելի մոտ դանվողներին, այն ե՝ ձախեսերներին, անցկացնելու այն, վորը փաստորեն հողի ազգայնացում հանդիսացավ: Ռուսաստանում 1917 թվի X. 26-ից, այսինքն պրոլետարական, սոցիալիստական հեղափոխության առաջին որվանից, հողի մասնավոր սեփականությունը վերացված ե:

Դրանով ստեղծված ե մի հիմք, վորն առավել կատարյալն ե կապիտալիզմի զարգացման տեսակետից (չխլելով իր կապերը Մարքսի հետ, Կաուցկին չի կարողանա բացասել այդ), և միևնույն ժամանակ ստեղծված են հողային կարգեր, վորոնք ամենից ավելի նկուռն են՝ սոցիալիզմին անցնելու իմաստով: Բուրժուական—դեմոկրատական տեսակետից՝ Ռուսաստանում հեղափոխական գյուղացիությունն ավելի հեռու գնալու տեղ չուրի. վոչինչ ավելի «լեգալական»՝ այդ տեսակետից, քան հողի ազգայնացումն ու հողդատադործման հավասարությունը, ավելի «ուղիկալ» բան (այդ իսկ տեսակետից) չի կարող լինել: Հենց բուլձևիկները, միմիայն բուլձևիկները, պրալետարական հեղափոխության հաղթանակի շնորհիվ միայն՝ գյուղացիությանն ոգնեցին բուրժուական—դեմոկրատիկ հեղափոխությունն իրական մինչև վերջը հասցնելու: Յեվ միայն դրանով նրանք արին մաքսիմու-

մը՝ հեշտացնելու և արագացնելու համար սոցիալիստական հեղափոխութեանն անցնելը :

Մրանով կարելի չէ դատել, թե վորպիսի անասելի խառնաշփոթութիւնն է հրամցնում ընթերցողին Կառուցիկին, վորը բուլճակներին մեղադրում է հեղափոխութեան բուրժուական բնույթը չըմբռնելու համար և վորն ինքը յերևան է բերում այնպիսի նահանջ մարքսիզմից, վոր լռում և հողի ազդանացման մասին և առաջադրում է ամենից պակաս հեղափոխական (բուրժուական տեսակետից), լիբերալ ազդարային ռեֆորմը վորպես «ինչ-վոր բա՛ն սոցիալիզմից» . . . :

Մենք այստեղ մոտեցանք վերը դրված հարցերից յերրորդին՝ այն հարցին, թե վորքան է Ռուսաստանում պրոլետարական դիկտատուրան հաշիվ առել հողի հանրային մշակմանն անցնելու անհրաժեշտութիւնը: Կառուցիկին այստեղ կատարում է դարձյալ մի ինչ-վոր բան, վոր շատ նման է կեղծիքի. նա ցիտատներ է բերում միմիայն մեկ բուլճակի «թեղիաներից», վորոնք խոսում են հողի կոլեկտիվ մշակման անցնելու խնդրի մասին: Մեծրերելով այդ թեղիաներից մեկը, մեր «թերեւտիկը» հաղթականորեն բացականչում է .

«Ընդիրը, ցայոք սրտի, չի լուծվում այն բանով, վոր մի վորոչ բան խնդր է հայտարարվում: Կոլեկտիվ դյուղատնտեսութիւնը Ռուսաստանում առայժմ դատարարված է թղթի վրա մնալու: Դեռևս վոչ մի տեղ և յերբեք մանր դյուղացիները կոլեկտիվ արտադրութեան չեն անցել թերիական համոզումներէ հիման վրա» (եջ 50):

Գրական խարդախութեան մեջ Կառուցիկը անկումն այն աստիճանին է հասնում, վորպիսին դեռևս վոչ մի տեղ և յերբեք չի յեղել: Նա ցիտատ է բերում «թեղիաներից», լռելով Խորհրդային իշխանութեան որքնաքի մասին: Նա խոսում է «թերիական համոզման» մասին, լռելով պրոլետարական պետական իշխանութեան մասին, վորն իր ձեռքում թե՛ դործարաններ, թե՛ ապրանքներ ունի: Այն ամենը, ինչ վոր դրում էր մարքսիստ Կառուցիկին 1899 թվին «Ազդարային հարց»-ում այն խնդրի մասին, թե ինչ միջոցներ կան պրոլետարական պետութեան ձեռքում՝ մանր դրուղացիներին աստիճանաբար դեպի սոցիալիզմ տանելու համար, այդ ամենը 1918 թվին ռենեզատ Կառուցիկին մոռացել է:

Իհարկէ, պետութեան անկացութիւնը վայելող միջանի հարյուր դյուղատնտեսական կոմունաներ ու խորհրդային տնտեսութիւններ (այսինքն խոշոր տնտեսութիւններ, վորոնք պետու-

թիւն հաշիւին մշակվում են բանվորների ընկերութիւններին կողմից), — այդ շատ քիչ է: Բայց մի՞թե կարելի չէ «քննադատութիւն» անվանել այս փաստը զանց անելը Կառուցիւմ կողմից:

Պրոլետարական դիկտատուրայի կողմից Ռուսաստանում կիրառված հողի ազգայնացումն ամենից ավելի ապահովեց բուրժուական-դեմոկրատական հեղափոխութիւնը մինչև վերջը հասցնելը, — նույնիսկ յեթե նկատի առնենք այն պարագան, Վոր հակահեղափոխութեան հաղթանակը ազգայնացումից հետ կշրջեր դեպի բաժանըը (այս դեպքն իմ կողմից հատկապէս քննութեան է առնվել 1905 թվականի հեղափոխութեան մեջ մարքսիստների ազդարային ծրագրի վերաբերյալ դրքուկում\*)): Իսկ բացի դրանից, հողի ազգայնացումը պրոլետարական սեռութեանը տվել է հողագործութեան մեջ սոցիալիզմին անցնելու ամենամեծ հնարավորութիւնները:

Հանրազումարը. Կառուցիւն մեզ տվել է, թեորիսպես, չտեսնելով շէրափրափ՝ մարքսիզմից լիովին հրաժարվելով հանդերձ, իսկ գործնականում լաքեյութիւն բուրժուազիայի և նրա ռեֆորմիզմի առաջ: Ինչ ասել կուզի, լա՛վ քննադատութիւն է:

\* \* \*

Արդյունաբերութեան «տնտեսական վերլուծութիւնը» Կառուցիւն սկսում է հետևյալ հոյակապ դատողութեամբ.

Ռուսաստանում կա խոշոր կապիտալիստական արդյունաբերութիւն: Արդյոք այդ հիմքի վրա չի՞ կարելի սոցիալիստական արտադրութիւն կառուցել: «Այսպէս կարելի չէր մտածել, յեթե սոցիալիզմն այն լիներ, Վոր առանձին գործարանների ու հանքերի բանվորները վերցնէին դրանք Վորպէս իրենց սեփականութիւն» (տառացի՝ դրանք յուրացնէին), «Վոր գործարաններից ամեն մեկում առանձին վարեյին տնտեսութիւնը» (52): «Հենց այսոր, ոգոստոսի 5-ին, յերբ յես դրում եմ այս տողերը, — ավելացնում է Կառուցիւն, — Մոսկվայից հաղորդում են Լենինի՝ ոգոստոսի 2-ի մի ճառի\*\*») մասին, Վորի մեջ նա, ինչպէս հաղորդում են, ասել է. «Բանվորներն ամուր պահում են գործարաններն իրենց ձեռքում, իսկ գյուղացիները հողը չեն տա կալվածատերերին»: Գործարանը — բանվորին, հողը — գյուղացիներին»

\*) Տես Յերկերի XI հատոր: Խմբ.:

\*\*) Տես Յերկերի XXIII հատորը, էջ 169—170: Խմբ.:

Նշանաբանը մինչև այսօր յեղել և մոչ թե սոցիալ-դեմոկրատական, այլ անարխո-սինդիկալիստական» (52—53) :

Անք ամբողջութամբ արտադրեցինք այս դատողությունը, վորպեսզի ուուս բանվորները, վորոնք առաջ հարդում էին Կառուց-կուն, և հարդում էին դործի համար, իրենք աեսնեն բուրժուա-զիւայի կողմն անցած փախտակի վարվելաձևերը :

Մի մտածեցեր. ոգոստոսի 5-ին, յերբ արդեն բազմաթիւ ղեկ-բեռներ կային Ռուսաստանում գործարաններն ազգայնացնելու մասին, ըստվորում մոչ մի գործարան չեր «յուրացված» բան-վորների կողմից, այլ բւււրը հանձնվում էին հանրապետու-թյանն ի սեփականություն, ոգոստոսի 5-ին Կառուցկին, իմ ճառից հանած մի Ֆրազի ակներևաբար խարդախ մեկնարանության հիման վրա, դերմանացի ընթերցողներին այն միաքն և ներչնչում, իբր թե Ռուսաստանում գործարանները հանձնվում են առանձի՛ն բան-վորներին: Յեւլ Կառուցկին դրանից հետո տասնյակ ու տասնյակ տողերի մեջ ծամվածք և ծամծմում այն մասին, թե գործարան-ները չի կարելի առանձի՛ն-առանձի՛ն հանձնել ըստվորներին:

Այս քննադատություն չէ, այլ բուրժուազիւայի լաքեյի վար-վելաձև, այն լաքեյի, վոր կապիտալիստների կողմից վարձված և բանվորական հեղափոխությունը զրպարտելու համար:

Գործարանները պետք և հանձնել պետությանը, կամ համայն-քին, կամ սպառողական ընկերություններին, — դրում է կրկին ու կրկին անդամ Կառուցկին և վերջապես ավելացնում և .

«Այժմ Ռուսաստանում հենց փորձում են այս ուղին բռնել»... Ա՛յժմ, այսինքն՝ այդ ի՞նչ կնշանակե, ոգոստոսի՞ն: Ի՞նչ, մի՞թե Կառուցկին չի կարող պատվիրել իր Շտեյնին, Աքսելրոդին կամ ուուսական բուրժուազիւայի այլ բարեկամներին թարգմանելու թե-կուզ մի ղեկընտ գործարանների մասին:

... «Թե այդ ինչքան հեռու յե դնացել՝ այդ դեռ չի յերևու: Խորհրդ-դային Հանրապետության այդ կողմը, համենայն դեպս, մեզ համար ներկա-յացնում է ամենամեծ հետաքրքրությունը, բայց այն դեռևս մնում է ամբող-ջութամբ խավարի մեջ: Գեկերեաների պահատություն չկա»... (Այդ պատճա-ջութամբ խավարի մեջ: Գեկերեաների պահատությունն անտեսում է կամ թաղցնում իբ ոով Կառուցկին նրանց բովանդակությունն անտեսում է կամ թաղցնում իբ ընթերցողներին), «բայց պահատում են այդ ղեկերեաների ներդրության վե-րնթերցողներին», «բայց պահատում են այդ ղեկերեաների ներդրությանն սե-րարերյալ հուսալի տեղեկություններ, մանրամասն, հուսալի ու արագորեն ին-հնարին և առանց ամենակողմանի, մանրամասն, հուսալի ու արագորեն ին-քորմացիա ավող վիճակազրության: Խորհրդային Հանրապետությունն ոչդ-պիտին մինչև այժմ չի կարողացել ստեղծել: Այն, ինչ վար մենք իմանում ենք պիտին մինչև այժմ չի կարողացել ստեղծել: Այն, ծայր սատիճանի հակասական նրա տնտեսական գործողությունների մասին, ծայր սատիճանի հակասական է և հնարավոր չէ վորեև ստուգման յենթարկել: Այդ նույնպես ղեկատուու-

բայի արդյունքներէց և զեմոհրատիայի ճնշման արդյունքներէց մեկն է: Չկա մասնուի ու խոսքի աղատութիւն»... (53):

Ահա՛ թե ինչպե՛ս ե զբլում պատմութիւնը: Կասկածալիստները ու դուտովյանները «ազատ» մամուլից Կառուցիկն կստանար տեղեկութիւններ բանվորներէ ձեռքն. անցնող դործարաններէ մասին... Ճշմարիտ վոր, յերեկել՛ յե այս վերդասակարգային «լուրջ դիտնականը»: Վոչ մեկն անսահման քանակութեամբ այն փաստերէց, վորոնք վկայում են, վոր դործարանները հանձնվում են միայն Հանրապետութեանը, վոր դրանք տնորինում ե թորհրդային իշխանութեան մի որդանը՝ Ժողովրդական Տնտեսութեան Գերազույն թորհուրդը, վորը կազմված ե բանվորներէ արհմիութիւններէ պատվիրակներէ դերակշիռ մասնակցութեամբ, — այդպիսի փաստերէց և վոչ մեկը Կառուցիկն չի ցանկանում անզամ շոշափել: Նա համառօրեն, իր պատյանի մեջ պարփակված մարդու կամակորութեամբ, պնդում ե մի բան. տվեք ինձ խաղաղ դեմոկրատիա, առանց քաղաքացիական պատերազմի, առանց դիկտատուրայի, լավ վիճակադրութեամբ (թորհրդային Հանրապետութիւնը ստեղծել ե վիճակադրական հիմնարկ և ներդրափել ե Ռուսաստանի բոլոր լավադույն վիճակադրական ուժերը, սակայն, իհարկե, իդեալական վիճակադրութիւն շուտով ունենալ չի կարելի): Մի խոսքով՝ հեղափոխութիւն առանց հեղափոխութեան, առանց կատաղի կռվի, առանց բռնութիւններէ, — ահա թե ինչ ե պահանջում Կառուցիկն: Այդ միւնույն ե, յեթե պահանջեյին դործարողները՝ առանց բանվորներէ ու տերերէ բուռն կրքօտութեան: Դեհ, տարբերեցեք նման «սոցիալիստի՛ն» հասարակ լիբերալ չինովնիկից:

Յեւ չենվելով այդպիսի «փաստական մատերիալի» վրա, այսինքն դիտավորյալ կերպով ամբողջովին արհամարհելով բարձրութիւլ փաստերը, Կառուցիկն «յեղրափակում ե».

«Կասկածելի յե, թե ստացա՞վ արդյոք ոուս պրոլետարիատը իրական, դործնական նվաճումներէ, և վոչ թե դեկրետներէ, իմաստով ավելի շատ բան թորհրդային Հանրապետութեան մեջ, քան նա կստանար Սահմանադիր Ժողովից, վորի մեջ ճիշտ այնպես, ինչպես և թորհուրդներում, դերակշիռում եյին սոցիալիստները՝ թեպետե ուրիշ յերանդի» (58):

Գոհար ե, այնպես չե՞: Մենք խորհուրդ ենք տալիս Կառուցիկն հարդողներին այս ասույթն ավելի լայնորեն տարածել ոուս բանվորներէ մեջ, վորովհետեւ ավելի լավ մատերիալ իր քաղաքական անկումը դնահատելու համար Կառուցիկն տալ չեր կարող: Կերենս-

կին նո՛ւջնպես «սոցիալիստ» եր, ընկեր-բանվորներ, միայն «ուրիշ յերանգի»: Պատմաբան Կառլցկին բավականանում է այն մահանունով, անունով, վոր «յուրացրել» են աջ հսերներն ու մենչևիկները: Այն վաստերի մասին, վորոնք ասում են, թե Կերենսկու որով մենչևիկներն ու աջ հսերներն աջակցում էյին իմպերիալիստական քաղաքականութեանն ու բուրժուազիայի մարդկորութեանը, պատմաբան Կառլցկին լսել անդամ չի ուզում. այն բանի մասին, վոր Սահմանադիր ժողովը մեծամասնութիւն եր տալիս իմպերիալիստական պատերազմի և բուրժուական դիկտատուրայի հենց այդ հերոսներին, նա համեստաբար լռում է: Յեւ սա կոչվում է «տնտեսական վերլուծութիւն»:

Իբրև յեղրափակում՝ «տնտեսական վերլուծութեան» մի նմուշ ևս.

...«Խորհրդային Հանրապետութիւնն, իր դոյութեան ինն ամսից հետո, փոխանակ ընդհանուր բարեկեցութիւն տարածելու, հարկադրված յեղալ բացատրելու, թե ինչից է ստաջանում ընդհանուր կարեքը» (41):

Կազեաները վարժեցրել են մեզ այսպիսի դատողութիւնների: Ռուսաստանում բուրժուազիայի սպասավորները բոլորն այսպես են դատում. ապա, ինն ամսից հետո ընդհանուր բարեկեցութիւն տվեք—~~A~~—ամյա ալերիշ պատերազմից հետո, այն ժամանակ, յերբ ստարերկրյա կապիտալն ամենակողմանի ոգնութիւն է ցույց տալիս Ռուսաստանում բուրժուազիայի սարսոտօին ու ապստամբութիւններին: Բացարձակապես վոչ մի տարբերութիւն, տարբերութեան վոչ մի նշույլ Կառլցկու և հակահեղափոխական բուրժուազիայի միջև իրականում չմնաց: Կեղծորեն «սոցիալիզմին» հարմարեցրած քաղցրիկ ճառերը կրկնում են այն, ինչ վոր կոպտաբար, առանց այլևայլութեան, առանց դարդարանքների ասում են կոռնիլովականները և ղուտովականներն ու կրասնովականները Ռուսաստանում:

\* \* \*

Նախընթաց տողերը գրված են 1918 թվի նոյեմբերի 9-ին: 9-ից 10-ի գիշերը տեղեկութիւններ ստացվեցին Գերմանիայից, վոր հաղթական հեղափոխութիւն է սկսվել սկզբում Կիւլմ և մյուս հյուսիսային ու ծովափնյա քաղաքներում, վորտեղ իշխանութիւնն անցել է բանվորական ու ղինվորական պատգամավոր-

ների Խորհուրդների ձեռքը, ապա Բեռլինում, վորտեղ իշխանութ-  
յունը նույնպես անցել է Խորհրդի ձեռքը :

Ավելորդ է դառնում այն յեզրակացությունը, վոր բրոշյու-  
րիս վերջում ինձ մնում եր գրելու Կառլցկու մասին և սրբութա-  
րական հեղափոխության մասին :

10 նոյեմբերի 1918 Ք.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Յիտատը վերցված է Կ. Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատութեանից», վոր նա դրել էր «լասսակայաններին» ու «այդնախայաններին» ստալինական միավորիչ համադրումարի կապակցութեամբ: Մարքսն ու Ենգելսը միավորման և համադրումարի համար մշակված ծրագրի նախադժի ջերմ հակառակորդներն էին: Այդնախայան կուսակցութեան ղեկավար խմբից նրանց տեսակետը պաշտպանում էր միայն Բրակիկն: Մարքսին հայտնի չէր, վոր դերմանական բանվորներին միջև գերակշռող տրամադրութեունը միավորման ոգտին է, բայց նա, ինչպէս զրում էր 1875 թ. մայիսի 5-ին Բրակիկեյին ուղղած նամակում, այնուամենայնիվ «իր պարտքն է համարում զիսկումատիական լուութեամբ ցույց չտալ», իրրև թե ընդունում է այդ ծրագրերը, վորը, ըստ նրա համոզման, «ծայր աստիճան այլանդակ և կուսակցութեունը բարոյալքող ծրագիր է»: Այս նամակը կարևոր է նաև նրանով, վոր նրա մեջ առաջին անգամ շարադրված էր Մարքսի վերաբերմունքը դեպի Լասսալը: Բերլինը զրված Ենգելսի նամակի (1875 թ. մարտի 28) հետ միասին «Քննադատութեունը» և Բրակիկեյին զրված նամակը հանդիսանում են վերջին գիտական կոմունիզմի կարևորագույն յերկերից մեկը: Հաղթահարելով գերմանական ս.-դ. առաջնորդներին ուժեղ դեմադրութեունը, Ենգելսն առաջին անգամ հրապարակեց այդ նամակը «Երտոդութեուններ գերմանական բանվորական կուսակցութեան ծրագրի շուրջը» վերնադրով, ԵրՓուրտի համադրումարի նախորեյին, համադրումար, վորը պետք է նոր ծրագիր ընդունել: Սակայն գերմանական սոցիալ-դեմոկրատիան Մարքսի հիմնական մտքերը լրիվ չընդունեց վոչ միայն 1875 թ-ին, այլև նույնիսկ 1891 թ-ին. դրանք ամբողջութեամբ ընդունվեցին Համկոմկուսի և Կոմիտերնի ծրագրիներում միայն: «Քննադատութեունից» բերված ցիտատը դտնվում է ԻՄՁԱ-ի հրատարակութեան 43-րդ էջում—Կուսհրատ, 1933 թ.:

2 Յիտատը վերցված է Բերլինը զրված Ենգելսի 1875 թ. մարտի 28-ի նամակից, վոր զրված է Գոթայի ծրագրի նախադժի առթիվ: «Գոթայի ծրագրի քննադատութեան» ուսական հրատարակութեան մեջ այդ տեղը դտնվում է 55-րդ էջում:

3 Լենինի մեջբերած միտքն արտահայտել է վոչ թե Մարքսը, այլ Ֆ. Ենգելսը՝ Կ. Մարքսի «Քաղաքացիական պատերազմը Յրանտիայում» դրքի գերմանական Յ-րդ հրատարակութեան առաջաբանի մեջ: «Կոմունան տնտեսական հարաբերութեունների բնագավառում աչքաթող էր արել վորոշ բաներ, վոր ըստ մեր այժմյան ըմբռնումների, անհրաժեշտ էր անել: Այժմ ամենից այլևիլ դժվար է, իհարկև, հասկանալ այն յերկյուղածութեունը, վորով Կոմունան հարգանքով կանգ էր առնում Փրանսական բանկի դուան առջև: Այդ բանը քաղաքականապես ել խոշոր սխալ էր: Բանկը Կոմունայի ձեռքին այլևիլ մեծ նշա-

Նախություն կունենար, քան 10.000 պատանդներ: Այս հանգամանքը կտախեր ամբողջ ֆրանսական բուրժուազիային ճնշում դորձ զնել վերստյան կառավարութեան վրա՝ Կոմունայի հետ հաշտվելու ուղտին»: (Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում, Ֆ. Ենգելսի ներածականով, Էջ 11—12: Կուսհրատ, Մոսկվա, 1934 թ.):

4 Յիտաոր վերցված է Ֆ. Ենգելսի «Այտորիտետի մասին» հոդվածից:— ՏԵՆ Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հատ. XV, Էջ 137:

5 Վ. Ի. նկատի ունի Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» բրոշյուրի հետևյալ տեղը. «Այսպես, անտիկ պետությունն առավելապես ստրկատերերի պետություն էր՝ ստրուկներին հպատակեցնելու համար, ինչպես վոր ֆեոդալական պետությունը աղյվականները որդանն էր՝ ճորտ գյուղացիներին հպատակեցնելու և սանձահարելու համար, իսկ ժամանակակից ներկայացուցչական պետությունը հանդիսանում է վորպես կապիտալի կողմից վարձու աշխատանքը շահադրձելու մի գեղք»: (Ենգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»: Հրատ. Կուսհրատի, 1933 թ. Էջ 202):

6 Ենգելսի նամակը բերված է «Գոթայի ծրարի քննադատության» ուստական հրատարակության մեջ, վորտեղ վերը մեջբերված ցիտատը զտնվում է 56-րդ Էջում:

7 Յիտատը վերցված է Մարքսի «Քաղաքացիական պատերազմը» դրձի Ենգելսի առաջարանից: (Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», Ֆ. Ենգելսի ներածականով: Կուսհրատ, Մոսկվա, 1934 թ.):

8 Վ. Ի. նկատի ունի Ենգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» բրոշյուրի հետևյալ տեղը. «Ընդհանուր ընտրական իրավունքը, այսպիսով, բանավոր դասակարգի հասունության նախանին է: Ժամանակակից պետության մեջ այդ իրավունքը ալելի մեծ բան յերբձ էի կարող լինել և չի լինի. բայց այս Էլ բայական է»: (Ֆ. Ենգելս, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Էջ 204: Կուսհրատ, Մոսկվա, 1933 թ.):

9 Վիգեր և տորիներ.—Անգլիայի այն քաղաքական կուսակցություններն Էն, վորոնք առաջ յեկան XVII դարի անգլիական հեղափոխության դարաշրջանում, տարբեր քաղաքական շահեր և սոցիալական կողմ ունենալու պատճառով փոխադարձ պայքար Ելին մղում իրենց գոյության ամբողջ ընթացքում: Վիգերի կուսակցությունը (1619—1854 թ.թ.) ֆինանսական շրջանների և առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի մի մասի շահերի ներկայացուցիչն էր: Վիգերից սիկդրն առալ այժմ գոյություն ունեցող լիբերալ կուսակցությունը (Ասիլիտ, Լլոյդ-Ձորը): Ի տարբերություն վիգերից, տորիների կուսակցությունը (1680—1832 թ.թ.) խոչոր հողատիրության կուսակցությունն է, անգլիական հասարակության պահպանողական շրջանների ներկայացուցիչը: Ի կուսակցություն, վորը կանգնած է ֆեոդալական անցյալի տրադիցիաների պաշտպանության և լիբերալ ու պրոդրեսիվ պահանջների դեմ պայքարելու տեսակետի վրա: Հետադյում սկիզբ դրեց պահպանողականների կուսակցության:

10 Առաջին յերկու ցիտատները վերցված են Մարքսի «Քաղաքական անտարբերություն» և Ենգելսի «Այտորիտետի մասին» հոդվածներից, տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հատ. XV, Էջ 88 և 137:

11 Վ. Ի. նկատի ունի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքի գերմանական 3-րդ հրատարակության Ենդելսի առաջարանի հետևյալ տեղը. «Քաղաքացիական պատերազմի» յերրորդ մասում մանրամասնորեն նկարագրված է հին պետական իշխանության այս պայթեցնելը և այդ իշխանությանը նորով, իսկական դեմոկրատականով փոխարինելը: Բայց այստեղ անհրաժեշտ էլինքեր մեկ անգամ էլ համատասակի կանգ առնել այդ փոխարինման մեկ քանի դեմեր վրա, վրոլհետե անտոր հավատը դեպի պետությունը հենց Գերմանիայում իրլխտիայությունց անցել է բուրժուազիայի և նույնիսկ շատ բանվորները ընդհանուր դիտակցության մեջ»: (Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», Ֆ. Ենդելսի ներածականով, էջ 14—15: Կուսհրատ, Մոսկվա, 1934 թ.):

12 Վ. Ի. նկատի ունի Կառլեյուզ «Գեպի իշխանություն տանող ուղին» բրոշյուրի հետևյալ տեղը. «Պրոլետարիատը ներկայումս այնքան է ամրապնդվել, վոր նա մեծ հանգստությամբ կարող է սպասել վերահաս պատերազմին: Վաղաժամ հեղափոխության մասին այլևս խոսք չի կարող լինել այն ժամանակ, յերբ տվյալ պետական հիմունքներից պրոլետարիատն այնքան ուժ է քաղել, վորքան կարելի յեր քողել, յերբ այդ հիմունքները վերակառուցումը դարձել է պրոլետարիատի հետագա վերելքի պայմանը»: («Գեպի իշխանություն տանող ուղին», ԴՈՅ, 1923 թ., էջ 92):

13 Մենշևիկ-ախտիվիստներ—մենշևիկները կուսակցության ներսում դուրսվում են ունեցող ամենաաջ հոսանքը, վորն ընդունում է խորհրդային իշխանության դեմ փաստորեն դործադրում էր դինաված կալի մեթոդները: Ակտիվիստների քաղաքական պլատֆորմը շարադրել է մենշևիկ Ռոզանովը 1919 թվին Կիևի մենշևիկները դատավարության ժամանակ աված իր ցուցմունքներում: Այդ պլատֆորմի էյությունն այս է. սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում անհնարին է: Բանվոր դասակարգը վուժ թե սոցիալիստական հեղափոխության պիտի ձդտի, այլ սոցիալական ակֆորմների միջոցով պիտի աշխատի բարելավել իր դրությունը: Իսկ այլ մենշևիկները խնդրն այն է, վոր «համապատասխան աշխատացիա մղեն մասսաները մեջ և ստեղծեն այն ուժը, վորն վրա նոր պլատֆորմը կկարողանար հենվել»:

Ուֆայում մենշևիկները մասնակցում էին հետ-կադետական դերեկտորիայի ստեղծմանը, վորը Կուլակի համար ճանապարհ հարթեց դեպի իշխանությունը: Վորդայի և Ուրալի մենշևիկները չեխո-սլովակյան ապստամբության ակտիվ աջակիցներն էին: Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում և Անդրկասպյան յերկրում մենշևիկներն իրենց աշխատանքում հենվում էին ինտելլեկտուալների ռադիկալ ու ֆինանսական աջակցության վրա: «Ախտիվիստները» նշանակալից ծառայություններ էին մատուցում սպիտակ գվարդիային, մասնակցելով նաև սպիտակ տեղերին: Խորհրդային հանրապետության ներսում «ակտիվիստները» պայքար էին մղում Ֆարբիկա-դործարանային լիազորներին ժողովների միջոցով, աղեկություն ունենալով տաղարիչները և քիմիկոսները արհեստակցական միությունների վրա: 1918 թվին մենշևիկները ամբողջ կուսակցության աջակցությամբ «ակտիվիստները» ջանում էին կազմակերպել համատուսաստանյան բանվորական համադումար, վորի համար անցկացրին մի շարք բանվորական կոնֆերենցիաներ, վորտեղ պարենավորման հարցեր լուծելու անվան տակ զննարկվում էին իշխանության վերաբերյալ հարցեր:

14 Վ. Ի. նկատի ունի «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում» գրքի

դերմանական 3-րդ հրատարակութեան Ենդելսի առաջարանի հետևյալ տեղը: «Ֆրանսիայի տնտեսական ու քաղաքական զարգացման հետևանքով 1789 թվից վերջին 50 տարվա ընթացքում Փարիզում տեղի ունեցած ամեն մի հեղափոխութուն ընդունում էր պրոլետարական ապստամբութեան բնույթ, հալթանակն իր արյամբ հատուցելով, նրանից հետո պրոլետարիատը հանդես էր դառնում իր սեփական պահանջներով: Այդ պահանջներն առավել կամ նվազ չարտոնանորոշ էլին և նույնիսկ խառնաշփոթ և ամեն անգամ կախված էլին Փարիզի բանվորների զարգացման աստիճանից, բայց նրանք բոլորը, վերջվերջում, հանդուս էլին էլին բանվորների և կապիտալիստների միջև դասակարգային հակադրութունը վրձնչացնելուն: Թե այդ ինչպես պիտի տեղի ունենար, նրանք այդ չդիտեցին: Բայց հենց ինքնին այդ պահանջը, իր ամբողջ անորոշութեամբ, վտանգ էր ներկայացնում դոյութուն ունեցող հասարակակարգի համար: պահանջ առաջադրող բանվորները զինված էլին լինում. ուստի և սկստական ղեկի մոտ դանվող բուրժուաների համար առաջին պատվերանք բանվորներին զինաթափ անելն էր»: (Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», Ծ. Ենդելսի ներածականով, էջ 4—5: Կուսհրատ, Մոսկվա, 1934 թ.):

15 Գնահատելով Փարիզյան Կոմունայի փորձը, Մարքսը գրում էր. «Փարիզը կարող էր դերմադրել միայն այն պատճառով, վոր պաշարումը նրան ազատեց բանակից, վորի տեղը դրավեց մեծ մասամբ բանվորներով համալրվող ազդային զվարդին: Այս փաստը պետք էր վերածել ամուր հիմնարկի, ուստի և Կոմունայի առաջին ղեկերտը կանոնավոր զորքը վրձնչացնելու և այն զինված ժողովրդով փոխարինելու վերաբերյալ ղեկերտն էր»: (Կ. Մարքս, «Քաղաքացիական պատերազմը Ֆրանսիայում», Ծ. Ենդելսի ներածականով, էջ 53: Կուսհրատ, Մոսկվա, 1934 թ.):

16 Վ. Ի. նկատի ունի Կաուցկու բրոշյուրներից հետևյալ տեղերը: 1) «Անհրաժեշտ է, վոր մենք հաշվի առնենք այնքի կամ պակաս մոտ ապաղապում ծագելիք պատերազմի հնարավորութունը, հետևապես և այնպիսի քաղաքական ցնցումների հնարավորութունը, վորոնք կամ ուղղակի կվերջանան պրոլետարական ապստամբութուններով, կամ, առնվազն, այդպիսիներե համար ճանապարհ կմաքեն»: 2) «Պրոլետարիատն իր բոլոր ուժերով ատում է պատերազմը, նա բոլոր ջանքերը դրոժ կղնի, վորպեսզի պատերազմական տրամադրութեանը թույլ չտա գլուխ բարձրացնելու: Սակայն, յեթե, չնայած դրան, պատերազմը բռնկի, ապա պրոլետարիատը ներկայումս հանդիսանում է այն դասակարգը, վորն ամենամեծ հույսերով կարող է սպասել նրա յեղքին»: («Ինպիսի իշխանութուն տանող ուղին», էջ 92—93. Դոժ, 1923 թ.):

17 Վ. Ի. նկատի ունի Կաուցկու «Ռուսական հեղափոխութեան շարժիչ ուժերն ու հեռանկարները» հոդվածը: Այնտեղ Կաուցկին գրել է. «Ռուսոթուազիան չի պատկանում Ռուսաստանի ժամանակակից հեղափոխական շարժման շարժիչ ուժերի թվին... Ուրեմն ռուսական պրոլետարիատն իր հեղափոխական հրվում վո՞ր դասակարգի վրա կարող է հենվել... Հեղափոխական կոլի ամբողջ շրջանում շահերի ամուր ընդհանրութուն դոյութուն ունի միայն պրոյետարիատի ու դոյուդացիութեան միջև: Յեւ հենց այդ ընդհանրութունը պիտի զբված լինի սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ հեղափոխական ստակիլական հիմքում»: (Կ. Կաուցկի, «Ռուսական հեղափոխութեան շարժիչ ուժերը և հեռանկարները», Վ. Ի. Լենինի խմբագրութեամբ և առաջարանով, էջ 27—28: Դոժ, Մ.—Լ., 1926):

18 Վ. Ի. նկատի ունի Մարքսի «Գրուսական հեղափոխութեան բալանսը» առաջնորդող հոդվածը «Հռենոսյան Նոր Թերթ»-ում («Neue Rheinische Zeitung») 1848 թ. դեկտեմբերի 11-ին: Մարքսը գրում էր. «Գրուսական մարտյան հեղափոխութեանը չպետք է շինվի վր' ի 1848 թվի անգլիական հեղափոխութեան, վր' ի էլ 1789 թվի Փրանսականի հետ: Այս յերկու հեղափոխութեաններում էլ բուրժուազիան իրոք չարժան էր զուրիս կանգնած դասակարգ էր: Գրուստարիանն ու բուրժուազիային չպատկանող բազալացիների ֆրակցիաները կամ դեռևս չունեին բուրժուազիայի շահերին զուգարկից շահեր, կամ թե դեռևս այնքան չէին զարդացել, վոր ինքնուրույն դասակարգերի կամ յենթադասակարգերի աստիճանին հասնեն... Գերմանական բուրժուազիան այնպես ծուլ, թուլ ու դանդաղ էր զարգանում, վոր այն սահին, յերբ նա անհղաբար դուրս յեկավ Ֆեոդալիզմի ու արսողատիզմի դեմ, նա ինքը բաղվեց իր դեմ անհզորին ծառայած պրոլետարիատին ու բազալացիների այն բոլոր ֆրակցիաներին, վորոնց շահերն ու զաղափարները հարազատ էին պրոլետարիատին... Գրուսական բուրժուազիան այնպիսի դասակարգ չէր, ինչպես 1789 թվին Փրանսականն էր, վորը հին հասարակութեան ներկայացուցիչներին, արքայական իշխանութեանն ու ազնվականութեանը հակադրվող՝ ժամանակակից ամբողջ հասարակութեան ներկայացուցիչն էր հանդիսանում»: (Վ. Մարքսն ու Գ. Ենգելսը դերմանական հեղափոխութեան զարգացումը (1848—1850): Ավնարիներ ու հոդվածներ՝ ժողոված Մերինդի կողմից, էջ 221—222: Մ.: ԳԻՅ, 1926 թ.):

19 Վ. Ի. նկատի ունի Մարքսի կողմից 1871 թ. ապրիլի 12-ին Կուդելմանին դրած նամակի հետևյալ տեղը. «Յեթե դու նայելու լինես «Ֆրյուսերի 18-ի» վերջին դրու՛րը, ապա կտեսնես, վոր, իմ կարծիքով, Ֆրանսական հեղափոխութեան մտտակա վերելքը վր' ի թե բյուրոկրատիկ-դինալորական մեղենան մեկ ձևերից մյուսին հանձնելու փորձ կլինի, ինչպես այդ յեղել է մինչև այժմ, այլ այդ մեղենան ջախջախելու փորձ: Մայր ցամաքում ամեն մի հումական ժողովրդական հեղափոխութեան նախապայմանը հենց այդ է: Հենց կակն է մեր հերոսական փարիզյան ընկերների փորձը»: (Մարքսի նամակները Կուդելմանին: Թարգմանություն Մ. Ի. Ուլյանովայի: Առաջարկ է. Լենինի, էջ 98: ԳԻՅ, Մոսկվա, 1928):

20 Վ. Ի. նկատի ունի գյուղատնտեսական ողտադրման հոդերը հոլանդի կոմիտեների իրավասութեանը հանձնելուն վերաբերող եսերական որինադիժը, վորը Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի ուր առաջ հոլադոր-ժուբյան մինիստր Ս. Լ. Մասլովի կողմից ներկայացվել էր ժամանակավոր կառավարութեան քննութեանը: Այդ որինադիժը յերբեք էլ որինք չլործաձգ: Մասլովի որինադիժը լինին ավելի մանրամասնորեն ընտրվողներն է «Գյուղացիների նոր խարեյութեանը եսերների կուսակցության կողմից» հոդվածում: (ՏԵ՛Ա Յերկերի XXI հատ., էջ 357—361):

21 Վ. Ի. ըստ յերևութի, նկատի ունի «Հավելյալ արժեքի թեորիաների» հատ. II, մ. I, «Հողային ունեան ու Ռոդերբաուսը» դրու՛րը, վորտեղ Մարքսը գրում էր. «Արտադրութեան կապիտալիստական յեղանակ յենթադր-էիս կապիտալիստը հանդիսանում է արտադրութեան վր' ի միայն անհրաժեշտ, էիս տիրապետող գործակալը: Ընդհակառակը, հողատերն արտադրութեան այդ այլև տիրապետող գործակալը: Ընդհակառակը, հողատերն արտադրութեան կապիտալիստական յեղանակի պայմաններում բոլորովին ավելորդ է: Արտադրութեան կապիտալիստական յեղանակի համար հարկավոր է միայն, վոր հողն ընդհանուր սե-  
լիստական յեղանակի համար հարկավոր է միայն, վոր հողն ընդհանուր սե-

սեփականութիւնն չլինի, վորպէսզի այն հակադրվի բանվոր դասակարգին, վորպէս նրան չպատկանող արտադրամիջոց, իսկ այս նպատակին կարելի յե լինովին հասնել, յեթե հողը պետական սեփականութիւնն և դառնում և պետութիւնը, հետևապէս, հողային ունեւոր յե ստանում: Հին և միջնադարյան աշխարհում արտադրութեան այնքան կարևոր դործակալ հանդիսացող հողատերն արդիւնաբերական աշխարհում իրենից անողոտ պալար և ներկայացնում: Այս պատճառով եւ ռազիկալ բուրժուան՝ մյուս բոլոր հարկերի վոջնչացմանը կողեկող մոտենալով, թեորիապէս հանդում և հողային մասնավոր սեփականութեան ժխտմանը, վորպիսի սեփականութիւնը նա կուղենար պետականութեան ձևով դարձնել բուրժուադեյի դասակարգի, կասիտալի սեփականութիւն: Գործնականում, սակայն, նրա համարձակութիւնը պակասում և, վորովհետև սեփականութեան մեկ ձևի, այն և՛ աշխատանքի պայմանների մասնավոր սեփականութեան ձևի վրա հարձակվելը շատ վտանգավոր կլիներ նաև մյուս ձևի համար: Բացի դրանից, բուրժուան ինքն եւ հող եր ձեռք բերել»: (Կ. Մարքս, Հավելյալ արժեքի թեորիաները, հատ II, մ. I, էջ 142: Կուսհրատ, 1932):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԾՃ
Պաշարան . . . . .	5
Քե ինչպես կառուցելին սովորական լիրերալ դարձրեց Մարքսին . . .	9
Բուրժուական և սլոլետարական դեմոկրատիա . . . . .	21
Կարո՞ղ և արդյոք հավասարություն լինել շահագործողի և շահագործվողի միջև . . . . .	30
Խորհուրդները չհամարձակվեն դառնալ պետական կազմակերպություններ . . . . .	38
Սահմանադիր ժողովը և խորհրդային հանրապետությունը . . . . .	46
Խորհրդային սահմանադրությունը . . . . .	55
Ի՞նչ և ինտերնացիոնալիզմը . . . . .	66
Սպասափորություն բուրժուազիային «անտեսական վերլուծության» անվան տակ . . . . .	81
Ծանոթագրություններ . . . . .	111



**Քարդմ. Աբղ. Խոնդկաթյան**  
**Խմբ. Տ. Ալեքսանյան**  
**Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան**  
**Մրբադրելի վ. Ջիդեջյան**  
**Կոնսրուկտոր Յե. Տ.—Մինասյան**  
**Դևալլիտի վազոր Ի—4891, հրատ. № 459**  
**Պատվեր № 111, տիրաժ 10,000**  
**Հանձնված է արտադրության 15/VII 1937 թ.**  
**Ստորագրված է տպելու 11/XI 1937 թ.**  
**Դիմը 1 ռ. 20 կ., կազմը՝ 80 կ.**  
**Հայկուսհրատի տպարան, Յերևան**  
**Պլավերդյան № 71**









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038655

Фильм 2 П.

(504)

508

Л 17  
38655

**В. И. ДЕНИН**  
**ПРОЛЕТАРСКАЯ РЕВОЛЮЦИЯ**  
**И РЕНЕГАТ КАУТСКИЙ**

Армпартиздат, Ереван, 1987